

**ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ**

**Հ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ա Լ Ա Մ Դ Ա Ր Յ Ա Ն**

(Ուսումնամեթոդական ուղեցույց)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2005

**Տպագրվում է Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնի և բանասիրական ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումներով**

**Ն Ա Խ Ա Շ Ա Վ Ի Ղ**

Խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս. Մուրադյան**  
Գրախոս՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Զ. Ավետիսյան**

Ա ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ  
Հարություն Ալամդարյան (ուսումնասեթողական ուղեցույց)՝ Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, 192 էջ:  
Դասախոսությունը նվիրված է հայ նոր գրականության մայրուղին նախապատրաստող գրողներից մեկի՝ Հարություն Ալամդարյանի (1793-1834) կյանքի ու գործի քննությանը:  
Նկատի ունենալով, որ Հ. Ալամդարյանի «Չափաբերական» ժողովածուն լույս է տեսել 1884 թ. Պետերբուրգում և ցարդ միակ հրատարակությունն է, ուսանողության և ուսումնասիրողների գործը դյուրացնելու նպատակով հարմար է նկատվել այն իբրև հավելված նույնությամբ վերահրատարակել սույն ուղեցույցում՝ կցելով համապատասխան բառարան:  
Նախատեսված է բանասիրության ֆակուլտետի ուսանողների, բանասերների և ընդհանրապես հայ նոր գրականությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

Ա 4603010000 ԳՄԴ  
704(02)05

*Քաղաքական ծանր ու տևական անկումներից հետո 18-րդ դարում Հայաստանում վերստին սկսում են բողբոջել ազատագրության հույսի ծիլերը: Թեև 20-ական թվականների սկզբին անկախության համար սկսված բուռն պայքարն ստանում է դրամատիկ վերջաբան (տապալվում է Դավիթ-Բեկի ստեղծած պետականությունը Սյունիքում), այնուամենայնիվ պարսկական և թուրքական լծից ազատագրվելու ոգորումները տենդագին շարունակվում են հայկական գաղթօջախներում՝ Հնդկաստան, Ռուսաստան, Հոլանդիա, Լեհաստան, նաև Հայաստանի տարբեր մասերում... Աստիճանաբար սկսում է արթնանալ կյանքը, ձևավորվում են սոցիալական-քաղաքական ուժերը, ծայր են առնում նոր գաղափարներ: Հայաստանի քաղաքական ազատագրության ու գալիքի մասին մշակվում են զանազան ծրագրեր: 17-18-րդ դարերի Հայ ազատագրական շարժման եռանդուն գործիչներից մեկը՝ Իսրայել Օրին (1659-1711), աջակցության հույսերով արդեն վաղուց ծեծել էր օտար տերությունների դռները, դիմել եվրոպական արքունիքներին (Հովհան Վիլհելմ, Լեոպոլդ I, Կոզմաս III...), բայց երկարամյա բանակցություններից հետո եկել էր այն համոզման, որ Հայաստանն իր ազատագրական պայքարում իրական օգնություն կարող է ստանալ միայն Ռուսաստանից: Այսօր շատ սրտառու է Հնչում դարերի խորքում հյուսված Հայոց ազատագրության հույսերի լեզենդը՝ մեջբերվող Իսրայել Օրին՝ Պետրոս Մեծին հասցեագրված լատիներեն գեկուցագրից. «Ինչպես որ Ադամի որդիները հույսով սպասում են Մեսիայի գալստյանը, որը փրկելու է նրանց հավիտենական կորստից, այնպես էլ այս թշվառ ժողովուրդը մշտապես*

ապրել ու այժմ էլ ապրում է Ձերդ թագավորական մեծության օգնության և աջակցության հույսով:

Կանխագուշակել են մարգարեները, թե ժամանակներ անց անօրենները չափից ավելի պիտի մոլեզնեն՝ հարկադրելով քրիստոնյաներին ընդունելու իրենց նողկալի կրոնը, և այդ ժամանակ Մոսկովյան օգոստափառ տանից պիտի դա ոմն մեծ իշխան, շատ ավելի քաջարի, քան Ալեքսանդր Մեծը, որն իր ձեռքը պիտի առնի Հայոց թագավորությունը և ազատի քրիստոնյաներին:

Այս մարգարեությունը նույնիսկ մինչև այժմ հավատացել ու հիմա էլ հավատում են»<sup>1</sup> (1701 թ., հուլիսի 11-14):

Նոր շրջանում լուսավոր հայացք ունեին հատկապես հնդկահայ գաղութի լուսավորիչները՝ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր և Հակոբ Շահամիրյանները: Նրանցից առաջինն իր ամբողջ կյանքը նվիրաբերեց Հայաստանի ազատագրությանը՝ համոզված լինելով, որ դրա համար պետք է նվիրվել լուսավորությանը, գիտությանը՝ օգտագործելով եվրոպական երկրների առաջավոր փորձը:

Մ. Բաղրամյանը «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գրքում (Մազրաս, 1772) անդադար հորդորում էր հայրենակիցներին, իր խոսքերով ասած՝ «առույզ մանուկներին և երիտասարդներին», որ արի լինեն. օրվա հրամայական պահանջն էր համարում, որ երկար «ժամանակներ երեսնիվայր ու անտերունչ մնացած ազգը» արթնանա իր «թմրության քնից», այլապես հետո ուշ կլինի.

Ուստի և մեք եկե՛ք, եկե՛ք ոտքի ելնեք  
ու այլևս քնով տարված՝ չմրափեք,  
Արթնանալով թմրությունից ծուլության՝ մեզ արիաբար  
սթափեցնեք, զգաստանանք  
Եվ, աչալուրջ ուշք դնելով, մեք խելամիտ  
ճայեք ժամ ու ժամանակիս,

1. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ» (աշխատասիրությանը Պ. Հակոբյանի), Երևան, 1978, էջ 3:

Որ չլիճի, թե հարմար պահն ու առիթը չգիտակցե՞նք  
և կորցնե՞նք, երբ որ Արագը մեր ձեռքն ընկնե՞նք:

Լուսավոր մտածողը հայրենի երկրի պատմական անցյալի ճանաչելու անհրաժեշտությունից հետո մատնանշում էր եվրոպական քաղաքակրթության, լուսավորության տարածումը և գալիքում սահմանադրական կառավարման ձևով պետության ընտրությունը:

Մեկ տարի հետո՝ 1773-ին, Մազրասում լույս տեսավ Ծ. Շահամիրյանի «Գիրք անուանեալ Որոգայթ փառաց» երկը՝ աշխարհում առաջին Սահմանադրությունը, որը ժողովրդավարության դիրքերից ազդարարում էր անձի ազատություններն ու իրավունքները և օրենքների գերակայությունը: Նրանում հեղինակը խոր հակալրանքով էր խոսում ճորտատիրության ու միապետության մասին և ներկայացնում ապագա Հայաստանի պետական կառուցվածքի ու օրենսդրության նախագծերը՝ առաջ մղելով ժողովրդավարության սկզբունքը: «Թող ոչ մի մարդ անզգամորեն չձգտի ու չկամենա աստվածանալ, – գրում է Շահամիրյանը, – այսինքն՝ թագավորել մեր բանական բնության վրա: ...Թույլ մի՛ տվեք, որ ինքնիշխան որևէ մեկը բարբարոսաբար թագավոր դառնա Հայ ժողովրդի, մեր Հայաստան աշխարհի վրա, բացի մեր Տեր Արարչից»<sup>3</sup>:

Այսպիսով, ծայր են առնում ազատագրական պայքարի գաղափարախոսությունը և լուսավորական շարժումը, որոնց կարևոր ու խոր իմաստ է տալիս Հայաստանի արևելյան հատվածի միացումը Ռուսաստանին (1828), հանգամանք, որն արնաքամ եղող ժողովրդի մի մասին փրկում էր Ֆիզիկական բնաջնջման վտանգից և նրա առջև բացում հույսի նոր հորիզոններ՝ նախադրյալներ ստեղծելով նաև գրական-մշակութային կյանքի զարգացման համար: «Աչքըներդ հազար լույս, – 1828-ի նոյեմբերի 1-ին հեռավոր Կալվաթա-

2. Մ. Բաղրամյան, Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ (թարգմանեց և ծանոթագրեց Պ. Խաչատրյանը), Երևան, 1991, էջ 41:

3. Ծ. Շահամիրյան, Որոգայթ փառաց (թարգմանեց և ծանոթագրեց Պ. Խաչատրյանը), Երևան, 2002, էջ 25, 27:

յից երևանցիներին ուղղված իր նշանավոր նամակում գրում է Մեսրոպ Թաղիադյանը, – որ մեր քաղցր Աշխարհքն Պարսից դառն չարչարանքիցն ազատվեց, քրիստոնի տերության ներքո ընկավ: Փա՛ռք բարերարին աստուծո, որ այսուհետև ավել նեղություն չեք ունենալեց, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անվանիք, ձեր ազգասիրության, իմաստասիրության լուրն և արվեստից հառաջադիմությունն բոլոր աշխարհ պիտի տարածվին»<sup>4</sup>:

Ազատագրական պայքարի և լուսավորական շարժման հենքի վրա էլ, 18-րդ դարի վերջին քառորդից սկսած, աստիճանաբար ձևավորվում է հայոց հոգևոր կյանքը, նկատվում զգալի առաջընթաց մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Ամենից առաջ բուռն զարգացում է ապրում տպագրությունը. Վենետիկի, Կ. Պոլսի, Նոր Զուղայի, Ամստերդամի արդեն գործող տպարանների կողքին բացվում են նորերը էջմիածնում (1771) ու Մադրասում (1772), Տրիեստում (1775) ու Պետերբուրգում (1780), Նոր Նախիջևանում (1789) ու Աստրախանում (1796), Վիեննայում (1811), Մոսկվայում (1820), Թիֆլիսում (1823)... Ինչպես նկատում է Լեոն, 17-րդ դարի համեմատությամբ 18-րդ դարում տպագրված գրքերի քանակն արդեն քառապատվում է (128-ի փոխարեն լույս է տեսնում 523 գիրք)<sup>5</sup>:

18-րդ դարավերջին և 19-րդի սկզբին բարձրացող ազգի հոգևոր պահանջների և հայկական դադափարաբանության ստեղծման ճանապարհին անգնահատելի էր հատկապես Մխիթարյանների կատարած գրական-պատմական դերը: «Ամենից առաջ նրանք՝ այդ բանասեր, լեզվագետ, աշխարհագետ, պատմաբան գիտնականները, օժտված նաև գրական ձիրքով, հարկ համարեցին իրենց գործն սկսել անցյալի վերակենդանացումից: Նրանք դարերի փոշիների միջից հանեցին, խմբագրեցին, ծանոթագրեցին և ընթերցողի առջև դրեցին հայ ողջ պարությունը, պատմագրությունը, մասամբ էլ պոեզիան: Դա վիթխարի լիցք տվեց ժամանակակիցներին, ստա-

ցավ ժամանակակից շեշտ, ջերմացրեց հայ մարդկանց, բորբոքեց անդեկ ու անգլուխ սերնդին»<sup>6</sup>, – այսպես պատկերավոր է գնահատում Մխիթարյանների դերը ակադ. Հր. Թամրազյանը: Իսկ իտալացի գիտնականներ Ալերամո Հերմեսոն ու Պաոլա Կոնի Ռատտի դի Դեգիոն երկրորդում են. «Բազմաթիվ էին թե՛ հայերը և թե՛ վենետիկցիները, որոնք օգնեցին Մխիթարին ձևափոխելու փոքրիկ կղզին աշխարհում հավասարը չունեցող մի մենաստանի, որն ի պատիվ Վենետիկի՝ պետք է դառնար տարագիր ազգի հիշողությունների և հուշերի սուրբ նստավայրը: Սակայն այն ոչ թե հուշերի թանգարան էր գիտնականների և պատմաբանների համար կամ պայծառ ապագայի սպասող անգործության մատնված մի վայր, այլ գիտության կենդանի և կենսուրախ մի կենտրոն, որն ի վիճակի է ապրեցնել լեզուն, գրականությունը, ավանդույթներն ու սովորույթները՝ որպես ցրված ազգի միացման բաղադրիչներ»<sup>7</sup>:

Մխիթարյան հայրերն աշխատում էին անդուլ եռանդով, գրեթե ինքնամոռացմամբ. նրանք բնագրագիտական ճշգրտումներով, առաջաբաններով և շահեկան ծանոթագրություններով հրատարակեցին Գրիգոր Նարեկացու «Մատենագրութիւնքը» (1827), Բարսեղ Կեսարացու «Ճառքը...» (1830), Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոցը» (1832), Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւնը» (1832), Դավիթ Անհաղթի «Մատենագրութիւնքը» (1833), Եղիշեի «Մատենագրութիւնքը» (1838), Մովսես Խորենացու «Մատենագրութիւնքը» (1843) և ուրիշ շատ մտածողների երկերը: Մխիթարյանները հանդես եկան նաև հայագիտական, պատմաբանասիրական, աշխարհագրական և բառարանագրական ինքնուրույն աշխատություններով: Դրանցից հատկապես բարձրարժեք են Միքայել Չամչյանի եռահատոր «Պատմութիւն Հայոցը» (1784-86), Ստեփանոս Ազոնցի և Ղուկաս Ինճիճյանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» տասնմեկհատորանոց ուսումնասիրությունը (1802-08), հետագայում Ղևոնդ Ալիշանի «Քաղա-

4. «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», էջ 56:

5. Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 937:

6. Հր. Թամրազյան, Հայ քննադատություն, Գիրք Գ, Երևան, 1992, էջ 15:

7. Ալերամո Հերմեսո, Պաոլա Կոնի Ռատտի դի Դեգիո, Հայերի Վենետիկը. Տասնվեց դար պատմության և առասպելի միջով, Երևան, 2000, էջ 235:

քական աշխարհագրութիւնը» (1853), «Միսուանը» (1885), «Այրա-  
բատը» (1890), «Միսականը» (1893)... Մխիթարյանների կարևոր  
աշխատանքը, սակայն, Հայ բառարանագրութեան դեռևս չգերա-  
զանցված երկհատորյակն է՝ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»  
(1836-37) խորագրով՝ հեղինակութեամբ Գաբրիել Ավետիքյանի,  
Խաչատուր Սյուրմեյանի և Մկրտիչ Ավգերյանի:

Հյուրընկալ Վենետիկում ու Վիեննայում առանձնացած սրբա-  
զան Հայերը Հայ սերունդների համար մի հոգևոր երակ էին բա-  
ցում նաև դեպի Եվրոպա՝ վարպետորեն թարգմանելով հին ու նոր  
աշխարհի երևելիների գեղարվեստական և գիտական երկերը: Ու-  
շարժան էին հատկապես Հոմերոսի «Իլիականի» ու «Ոդիսականի»,  
Վիրգիլիոսի «Էնեականի» ու «Մշակականքի», Եգովպոսի առակ-  
ների, Պուտարքոսի «Ջուզակչիոների», Ֆենելոնի «Տելեմաքի ար-  
կածները» և շատ ուրիշների երկերի թարգմանությունները:

18-րդ դարի վերջերից արգասավոր ու իմաստալից ուղի է սկը-  
սում Հայ պարբերական մամուլը՝ իր երախայրիքով՝ «Ազգարա-  
րով» (Մադրաս, 1794-96), որին հաջորդում են «Դիտակ Բյուզան-  
դյանը» (Կ. Պոլիս, 1812-1816) և արևելահայ ուսուցիչ-հայերեն  
երկլեզվյան առաջին շաբաթաթերթը՝ «Արևելյան ծանուցմունքը»  
(Աստրախան, 1816): Պարբերականներ են սկսում հրատարակել  
նաև Վենետիկի Մխիթարյանները («Տարեգրություն», «Եղանակ  
Բյուզանդյան») և հնդկահայ գաղութի լուսավորիչները (Կալկա-  
թայի «Շտեմարանը»): Իսկ 1843-ից Վենետիկում իր արգասա-  
վոր ճանապարհն է սկսում ամենաերկարակյաց Հայ պարբերակա-  
նը՝ «Բազմավեպը»:

19-րդ դարի առաջին քառորդում բացառիկ էր հատկապես Հայ  
դպրոցի դերը. լուսավորության նշանավոր կենտրոններ են դառ-  
նում Աստրախանի Աղաբաբյան դպրոցը (1809), Մոսկվայի Լազա-  
րյան ճեմարանը (1814), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1824)<sup>8</sup>,  
Կալկաթայի Մարգարիտյան (1821) ու Կ.Պոլսի Սկյուտարի ճեմա-

8. Դպրոցական այս երեք հաստատությունների հիմնադրման տարեթվե-  
րը չպետք է շփոթել պաշտոնական բացման արարողությունների հետ: Այդ  
մասին մանրամասն տե՛ս Հ. Զաքարյան, Աստրախանի Աղաբաբյան հայոց

րանները (1838), Երևանի Թեմականը (1837) և կրթական բազում  
ուրիշ հաստատություններ, որոնցից դուրս են գալիս կրթված  
մարդիկ, հաճախ՝ երևելի մտածողներ ու տաղանդաշատ գրողներ:

18-րդ դարի վերջին քառորդից սկսվում է նաև Հայ թատրոնի  
պատմության նոր շրջափուլը: Դեռևս 1770-ական թվականներից  
Վենետիկի Մխիթարյանների վարժարանում տեղի էին ունենում  
Մխիթարյան Հայերի՝ հիմնականում կրոնաբարոյախոսական և  
պատմահայրենասիրական ուղղվածությամբ թատերախաղերի բե-  
մադրություններ: 1805 թ. Եղիա Թովմաճյանը գրում է «Հայկ Դիւ-  
ցազն» Հայրենասիրական դրաման, որին հաջորդում են Արսեն Կո-  
միտաս Բագրատունու «Երվանդ Բ» (1815) և «Գնելի ողբերգական  
մահը» (1819) ողբերգությունները, Պետրոս Մինայանի «Մեծն  
Միհրդատ» (1829) թատերգությունը: Ուշագրավ է, որ պատմա-  
կան թատերախաղերից բացի՝ ստեղծվում են նաև կենցաղային ու  
կատակերգական ստեղծագործություններ (օրինակ՝ Գ. Շերմազա-  
նյանի «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպո-  
սի...» աշխարհաբար երգիծական կատակերգությունը կամ 1821 թ.  
Կալկաթայում հրատարակված՝ Մ. Մկրտչյան, Շիրազեցու «Խորա-  
դիմայ գործողութեան» թատերախաղը): Ուշարժան է նաև Ա. Գրի-  
բոյեզովի «Նեկքից պատուհասի» ուսուցիչական բեմադրությունը Ներ-  
սիսյան դպրոցում՝ աշակերտների մասնակցությամբ:

Այս ամենին գումարվելու է գալիս նաև արվեստի մյուս ճյուղե-  
րի՝ գեղանկարչության ու երաժշտության ծաղկումը, որն իր լավա-  
գույն արտահայտությունը գտավ Թիֆլիսի Հովնաթանյանների  
նկարչական արվեստում և Պապա Համբարձում Լիմոնճյանի՝ հայ-  
կական ձայնագրության նոր համակարգում:

ուսումնարանը (1809-1918), Երևան, 1999, “Материалы для истории Лазаре-  
вского института восточных языков”, Москва, 1914, Վ. Դիլիյան, Լազա-  
րյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից  
(18-րդ դարի երկրորդ կես), Երևան, 1966, Ա. Իգնատյան, Լազարյան ճեմա-  
րան, Երևան, 1969, Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիս-  
յան հայոց հոգևոր դպրոցի որ ի Թիֆլիս (1824-1899), Բ. Ա. (1824-1850), Թիֆ-  
լիս, 1898:

\* \* \*

19-րդ դարի առաջին երեսնամյակին առանձնահատուկ էր գեղարվեստական գրականությունը: Հայտնի է, որ գրական այս կամ այն մեթոդը, ծնունդ առնելով պատմաքաղաքական ու հանրային կյանքի որոշակի պահանջների թելադրանքից, ներառելով դարաշրջանի պատմական բովանդակությունն ու գեղարվեստական ճաշակները, ջանում է նվաճել նոր տիրույթներ, կենսական տարածություն, փորձում հաստատել իր ինքնությունը:

Թեև 19-րդ դարի առաջին կեսի մի քանի տասնամյակը հայ գրականության մեջ կլասիցիզմի տիրապետության տարիներն էին, սակայն այն միահեծան չէր և չէր էլ կարող լինել. գրականության պատմության փորձը բացառում է այս կամ այն ուղղության «բացարձակ իշխանությունը»: Տեղի էր ունենում հետաքրքրական երևույթ. մի կողմից բուռն զարգացում էր ապրում կլասիցիզմը՝ իր հայկական ինքնությամբ (ազգային անցյալի խոր ընկալում, հայկական գաղափարաբանության հատուկ շեշտադրում, եվրոպական կլասիցիզմին բնորոշ առանձին կաղապարների անտեսում...), մյուս կողմից նոր ժամանակների հրամայականով գրականություն էին թափանցում իրական կյանքի ու հոգեբանության, աշխարհիկ տրամադրությունների անհրաժեշտ արձարձումները: Ուրիշ խոսքով՝ կարծես խառնվել էին դարերն ու ժամանակները, և կրոնահայրենասիրական ու բարոյախրատական մոտիվներին ընդելուզվում էին քնարական ու մարդկային կենդանի տրամադրությունները: Թեև դանդաղ, բայց հաստատուն ռիթմերով հայոց բանաստեղծություն էին թափանցում սենտիմենտալ ու ռոմանտիկական ոճերը: Եվ դեռ սկզբնավորման արշալույսին հայկական կլասիցիզմը կարծես պիտի ապրեր իր վաղաժամ ծերությունը և տառապեր դատապարտվածության ջղաճգումներով. անտիկ՝ հունահռոմեական գրողներին ու եվրոպական կլասիցիստ հեղինակներին զուգահեռ՝ թարգմանաբար արդեն հայ ընթերցողին էին ներկայացվում Շեքսպիրն ու Բայրոնը, Կարամզինն ու ժուկովսկին, Բեռնարդեն դը Սեն Պիեռը և նոր գրականության այլևայլ կարկառուն ներկա-

յացուցիչներ: Եվ բնավ պատահական չէր, որ երբ 1858 թ. լույս տեսավ հայկական կլասիցիզմի բարձրագույն արտահայտությունը՝ Արսեն Բագրատունու «Հայկ Դիւցազն» պոեմը, նույն թվականին հրատարակվեց նաև Խաչատուր Աբովյանի՝ սենտիմենտալիզմի, ռոմանտիզմի ու ռեալիզմի ինքնօրինակ ներհյուսումներով կերտված «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպը:

Այդ շրջանում բազմաթիվ էին գրաբարաբեզու բանաստեղծները՝ Աբրահամ Աստաբաղի վարդապետը, կեսարացի Գրիգոր Գապասխալյանը, Վենետիկի Մխիթարյաններից՝ Ղուկաս Ինճիճյանը, Գաբրիել Ավետիքյանը, Մանուկ Զախճախյանը, Եղիա Թովմաճյանը, Արսեն Բագրատունին... Մանուկ Աբեղյանը «Ուրվագծեր XIX դարու հայոց գրականության պատմությունից (Առաջին երեսնամյակ)» ուսումնասիրության մեջ, գնահատելով հանդերձ այդ գրագետների վաստակը մեր մշակույթի պատմության մեջ, այնուամենայնիվ, նկատում է, որ նրանց պոեզիան անարյուն է, «զուրկ կենդանի երակից», և ավելացնում. «Մխիթարյանների այս մեծ սերնդի մեջ մի տարօրինակ գրական սովորություն է եղել. նրանք գվարճացել են ոտքերով ու հանգերով և ոտանավոր գրելով՝ իրար հետ հանաքներ են արել: Զբաղված լինելով ուրիշ գրական ծանր աշխատանքներով՝ բառարան գրելով, թարգմանություններ անելով և այլն, մեկ մեկ էլ պետք են զգացել հանգստանալու և իրենց հանգստությունը գտել են քերթողության մեջ: Բայց քերթողության ի՞նչ տեսակի: Ինչպես հին աշուղները իրար հետ բաս մտներխ՝ միմյանց առեղծվածներ էին առաջարկում հանգեր ու ոտքեր տալով, և մրցակիցը պետք է յուր ոտիսի պատասխանը տար առաջարկված հանգերով ու ոտքերով, ճիշտ նույն ձևով իրար հետ մրցում են և Մխիթարյան ընկեր քերթողները: Իրենց բառով ասեմ, նրանք հորինում են «բռնահանգ» և «բռնակարգ» ոտանավորներ»<sup>9</sup>:

Գրեթե նույնն էր վիճակը նաև, այսպես կոչված, «գալոցական պոեզիայում»: Ներսիսյան դպրոցի «Երախայրիք Ներսիսեան դըպ-

9. Մ. Աբեղյան, Երկեր, Բ. Դ, Երևան, 1970, էջ 557:

րոցի» (1828) և Լազարյան ճեմարանի «Մուզայք Արարատեան» (1829) ժողովածուները հեղեղված էին կրոնաբարոյախոսական և պատմահայրենասիրական անարյուն բանաստեղծություններով ու ճարտասանական մարզանքների արդյունք՝ հոգևոր կամ աշխարհիկ գործիչներին ձոնված վերամբարձ ներբողյաններով:

Բայց, այնուամենայնիվ, դրանց կողքին, ինչպես նկատել է Արամ Ինճիկյանը, արդեն զգալի էր նաև լուսավորական, ազգային-ազատագրական բովանակությամբ պոեզիայի ծլարձակումը, որի «երախայրիքը պետք է համարել Մովսես Բաղրամյանի հայրենասիրական չափածո ողբը, որով սկսվում է նրա նշանավոր «Տետրակ, որ կոչի հորդորակը»: Դա միայն ողբ չէ, այլև ազգային գարթոնքի և հայրենիքի ազատության համար պայքարի կոչ: Դրանով Բաղրամյանը, ըստ էության, դառնում է սկզբնավորողը ո՛չ միայն հայ քաղաքական գրականության, հրապարակախոսության, այլև քաղաքական պոեզիայի»<sup>10</sup>: Մ. Բաղրամյանի սկսած գործն ունեցավ շնորհալի շարունակողներ. Զմյուռնիայում (Իզմիր) մի քանի տասնամյակ հետո Հովհան Միրզա Վանանդեցին հայ ընթերցողին ներկայացրեց պատմական Հայաստանի հերոսական դրվագները՝ գեղարվեստական ազդեցիկ պատկերներով ու իրական հերոսներով («Արփիական Հայաստանի», «Ոսկի դար Հայաստանի», «Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամի ու Արայի»), Կ.Պոլսից Թիֆլիս տեղափոխված Սերովբե Պատկանյանը Արևելյան Հայաստանի՝ պարսկական բռնակալությունից ազատագրվելու առիթով հյուսեց ցնծության արդիական երգեր («Ի յաղթանակ Յիցիանովի», «Յազատութիւն սրբոյ էջմիածնի», «Առ կայսրն ռուսաց Նիկողայոս Ա.»):

Ինչպես իրավացիորեն նկատել է Լևոն Մանվելյանը, «Հայկական միտքը երկնային բարձունքից իջնում է երկիր, վերացականը իր տեղը զիջում է իրականության, կոնկրետ փաստերին, և մարդկային հոգին ազատվում է կապանքից: Գրական նոր ուղղություն-

նը իր հարցասիրության գլխավոր առարկան դարձնում է մարդը, մարդու զգացումը, միտքը և կենցաղը»<sup>11</sup>:

Շուտով գրական հորիզոնի վրա բարձրանում են երկու տաղանդավոր բանաստեղծներ՝ Հարություն Ալամդարյանը և Մեսրոպ Թաղիադյանը, որոնք իսկապես նոր ուղիներ բացող առաջամարտիկներ էին: Նրանց ստեղծագործության մեջ ակնհայտորեն երևում են կյանքի ու արվեստի առնչակցության, ձևի ու բովանդակության ներդաշնակության ստեղծման ճանապարհի դժվարությունները և նախաբովանակյալ շրջանի գրական ծանր երկունքը: Եվ դա բնական էր. նոր կյանքի գարկերակն իր ուրույն խընդիներն էր դնում գրականության առջև, ստիպում գնալ անկողի ճամփաներով: Ալամդարյանն ու Թաղիադյանը նոր արահետներ էին փնտրում դեպի ճշմարիտ արվեստը և որոնում մայրուղին: Նրանք թեև չդարձան հայ նոր գրականության դասական ներկայացուցիչներ և չկարողացան նախապատրաստողի դերից բարձրանալ հիմնադրի աստիճանին, բայց և անժխտելի է այս երկու ստեղծագործողների կատարած խոշոր դերը հայ մշակույթի ու հանրային-քաղաքական կյանքի զարգացման ճանապարհին:

\* \* \*

Հարություն Ալամդարյանի մասին ստեղծվել է գրական-բանասիրական պատկառելի ժառանգություն. գրել են և՛ նրա ժամանակակիցները, և՛ նշանավոր գրողներ ու մտածողներ, և՛ սկսնակ գրիչներ: Նրա առաջին գնահատողներից են եղել Խաչատուր Աբովյանը և Պատկանյանների նշանավոր տոհմի շառավիղները՝ Գաբրիելը, Միքայելն ու Քերովբեն: Նրան այս կամ այն առիթով հիշել կամ առանձին ուսումնասիրություններ են նվիրել Աբրահամ Այվազյանն ու Ալեքսանդր Երիցյանը, Երվանդ Շահագիրյանն ու Մսեր Մսերյանը, Վրթանես Փափազյանն ու Մանուկ Աբեղյանը, Շուշա-

10. «Հայ Ար Գրականության պատմություն», հ. առաջին, Երևան, 1962, էջ 76:

11. Լ. Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, Ա., Ալեքսանդրապոլ, 1909, էջ 22-23:



նիկ Նազարյանն ու Արամ Ինճիկյանը, Պրոն Հակոբյանը... Ալամ-դարյանի կյանքի ու ստեղծագործության համակողմանի քննությունն է նվիրվել էլմիրա Գևորգյանի «Հարուստ Ալամդարյան» մենագրությունը (Երևան, 1977), որը մի հաղորդված փորձ է՝ ամբողջացնելու նշանավոր մանկավարժի ու գիտնականի, կրակոտ հայրենասերի ու հանրային գործչի, շնորհաշատ բանաստեղծի գրական դիմանկարը:

Ալամդարյանը սիրված է եղել շատերից. նրան գրեթե հայրական գուրգուրանքով են վերաբերվել Եփրեմ կաթողիկոսն ու Ներսես Աշտարակեցին, Սերովբե վարժապետ Պատկանյանը, խոր ակնածանք են տածել Լազարյանները, Ֆրիդրիխ Պարրոտը... Տաղանդաշատ այս գործիչը համընդհանուր հարգանք է վայելել նաև հայրենի ժողովրդի մեջ: «Ալամդարյանց Քահանայն՝ վառվռուն գրող, խոսող, ներշնչող և արտաշնչող հեղինակություն մ' էր. ժողովրդական համբավ կը վայելեր, զի յուր ոգած երգերն՝ ժողովրդական ամեն խավերուն մեջ տարածված էին. վերջապես, օրվան գրադեսն, օրվան բանաստեղծն, և օրվան մեծ մարդն էր»<sup>12</sup>, – իր հուշ-կենսագրականում հետագայում պիտի վկայեր Ներսիսյան դպրոցի նրա շնորհալի սաներից մեկը՝ Աբրահամ Այվազյանը:

Ամենից ազդեցիկը, սակայն, այն բացառիկ սերն է, որ տածել է Ալամդարյանի նկատմամբ խաչատուր Աբովյանը՝ երբեմնի խոնարհ աշակերտի մեծ երախտագիտությունը. հայ նոր գրականություն հիմնադիրն իր սիրելի ուսուցչին անվանել է «անոյշ դու Հա՛յր», «գա՛րդ ազգի, պսակ քո դարու», «գոյոյ և մխիթարութիւն բիւրաւոր անձանց», «հայրն բազմերախտ», «դաստիարակ իմ սիրելի»<sup>13</sup>...

Ո՞րն էր այդ սիրո գաղտնիքը: Ամենից առաջ Ալամդարյան մարդու բարոյական բարձր կեցվածքը, անանձնականությունը, մանկավարժական հազվագյուտ ձիրքն ու նախաշավիղ հանդիսացող բանաստեղծական անուրանալի շնորհքը:

12. Ա. Այվազյան, Ծար հայ կենսագրությանց, Կ. Պոլիս, 1893, էջ 131:  
13. Տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, Երևան, հ. 1, 1948, էջ 141, հ. 8, 1958, էջ 312:

Հայրենի տնից ու ծննդավայրից, հարազատներից հեռացած այդ պանդուխտ հայորդին, ապրելով անձնական խոր դրամա, գրկված լինելով ընտանեկան բերկրանքից, հայոց այբուբենը ձեռքին, ուսուցչություն էր անում մերթ Մոսկվայում ու Թիֆլիսում, մերթ Նոր Նախիջևանում՝ ամենուր բորբոքելով հայկական ոգու հուրը, ամենուր սերմանելով խորունկ սեր գեղեցիկի ու բարու նկատմամբ... Եվ ինչպես արտասահմանից վերադարձած Պատմահայրն էր ողբում իր սիրելի ուսուցիչներին՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կորուստը, այնպես էլ հեռավոր Դորպատից դարձած Աբովյանն էր մորմոքում իր ուսուցչի շիրմի առաջ. «Դու առաքեցիք զիս օրհնութեամբ յօտարութիւն, և ես դառնամ այժմ տրտմութեամբ և ցաւովք յաւիտեան զրկեալ ի փարելի տեսութենէ քումմէ. ուխտագրութիւնք մեր կործանեցան, ցանկութիւնք սրտից մերոց այժմ ընդ հողոյ հաւասարին. ուր և ելանեմ, ուր և հայիմ, սուգ և կսկիծ յանդիմանի աչաց իմոց...»: Ապա, դիմելով հայ ծնողներին, ավելացնում է. «Տաղը և երգք նորա մինչև ցայսօր կան կենդանի ի բերանս և ի հոգիս զաւակաց ձերոց... Հեռացեալ ի տանէ և ի հայրենեաց, զրկեալ յընտանեաց և ի զաւակաց, նա պատրաստեալ էր մատուցանել զանձն ի զոհ վասն օգտի հայրենեաց և հայկազուն մանկանց...»<sup>14</sup>: Երախտիքի ու դրվատանքի ինչպիսի՞ խոսքեր... Պատահական չէ նաև, որ այսօր հայ մշակույթի այդ երախտավորի 1970-ին վերականգնված գեղեցիկ շիրմարձան-խաչքարի (ճարտարապետ՝ Մարկ Գրիգորյան) վրա փորագրված են այս բնորոշիչ բառերը՝ «Ուսուցիչ, գիտնական, զինվոր, բանաստեղծ»<sup>15</sup>:

14. Նույն տեղում:  
15. Տե՛ս Վ. Մաղալյան, Նոր-Նախիջևանյան պատկերներ, «Երևանի հասարակ», համադր., Երևան, 1979, թ. 3, էջ 6-9:



## ԳԼՈՒԽ I

### ՈՒՍՈՒՑԻՉԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԶԻՆՎՈՐԸ

«Յո՛ւ և գնացի՛ միշտ գտի դարան»:  
Հ. Ալամդարյան

Հարուստը (Գևորգ) Ալամդարյանը ծնվել է 1793 թվականի՝ սեպտեմբերի 25-ին Աստրախանում: Այդ օրը զուգադիպել է Սուրբ Գևորգի մոտեցող տոնին, և ծնողները նորածնին անվանել են Գևորգ: Ալամդարյան ազգանունն առաջ է եկել հայրական պապի՝ Բոշա Հովսեփի՝ խոյ (պատմական Հեր) և Զարևանդ գավառների կառավարիչ խանի մոտ գրոշակակիր (պարսկերեն՝ ալամդար) լինելու պատճառով: Հայրը՝ Մանուկը, «բաշմախչի» էր (կոշկակարմաշկարար), մայրը՝ «կին գեղեցիկ և պարկեշտ, տնանկացած զարմե»<sup>2</sup> բարեպաշտ մի տանտիրուհի: Տեղի խալֆաների՝ տերթոզիկյան մեթոդներով դասավանդող վարժապետների մոտ գրաճանաչ դառնալուց հետո Գևորգը, դեռ մանկությունից լինելով վառվռուն

1. Ուսումնասիրողներից ոմանք Ալամդարյանի ծննդյան թվականը համարել են 1795-ը, ուրիշներն էլ՝ 1796-ը: Մենք թիմք ենք ընդունում, սակայն, Աղաբաբյան ուսումնասիրանի «Ուսուցիչների ծառայության ցուցակներում» և «Աշակերտների տարեկան տեղեկագրերում» մեջբերված վերջին փաստերը, որոնք մոտ լույս են սփռում մեզ հետաքրքրող հարցի վրա և հաստատում, որ Հարություն Ալամդարյանը՝ Եգոր Ալամտարով Մանուիլը (ոուսական տառադարձությամբ՝ **Егор Мануилов**), ծնվել է 1793 թվականին: Այդ մասին տե՛ս Հ. Զաքարյանի «Նորահայտ փաստեր Հարություն Ալամդարյանի վերաբերյալ (1793-1813)» հոդվածը («Բանբեր Երևանի համալսարանի» համադես, Երևան, 1984, թ. 2, էջ 131-139):

2. Տե՛ս «Հյուսիս», շաբաթաթերթ, Ս. Պետերբուրգ, 1863, թիվ 1, էջ 5 (Գ. Պատկանյան, Վարքագրություն Հարություն վարդապետ Ալամդարյան):

և ուշիմ պատանի, գրավում է Աստրախանի հոգևոր թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսի (հետո՝ կաթողիկոս) ուշադրությունը, որը որդեգրում է նրան և հանձնարարում իր փոխանորդ Ստեփանոս վարդապետ Արարատյանին՝ զբաղվելու երեխայի նախնական կրթությամբ: 1810 թ. դեկտեմբերին նա արդեն աստրախանցի մեծահարուստ Նիկողայոս Աղաբաբյանի ջանքերով հիմնադրված Աղաբաբյան դպրոցի առաջին սաներից էր, ուր աշակերտում է ճանաչված մանկավարժ Սերովբե Պատկանյանին: Ինչպես հավաստում է կենսագիրը, «երևելի Հայկաբանը» «Հայրական խանդաղատանք՝ և առավել ևս նախասիրական ջանյուք կնկրտեր մշակել և հառաջացնել Ալամդարյանցին բնական հանճարը և կրակ և բոց միտքը»<sup>3</sup>: Եվ 1812-ին 19-ամյա պատանին նույն դպրոցում նշանակվում է հայոց լեզվի կրտսեր ուսուցիչ՝ անդուլորեն շարունակելով ինքնազարգացումն ու անհազ ընթերցանությունը: «Աժտարխանա Ավագ եկեղեցվունյ ազգային ճոխ մատենադարանեն դուրս չէր ելներ»<sup>4</sup>,– պատմում է կենսագիրը: Սերովբե Պատկանյանի հմտության և սեփական ջանադրության շնորհիվ նա Աղաբաբյան դպրոցում ստանում է հիմնավոր կրթություն՝ ուսումնասիրելով բազմաթիվ առարկաներ՝ սկսած գրականությունից ու քերականությունից մինչև տրամաբանություն ու փիլիսոփայություն, աստվածաբանություն ու իրավագիտություն... Իսկ 1813-ին՝ 20 տարեկան հասակում, Ալամդարյանն ամուսնանում է աստրախանցի Հարուստ Արզանգուլյանի «գեղեցիկ և պարկեշտատուն» դստեր՝ Մարգարիտի հետ<sup>5</sup>:

Շուտով Ալամդարյանի համբավը դուրս է գալիս հայրենի քա-

3. Ա. Այվազյան, Ծար հայ կենսագրությանց, էջ 127:

4. Նույն տեղում, էջ 128:

5. Այդ ամուսնությունից հետագայում ծնվում են չորս երեխաներ՝ Հովսեփը (մահացել է փոքր հասակում), Մարիամը, Աննա և Կատարինեն, որոնք սկզբնական կրթությունն ստանում են Մոսկվայում՝ Լազարյանների հյուրընկալ օջախում: «Վեհագնա Լազարյանց գերդաստանը վառ սիրով կապված էր Հարություն քահանայի ընտանյաց հետ, ք որում է Միք. Պատկանյանը, և նրա դստերքը էդ տանը ստացան իրանց կրթությունը», «Մեղու Հայաստանի», լրագիր, Թիֆլիս, 1865, թիվ 25, էջ 199 (Միք. Պատկանյան, Ալամդարյան Հարություն վարդապետի հիշատակը):

ղաքի սահմաններից, Եփրեմ կաթողիկոսի ջանքով հասնում մինչև հյուսիս, հետաքրքրում Լազարյաններին, որոնք, ինչպես գրում է Միք. Պատկանյանը, «աչքի առաջևը ունենալով նրա օրինակելի բարոյականությունը, հիմնավոր և ճոխ գիտությունքը, գրավիչ ճարտարախոսությունը, հաջողակ ու քաղցրահնչյուն ձայնը, ազնիվ և գեղեցկահարմար կերպարանքը»<sup>6</sup>, 1813-ին հրավիրում են Մոսկվա: Հովակիմ Լազարյանը, որն այդ շրջանում արդեն ձեռնամուխ էր եղել իր կրթօջախի հիմնադրման աշխատանքներին, անմիջապես որսում է Ալամդարյանի մանկավարժական բացառիկ ջիղը և այնքան է հավանում նրան, որ որդեգրում է՝ տալով 1813-ին Հայրենական պատերազմում Լայպցիգի մոտ զոհված որդու՝ Հարությունի անունը:

Լազարյանների ընտանիքը, սկսած 18-րդ դարի 50-ական թվականներից, նշանակալից դեր էր կատարում ուսուսակալ գաղթօջախների լուսավորության գործում: Այդ տեսակետից հատկապես արժանահիշատակ է Հովհաննես Աղազարի Լազարյանի կատարած դերը: «Լազարյան ճեմարանը, — գրում է պատմաբան Վ. Դիլոյանը, — նրա երախայրիքն էր, թեև հիմնադրվեց և սկսեց գործել միայն նրա մահից 14 տարի անց: Լուսավորության հարցում Հովհաննես Լազարյանի հայացքները հետագայում դրվեցին ճեմարանի գործունեության հիմքում և նախագծեցին սրա դերը հայ ժողովրդի քաղաքական և մշակութային կյանքում»<sup>7</sup>: Հովհ. Լազարյանի սկսած գործը պատվով ավարտին է հասցնում եղբայրը՝ Հովակիմը, որի ջանքերով էլ 1814 թ. մայիսի 10-ին տեղի է ունենում ճեմարանի հիմնադրման հանդեսը՝ հայ և ուսուսակալ բարձրաստիճան անձանց մասնակցությամբ: Հանդիսավոր արարողության ժամանակ խոսք է ասում նաև Հարություն Ալամդարյանը՝ խոսելով ճեմարանի և առհասարակ լուսավորության նշանակության մասին հայոց կյանքում:

Մի կողմից գիտելիքների պաշարը հարստացնելու նպատակով 1814-ից իբրև ազատ ունկնդիր հաճախելով Մոսկվայի կայսերա-

6. Նույն տեղում:

7. Վ. Դիլոյան, Ազված աշխատությունը, էջ 195:

կան համալսարանի դասընթացներին, ուսումնասիրելով ճարտասանություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, ֆիզիկա և մետաֆիզիկա, մասնավոր դասեր առնելով նաև ֆրանսիացի հայտնի մի լատինագետի՝ Լամպերանի (Lameperen) մոտ, մյուս կողմից զբաղվելով ճեմարանի ուսումնական գործընթացի կանոնավորման դժվարին աշխատանքներով (աշակերտների և ուսուցիչների հավաքագրում, նախապատրաստական դասընթացների կազմակերպում, Լազարյան ճեմարանի առաջին կանոնագրի պատրաստում...)՝ նա իր հիմնադիր-տեսչի, հայոց և ուսուսակների ու կրոնի ուսուցչի պաշտոնով պատկառելի դեր է կատարում Լազարյան ճեմարանի օրըստօրե աճող համբավի մեջ:

Ալամդարյանն ամենից առաջ ջանում էր ուսուցումը դարձնել հետաքրքիր ու դյուրին: Ճեմարանի հոգաբարձու Հովակիմ Լազարյանին Պետերբուրգ ուղարկված բազմաթիվ նամակներում նա գտնում էր, որ ուսուցումը պետք է ընթանա պարզից դեպի բարդը՝ «փոքր առ փոքր զհեշտիսն դնելով առաջի մանկանց դեռավարժից զհարցմունս», գրաբարը հեշտ յուրացնելու համար նախապատրաստական դասարաններում անհրաժեշտ էր համարում դիմելու աշխարհաբարի օգնությունը: Ըստ նրա՝ մատուցվող նյութերը պետք է լինեն «համբալսարան» մատչելի երեխաներին, և, որ պակաս կարևոր չէ, ուսուցիչը պետք է հաշվի առնի աշակերտների տարիքային հատկանիշներն ու հոգեբանությունը, դրսևորի մարդասիրական վերաբերմունք և լինի ոչ թե «վարձկան» պաշտոնյա, այլ «անձնադիր հովիվ»: Դժգոհելով, օրինակ, ճեմարանի հայկաբանության ավագ ուսուցչի՝ կաթողիկ Հովակիմ կրոնավորի (հայրենի եկեղեցու գիրկը վերագառնալուց հետո՝ Միքայել Սալլանյանի)՝ մանկավարժին անհարիր պահվածքից՝ ահա ինչ է գրում Ալամդարյանը Հովակիմ Լազարյանին. «Ի նորաբողբոջ աշակերտացն իմոց ըստ օրինակի վարձկանի և ոչ անձնադիր հովիվ հարցանելով որոտմամբ՝ ապշեցոյց զնոսա, որք հազու կարէին խօսիլ ընդ նմա, թող թէ համարձակ պատասխանել...»<sup>8</sup>: Այս վավերաթուղթն ուղարկվել է նաև այն տեսակետից, որ բացահայտում է

23. Երևանի Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 105, գ. 11, վ. 8:

անբարյացակամ, ավելին՝ թշնամական մթնոլորտը, որ աստիճանաբար ստեղծում էին սխոլաստիկ ու թույլ վարժապետները լուսավոր մտածողի ու լայնախոհ մանկավարժի շուրջ: Իսկ որ կարճ միջոցում Ալամդարյանի սաներն զգալի հաջողությունների էին հասել և դրսևորել բարձր առաջադիմություն, վկայում է հենց, ասենք, Ալեքսանդր Խուրաբաշյանի 1816-ի սեպտեմբերի 4-ի թվականի նամակը՝ ուղղված Հովակիմ Լազարյանին: Ալ. Խուրաբաշյանը, ճեմարանում ծանոթանալով Ալամդարյանի ուսուցողական առաջավոր մեթոդիկային, դրվատանքի ու երախտագիտության խոսքեր է ասում ոչ միայն ուսուցչի մասին, այլև արձանագրում նրա սաների ակնառու հաջողությունները. «Նրանցից երեքը ներկայացրին ուսուցիչից և լատիներենից հայերեն կատարած իրենց թարգմանությունները. նրանց հաջողություններն այնքան մեծ են, որ դասընթացն ավարտելուց հետո նրանց համարձակորեն կարելի է թողնել ուսումնական հաստատությունում՝ որպես ուսուցիչների օգնականներ»<sup>9</sup>: Հիրավի, Ալամդարյանը ուսուցիչ էր այդ բանի սովորական իմաստով. լեզուները միջոց էին՝ աշակերտների առջև բացելու գեղեցիկի խորհրդավոր աշխարհը, հաղորդակից դարձնելու ուսուցչի և եվրոպական առաջավոր մտքի կարկառուն ներկայացուցիչներին, թերթերու, ինչպես կասեր նրա սիրելի գրողներից մեկը՝ Կարամզինը, «մարդկային դժբախտ ցեղի պատմության» էջերը...

Ալամդարյանի ու Սալլանթյանի միջև տեղի ունեցած ընդհանրումը, ինչպես նաև Մոսկվայի հայոց եկեղեցու երեցփոխի, հետամնաց քահանաների բամբասանքների ու կեղծիքների հյուսած ցանցերը, սակայն, անհետևանք չեն անցնում, և Հովակիմ Լազարյանը 1816 թ. անբարենպաստ նամակ է առաքում Նոր Նախիջևանի ու Աստրախանի թեմակալ Հովհ. Գառնակերյանին՝ դժգոհելով Ալամդարյանի հանդուգն վարքագծից: Թեմակալը, որը երկու տարի առաջ նույն Լազարյանների միջնորդությամբ Ալամդարյանին

9. “Материалы для истории Лазаревского института восточных языков”, с. XIX-XX. Стѣн Գաև Երևանի Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 104, գ. 8, վ. 52:

ձեռնադրել էր քահանա, պատասխան նամակում շտապում է իր պաշտպանության տակ առնել նրան՝ դրսևորելով անաչառ վերաբերմունք. «Յարութիւն քահանայն խնդրեմ այնքան անպետ չի ճանաչել. համարյա թէ ի բոլոր Ռուսիայ ի մէջ ազգի մերում այնպիսի քահանայ դժուարաւ գտանի...»<sup>10</sup>: Լազարյանների ու Ալամդարյանի միջև, այնուամենայնիվ, գոյանում է ինչ-որ սառնություն, որը, ցավոք, այնուհետև քիչ վիշտ չի պատճառում ազնիվ մանկավարժին և լուսավոր գործչին: Եվ ըստ երևույթին դրանով պետք է բացատրել այն զարմանալի իրողությունը, որ անձնվեր մանկավարժը, որին ատելի էր «ըստ ամենայնի զախտ ծուլությունն», օրավուր աշխատելով ճեմարանի բարգավաճման համար, ապրել է նյութական չափազանց անձուկ վիճակով. Մոսկվայում բնակվող Հովակիմ Լազարյանի որդու՝ Խաչատուրի կողմից «անհրճանազան», «խռովարար» և «հանդուգն» որակված ուսուցիչը Լազարյան ճեմարանում երեք տարի զբիւրված է եղել աշխատավարձից՝ «բավարարվելով» միայն քահանայական հասույթով: Ուշաբժան է նաև այն հանգամանքը, որ հետագայում ևս՝ Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելու վեց տարիների ընթացքում, նա դարձյալ աշխատավարձ չի ստացել. ուսման հարգը լավ իմացող և իր դպրոցի ուսուցիչների նկատմամբ բարյացակամ ու նրանց վարձատրության հարցում շուրջ Ներսես Աշտարակեցին (Փարիզից Թիֆլիս հրավիրված Հակոբ Շահան-Ջրպետյանի միայն ճանապարհածախսի համար, նա, օրինակ, վճարել է 10. 400 ֆրանկ) հոգացել է Ալամդարյանի միայն առօրյա պետքերը՝ բնավ չանհանգստանալով վերջինիս բազմանդամ ընտանիքի զրկանքների համար: Ներսիսյան դպրոցի 75-ամյա պատմությունը շարադրող Հմուտ բանասեր Ալեքսանդր Երիցյանը, որն իր գրքում աղյուսակներով մանրամասն ներկայացնում է դպրոցի ուսուցիչների ամենամսյա ու ամենամյա ուճակացուցակները, անկեղծ զարմանքով գրում է. «Ուշադրություն արժանի է, որ Ալամդարյանին Ներսեսը, չգիտենք ինչու, ոչինչ ուճիկ չէր տալիս՝ ո՛չ վերակացուության, ո՛չ ուսուցչության

25. Երևանի Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 103, գ. 9, վ. 207:

և ոչ նորա վարած մյուս բազմաթիվ պաշտոնների համար, այլ բավականանում էր հոգալով նորա առօրյա պիտույքը: ...Առհասարակ մեզ համար անմեկնելի է թվում, թե ի՞նչն էր պատճառը, որ Ալամդարյանը ուսումնարանիս մեջ յուր վեց տարվա հավատարիմ պաշտոնավարութեան միջոցին ռոճիկ չէր ստանում, այնինչ Ներսեսը ոչինչ չէր խնայում վարժապետաց սիրտը շահելու համար»<sup>11</sup>: Այսօր էլ՝ գրեթե երկուհարյուրամյա հեռավորութունից, մեզ համար ևս դժվար է տալ այդ հարցի հստակ պատասխանը. մնում է միայն կռահումներ անել: Մեզ հասած աղբյուրները վկայում են, որ Ալամդարյանի կողմից, անշուշտ, եղել են տրտուհյներ, որոնք թե՛ Լազարյան ճեմարանում և թե՛ Ներսիսյան դպրոցում մնացել են որպես «ձայն բարբառոյ յանապատի»: Մի՞թե այս խնդրում էական դեր չեն կատարել Ալամդարյան մանկավարժի անձանձիր աշխատանքը և մի հոգեբանական արատավոր գործոն՝ հիմնադիր մեկենասների՝ դպրոցի մեղմալան մշակի համեստութեան շահագործումը և այլ ելք չունենալով՝ իրենցից վերջինիս կախածութեան ու մշտական պարտքի տակ գտնվելու զգացումը: Դժվար է ասել: Բայց և արդարութեան դեմ մեղանչած կլինենք, եթե չարձանագրենք, որ չնայած որոշ հակասութունների՝ երկու մեկենասներն էլ միշտ անկեղծորեն անհանգստացել են Ալամդարյանի հետագա ճակատագրով և բարձր գնահատել նրա մանկավարժական տաղանդը:

Հ. Ալամդարյանը Լազարյան ճեմարանում պաշտոնավարում է շուրջ տասը տարի (1814-1824): Չնայած այդ տարիների ընթացքում Լազարյանների՝ նրա հանդեպ դրսևորած վերաբերմունքի հաճախադեպ վայրիվերումներին (Հովակիմ կրոնավորի՝ Ալամդարյանի դեմ ուղղված պարսավազրերի հետևանքով վերջինիս պաշտոնափոխությունը՝ այդ կրոնավորի օգնական ուսուցիչ կարգելը, ճեմարանի նոր շենք Ալամդարյանի և նրա աշակերտների մուտքն արգելելը, անգամ սպառնալիքը՝ վռնելու Մոսկվայից, այնուհետև իրադրություն բացահայտման հետևանքով դրանց հաջորդած զրդշումը...)՝ Հովակիմ Լազարյանի համակրանքն Ալամ-

դարյանի նկատմամբ մնում է մշտատև: Այսպես, օրինակ, 1824 թ. 21/12 թվակիր նամակում Հովակիմ Լազարյանը Ներսես Աշտարակեցուց խնդրում է սրտացավ վերաբերմունք ցուցաբերել իր ճեմարանից հեռացած Ալամդարյանի նկատմամբ, քանի որ նա «այդ պիտանի է և հմուտ մերոյ և ուսաց լեզուի», և աշխատանք տալ նորաբաց Ներսիսյան դպրոցում<sup>12</sup>:

Ճիշտ է, Ալամդարյանի վիճակն անհամեմատ բարելավվում է, երբ 1816 թ. ճեմարանի տեսուչ է նշանակվում Սերովբե Կարնեցի վարդապետը, և քիչ անց հրաժարական է տալիս Հովակիմ կրոնավորը, բայց 1822-ին վերջինի վերադարձը և վերստին ճեմարանի տեսչի ու հայագիտական առարկաների ավագ ուսուցչի պաշտոն ստանձնելը դառնում են Ալամդարյանի՝ Մոսկվայից հեռանալու պատճառներից մեկը: Բացի այդ՝ իրար հետևից վրա են հասնում ճակատագրի անողոք հարվածները. 1821 թ. սկզբներին վախճանվում է նրա մանկահասակ որդին՝ Հովսեփը: Զավակի տարածամահվան մորմոքն իր՝ գրեթե տասը տարի չտեսած ծերունազարդ ծնողների գրկում փոքր-ինչ մեղմելու նպատակով Աստրախան մեկնած Ալամդարյանը, սակայն, ստիպված փութով վերադառնում է Մոսկվա՝ կնոջը գտնելով մահվան մահճում. «Բաղդի խաղալիկ Տեր Հարությունը գտավ յուր տունը կիսավեր. նորա սիրական գուգակիցը, նորա կենաց ուղեկիցը, նորա գեղեցիկ և պարկեշտ հարսը՝ երիցուհի Մարգարիտը մահվան դրանը ընկած կար: Ոչ նորա սերը, ոչ զավակաց աղիողորմ կողկողանքը, ոչ Վեհագներից (Հ. Լազարյանի. – Ալ. Մ.) հայրագուլթ խնամարկությունը, կարողացան ազատել հիվանդին՝ այն աշխարհակուլ վիշապի ժանիքներեն. և Տեր Հարություն քսան և ութամյա երիտասարդը մնաց այրի»<sup>13</sup>: 1821-ի օգոստոսի 12-ին վախճանվում է 24-ամյա Մարգարիտը, և հուսահատված երիտասարդը Մոսկվայի հայոց եկեղեցու մետրիկական մատյանի մեջ իր «ձեռամբ» գրում է. «Թշուռուական Յարութիւն քահանայի կինն՝ Մարգարիտ Յարու-

11. Ա. Երիցյան, Պատմություն... , էջ 110-112:

12. Տե՛ս Մ. Մխիթարյան, Մատենադարանի Լազարյանների արխիվը, «Բանբեր Մատենադարանի», հանդես, Երևան, 1960, թ. 5, էջ 355:  
13. Նույն տեղում:

թիւնեան (‘ի տանէն Արզանկիւլեանց<sup>14</sup>) վախճանեցաւ 24 ամաց»<sup>15</sup>: Միք. Պատկանյանն իր՝ «անկասկածելի աղբյուրներից հավաքած համառոտ տեղեկութիւններում» ահա ինչ է պատմում. «Արտաբեկ և անմխիթար մնացած երիտասարդ այրին մեկ ամբողջ տարի ամեն երեկո գնում էր գերեզմանատունը (7 վերստ հեռի Մոսկվայից) և մինչև կես գիշերը թափում էր արտասովաց հեղեղներ սիրեկանի հողի վրա և գըրկում էր մառմառ քարից շինած մահարձանը, որի վրա փորել էր տվել սրտառուչ տապանագիրն.

Չէ այդ առագաստ մերոց հարսանեաց,  
Ել այտի, ե՛լ լոյս, ե՛լ կեանք իմ կեանց,  
Եթէ բնութեան սարսիս յօրինաց,  
Զի՛ս ընկալ առ քեզ յայդ գուր մթազգած:

Էստեղ, արտասունքով ցողած գերեզմանի վրա, անմխիթար երիտասարդի սիրահարված սրտից բխեցան նրա պատվական երգերը և հորինվածք «Յերկու ձեռին երկու մոմ, ինձ ընդ առաջ ել յիւր տուն», – «Թշուառութիւն սոխակի», – «Ով է աստ Յակոբ Սահակայ որդի», ու այլ շատ հեղինակութիւնք»<sup>16</sup>:

Կնոջ մահից հետո երեք տարի մնալով Մոսկվայում՝ նա բռնում է իր երեք որբ դուստրերի ձեռքը և, ինչպես հավաստում է Գաբրիել Պատկանյանը, «սգավորված, սեավորված, անմխիթար, անսփոփ, աշխարհն ուրացած, մարմինը մեռած»<sup>17</sup>, վերադառնում է տուն՝ Աստրախան: Իսկ նա տակավին 31 տարեկան էր:

14. Բնագրերում քանիցս հիշատակվող Արզանգուլյան ազգանունը է. Գևորգյանի մեկնագրության մեջ, հավանաբար վրիպմամբ, ամեմոր դարձել է Արզագուլյան:

15. «Փարոս Հայաստանի», հանդես, Մոսկվա, 1880, Տետր Ա (Հունվար-Հունիս), էջ 23:

16. «Մեղու Հայաստանի», լրագիր, 1865, թիվ 25, էջ 199 (Միք. Պատկանյան, Ալամդարյան Հարություն վարդապետի հիշատակը):

17. Տե՛ս է. Գևորգյան, Հարություն Ալամդարյան, էջ 46:

\* \* \*

Լազարյան ճեմարանում ձևավորվում է ոչ միայն բազմաձիրք ուսուցիչը, այլև հմուտ գիտնականն ու տաղանդավոր բանաստեղծը:

Քաղ գիտակցելով ուսումնական ժամանակակից ձեռնարկներ ու անհրաժեշտ գրականություն ունենալու պետքը՝ Ալամդարյանը հաճախ էր դիմում Հովակիմ Լազարյանին՝ ակնկալելով նրա աջակցությունը, և ճեմարանի հոգաբարձուն ընդառաջ էր գնում այդ ցանկություններին: «Առաջին գործը, որ արեց Ալամդարյանը, – գրում է պրոֆ. Գիդուլյանովը, – հայերի համար ուսերենի դյուրամատչելի քերականություն կազմելն էր»<sup>18</sup>: Ռուս-հայերեն այդ գործնական քերականությունն ստեղծելու համար 1814 թ. նա Հովակիմ Լազարյանից ստանում է անհրաժեշտ գրականություն և մեկ տարի հետո արդեն այն պատրաստում տպագրության: Ցավոք, Ալամդարյանի «նախախայծ երախայրիքին» բախտ չվիճակվեց լույս աշխարհ գալ, քանի որ հոգաբարձուն հետագայում տարակարծություններ հայտնեց հեղինակին մի շարք բառերի «սխալ» թարգմանությունների համար: Ալամդարյանը պատասխան նամակում որքան էլ իրավացիորեն փաստարկեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի 1789 թ. հրատարակած բառգրքի տվյալները, այնուամենայնիվ ցանկալի արդյունքի չհասավ, և քերականության այդ արժեքավոր ձեռնարկը մնաց անտիպ: Վաստակաշատ բանասեր Շուշանիկ Նազարյանի պրպտումների շնորհիվ Մատենադարանում հայտնաբերված ուսու-հայերեն քերականության ձեռագրի ընդօրինակությունները վկայում են այդ դասագրքի արժանիքները, նաև այն, որ գրված լինելով 1815-ին՝ այն առաջինն է հայ դպրոցի պատմության մեջ և փաստորեն քառորդ դար կանխում էր ինչպես Ռուսաստանի «Նոր տեսական և գործնական քերականություն ուսաց վասն հայոց» աշխատությանը (1838-39): «Այդ դասագիրքը, – գրում է բանասերը, – հարուստ և բազմա-

18. "Материалы для истории Лазаревского института восточных языков", с. XVII.

բովանդակ իր նյութով, նրա դասավորութայն սկզբունքով կարող է ծառայել և՛ որպես ուսու-հայերեն գործնական քերականություն դասագիրք, և՛ որպես ուսու-հայերեն թարգմանություն և ընթերցանության ձեռնարկ, և՛ որպես ուսուսերեն-հայերեն համառոտ բառարան: Դրանով հեղինակը հետապնդում է մի հիմնական նպատակ – որպեսզի հայ աշակերտը ընտելանա ուսուսերեն լեզվին այն աստիճան, որ կարողանա ինքնուրույն կարդալ, հասկանալ, թարգմանություններ անել և այդ ճանապարհով ստանալ նորանոր, բազմակողմանի, ընդհանուր գիտելիքներ»<sup>19</sup>:

Քերականության այդ դասագիրքը, պարունակելով հանդերձ ուսուսաց լեզվի քերականության հիմնական կանոնները, հետապնդել է գործնական լայն նպատակներ՝ թարգմանության հիմունքների, թարգմանական արվեստի յուրահատկությունների և բառապաշարի (ձեռնարկի վերջնամասում գետեղված է բնագրերում հանդիպող անհասկանալի կամ դժվարընկալելի շուրջ 2000 բառերն ընդգրկող ուսու-հայերեն համառոտ բառարան) ուսուցանում՝ զրանից բխող գեղագիտական հիմնախնդիրների և հայրենասիրական զգացումների արծարծումներով: Այլամդարյանն ինքն էլ լինելով հմուտ թարգմանիչ (նա մեծ հաջողությամբ թարգմանել է, օրինակ, Ռաֆայել Դանթեի «Ճանապարհորդություն դեպի Հնդկաստան» գիրքը)՝ թարգմանության հիմունքների ուսուցման ճանապարհին առաջնահերթ է համարել թարգմանության հոգեհարազատությունը բնագրին՝ անշուշտ ստեղծագործական ազատ մոտեցումներով. «Քաջ թարգմանն է, զի բազում բառս ձուլ է ի մի, է՛ զի բարդ բառ բնագրին բաժան է և բացատր է երկու և երեք բառիւք, է՛ զի արտաքս է զբառս ինչ բնագրին և է զի յաւելու զքանի մի բառս. յայսմ ամենայնի ուշ եղեալ զպարզութիւն և ազատութիւն զգեցուցանել բանին»<sup>20</sup>: Հետաքրքիր է նաև թարգմանությունների բնագրերի ընդգրկումը. դրանք գերազանցապես

նշանավոր առակագիրներ են՝ հայտնի իրենց բարոյագիտական ու գեղագիտական առաջադեմ հայացքներով՝ Կոխով, Կարամզին, Դմիտրիև, Խեմնիցեր... Այլամդարյանին ամենահոգեհարազատը, թերևս, Կարամզինն է, որի «Ի՞նչ է պետք հեղինակին» տեսական հոդվածից կատարված մեջբերումները համահունչ են նաև հայ մտածողի գաղափարախոսությունը: Ահա, օրինակ, գրողի կոչմանը վերաբերող ուշագրավ հատվածը. «Ասում են, որ հեղինակը պետք է ունենա տաղանդ և գիտելիքներ՝ սուր, խորաթափանց միտք, կենդանի երևակայություն և այլն: Ընչտ է. բայց այդքանը բավարար է: Նրան անհրաժեշտ է նաև բարի, քնքուշ սիրտ, եթե նա ցանկանում է լինել մեր հոգու բարեկամն ու սիրելին, եթե կամենում է, որ իր ձիրքը միշտ շողարձակի, եթե ուզում է գրել հավերժի համար և արժանանալ ժողովուրդների օրհնությունը...»

Դու ցանկանում ես հեղինակ լինել՝ կարդա՛ մարդկային դժբախտ ցեղի պատմությունը, և եթե սիրտդ չարյունի, թող գրելը, այլապես այն մեզ կներկայացնի քո հոգու ցուրտ մռայլը»<sup>21</sup>:

Մի կարևոր հանգամանք ևս. բնագրերի ընտրության, մեկնությունների ու վարժությունների կազմման ընթացքում հեղինակն ամենուր ձգտում է հայ սերունդների մեջ բորբոքել հայրենասիրության հուրն ու հայրենի եզերքի հպարտության թեման: «Ամենից առաջավոր փիլիսոփայությունը այն փիլիսոփայությունն է, – գրում է նա դասագրքի ընթերցանության բաժնում, – որ մեզ կասի, որ մենք պետք է սիրենք մեր հայրենիքի օգուտը, որ նրա լուսավորությունը մեր կյանքում ամենից ավելի մեծ բավականություն է պատճառում մեզ, որ նրա անդորրությունը և բարիքը մեզ համար ծառայում են որպես վահան մեր ընտանեկան երջանկության, որ նրա փառքը մեր փառքն է, և եթե մարդու համար վիրավորական է արգահատելի հոր որդի կոչվելը, ապա ավելի քան վիրավորական է հայրենիքի արգահատելի որդի անվանվելը: Ուստի սերը դեպի սեփական բարօրությունը ծնում է մեր մեջ սեր դեպի հայրենիքը, իսկ անձնական ինքնասիրությունը ծնում է ժողովրդ-

19. Ծ. Նազարյան, Հարություն Այլամդարյանի գործունեության մոսկովյան տարիները, «Քաներ Մատենադարանի», հունիս, Երևան, 1960, թ. 5, էջ 191:

20. Նույն տեղում, էջ 192:

21. Նույն տեղում, էջ 194:



դական հպարտություն, որը հիմք է ծառայում իսկական հայրենասիրության»<sup>22</sup>:

Թեև քերականության այդ ձեռնարկը չի տպագրվում, բայց հեղինակն իր մանկավարժական ամբողջ գործունեության ընթացքում, ինչպես վկայում են փաստերը, անդուլորեն օգտագործում է այն՝ ընդօրինակելով իր ձեռագիր աշխատության զանազան մասերը և դրանք հանձնարարելով աշակերտներին: Ուրիշ խոսքով՝ ուսուցանողները գործնական քերականությունը, այնուամենայնիվ, կատարում է իր շահեկան դերը և ինչ-որ չափով հոգեպես վարձատրում վերավորված գիտնականին:

Ալամդարյանի՝ Լազարյան ճեմարանում կազմած ուսումնական ձեռնարկներից տպագրվում է միայն 9000 բառահոգոված պարունակող ուսուցանողական բառարանը, որի համար, Գ. Պատկանյանի հավաստմամբ, հեղինակն «ստացավ ոսկի խաչ պարանոցի»<sup>23</sup>: Ինչպես հետագայում Խ. Աբովյանը, Ալամդարյանը ևս այն ճշմարիտ համոզման էր, որ մայրենին սրբությունը պահպանելու հետ միասին անհրաժեշտ է ջանադրաբար սովորել նաև ուսուցիչները, քանի որ Ռուսաստանը հայոց համար մի «նոր Աթենք է»։ «Հայք, անկորուստ պահեալ զբուն բարբառ իւրեանց, գուն գործեն մեծավաստակ երկասիրութեամբ ուսանել և զլեզու ուսուց. զի նովալ ակն ունին ներվարժիլ ի հարկաւոր գիտութիւնս և առաւելապէս լուսաւոր առնել զմիտս իւրեանց: Յայս միտս Ռուսիա է վասն նոցա նոր Աթենք. այլ առ պակասութեան կարեւորագոյն գրեանց յանթերի ուսումն լեզուի ուսուց յամենայն ջանք նոցա ի դերե ելանէ»<sup>24</sup>:

Ի վերջո, Մոսկվայում է Ալամդարյանը հյուսում իր սրտառուչ տաղերի որոշ մասը. Մարգարիտի մահվան օրը (1821-ի օգոստոսի 12-ին) նա գրում է «Ամենեւին ես գեղեցիկը...», երեք օր հետո՝ «Կոծը», որին հաջորդում են «Սուգ», «Թշուառութիւն սոխակի» և նշանավոր «Պարերգութիւն» բանաստեղծությունները...

22. Նույն տեղում, էջ 195:

23. Տե՛ս «Հյուսիս», շաբաթաթերթ, 1863, թիվ 1, էջ 6 (Գ. Պատկանյան, Վարքագրություն Հարություն վարդապետ Ալամդարյան):

24. «Համասօս բառարան ի ռուսաց լեզուէ ի ճալ, աշխատասիրութեամբ Յարութիւն քահանայի Մանուկեան Ալամդարեանց», ի Մոսկով, 1821, էջ 1:

\* \* \*

Լազարյան ճեմարանի հիմնադրման և պաշտոնական բացման շրջանում չափազանց անմխիթար էր Թիֆլիսահայ գաղթօջախի կրթամշակութային վիճակը: Երբ 1814 թ. 44-ամյա Ներսես Աշտարակեցին, ինչպես փաստում է Ալ. Երիցյանը, նշանակվեց վիրահայոց հոգևոր թեմի առաջնորդ, ժողովրդին գտավ խոր տգիտության մեջ. «Հայ հոգևորականությունը տգետ էր, ըմբոստ, անպատկառ, ոչ յուր կարգը և ոչ պատիվը ճանաչող: ... Ազնվականք և իշխանականք – անուսք. գոռոզք յուրյանց ցեղական ծագմամբ, բայց զազրելի վարք ու բարքի տեր. կեղեքիչք և հարստահարիչք ու միկների ու տկարների»<sup>25</sup>: Հոգևոր դասը գրել-կարդալ գրեթե չգիտեր, ժամասացությունը սովորել էր բերանացի լսելով, անգամ ստորագրելու փոխարեն թանաքոտ մատով էր կնքում պետք եկած թղթերը... Ազնվականների զավակների համար Ցիցիանովի օրոք բացված Թիֆլիսի միակ դպրոցը պարապություն էր մատնված, նույնիսկ արքունական գանձարանից հատկացված թոշակը՝ «իբրև կաշառած և սպաստ», չէր գրավում աշակերտներին: Ամբողջ մայրաքաղաքում հմուտ հայերեն իմացողի համբավ ուներ միայն Նորաշեն եկեղեցու ժամկնճը՝ երկու ոտքից կաղ Եղիազար Գալստայանը, որը եկեղեցուց ոչ հեռու վարձել էր մի դուքան, ուր «13 հոգի մոնթեր – ապագա քահանայացուք, տավարի բեճի անվանյալ ոսկրե թիակի վրա գրում և կարդում էին բարձրաձայն»։ Թիֆլիսի հայոց վարժարանի այդ նախատիպում մոլեգնում էր միջնադարյան ֆալախան. «Դուքանի դռները բաց էր և փողոցում անց ու դարձ անողները կանգնում նայում էին թե՛ մոնթերի իմաստությունը ուսանելուն և թե՛ նոցա փալախայ ուսելիս – «վա՛յ, վա՛յ» գոռալուն: ... Շաբաթը երկու անգամ այդ դպրոցում խալիֆա Եղիազարը թանաք էր եփում և կավեղեն ամաններով ուղարկում էր մոնթերին փողոցներում ծախելու՝ «թանաք ա՛ռեք» պուռալով»<sup>26</sup>:

25. Ա. Երիցյան, Պատմություն... , էջ 31:

26. Նույն տեղում, էջ 30:



Ստեղծված կացութիւնը շտկելու համար Ներսես Աշտարակեցին գործվագութիւն հոր պես ձեռնամուխ է լինում սեփական հոգևոր հոտի բարելավման աշխատանքներին՝ աչքի առաջ ունենալով կանոնավոր մի ուսումնարանի ստեղծումը, որը, իր իսկ խոսքերով ասած՝ կղաւնա որպէս «արձան օրինակական ապագայից վիճակաւորաց Հայոց»։ Տեւական է լինում այդ գործընթացը՝ շուրջ 10 տարի (1814-1824)։ Դեռ 1815-ին Աշտարակեցին ժամանակավոր փոքրիկ դպրոց է բացում Վանքի եկեղեցու խցերից մեկում, ուր քահանաների 20 որդիների գրել-կարդալ է սովորեցնում տեր Հովհան քահանան, որին երկու տարի հետո փոխարինելու է գալիս հայկաբան Պողոս վարդապետ Ղարադաղցին (Ներսիսյան)։ Այնուհետև սրբազանը, մի կողմից հավաքելով ժողովրդի ու հայ ազգեցիկ մեծահարուստ իշխանների սկզբնական նվիրատուութիւնները, մյուս կողմից օգտագործելով կայսերական արքունիքում ունեցած իր անձնական կապերը, ինչպէս նաև սեփական հատուցութիւններն ու եռանդը, օրնիբուն կառուցում է իր երազած ուսումնական պատկառելի հաստատութիւնը, որը հետագայում պիտի կրեր հիմնադրի անունն ու այնքան անգնահատելի ծառայութիւններ մատուցեր հայ ժողովրդի հոգևոր լիցքերի հավաքման, կենտրոնացման և հայրենի մշակութի բարձրացման ճանապարհին։

Խոհուն սրբազանը, սակայն, լավ էր հասկանում, որ իր հիմնած ուսումնարանը ոչինչ կլինէր առանց բանիբուն ուսուցիչների ներկայութեան, իսկ «այն ժամանակներումը Հայոց աշխարհում համբավավոր ուսուցիչների սով էր»<sup>27</sup>։ Աշտարակեցին առանձնապէս հավատ էր ընծայում կաթողիկոսութիւնից հայրենի եկեղեցու գիրկը դարձած հայ կրօնավորներին և նրանց ատորեն վերջիններիս իրենից հեռու էր պահում։ Այսպէս, երբ 1815-ին Թիֆլիս ժամանեց արդեն ծանոթ Հովակիմ կրօնավորը, որն ապագայում ոչ քիչ ցավ պատճառեց Ալամդարյանին և առաջարկեց իր ծառայութիւնները սրբազանին, վերջինից քաղաքավարական մերժում ստացավ ու հաստատուեց Լազարյան ճեմարանում։ Ավելին, այդ բանասարկուն Հ. Լազարյանին ուղղված նամակում սրբազանի մա-

27. Տե՛ս Առյճ տեղում, էջ 37:

սին կիսահեզնաբար գրում է, թե նա իբր «Թախանձեաց զմեզ կալ մնալ անդանոր և յանձն առնուլ զպաշտօն ուսուցչապետի ՚ի հրահանգել զհամբախ ազգին», իսկ ինքը վեհանձնաբար հրաժարվեց... Նա չի «մոռանում», սակայն, նշել իր՝ «բոցավառ ցանկութիւն տապոյ տենչանաց» ուսուցչապետ լինելը Մոսկվայի հարուստ ճեմարանում։ Մինչդեռ «Աշտարակեցին ոչ միայն չէ խընդրած պարծենկոտ կանոնիկոսից մնալ յուր ուսումնարանում, այլև միշտ մերժում էր նորա այդ մասին առաջարկած ծառայութիւնները»<sup>28</sup>։ Հեռատես սրբազանը իր ապագա դպրոցի համար որոնում էր էպպես հայրեցի ուսուցիչներ՝ «բուն հայ հոգվով, մայրենի եկեղեցվուն հարագատ և հավատարիմ ու առաքինի բարուց և վարուց տեր»։

Ներսես Աշտարակեցուն առանձնապէս չէին ոգևորում նաև Ֆրանսիայի Արևելագիտութեան դպրոցում դասավանդող և մեծ գիտնականի համբավ վայելող Հակոբ Շահան-Ջրպետյանն ու Մոսկվայի Լազարյան ճեմարանի դասախոս Սերովբե վարդապետ Կարնեցին։ Ծիշտ է, սրբազանը դեռ 1820-ին նամակով խնդրում է վերոհիշյալ գիտնականներին՝ ապագա դպրոցի համար պատրաստելու ծրագիր-կանոնագրութիւններ, բայց դրանք ստանալուց հետո խիստ անբավարար է մնում, քանի որ Շահան-Ջրպետյանն իր ծրագրով առաջարկում էր բացել մի համալսարան՝ 12 մասնագիտական ֆակուլտետներով, ուր մինչև անգամ պիտի ուսուցանվէին ռազմական գործ ու նավարութիւն, որ անիրագործելի էր, իսկ Կարնեցին՝ 48 աշակերտի համար նախատեսվող մի գիշերօթիկ սահմանափակ վարժարան՝ նման Մոսկվայի ազնվականների բազմածախս դպրոցի։ Մինչդեռ սրբազանը «համեստաբար ցանկանում էր, բացի կարելվուն չափ կրթյալ հոգևորականներ պատրաստելը, արծարծել գրագիտութիւնը երկրիս չքավոր և տգետ դասակարգի մեջ և այս մտքով լայն կերպով բաց էր անում յուր դպրոցի դռները ամեն լույս ցանկացողների համար անխտիր»<sup>29</sup>։ Եվ սրբազանի ընտրութիւնն ի վերջո կանգ է առնում Հարութիւն

28. Նույն տեղում, էջ 39:  
29. Նույն տեղում, էջ 84:

Ալամդարյանի՝ այդ «նորընծա երիտասարդ և համեստ քահանայի» վրա, որ «բացի ուսուցչուծյան, Լազարյանների համար քարտուղարուծյուն էր անում և գրվածներ թարգմանում: Այլևս ոչ ոք կար Ներսեսի ուսումնարանի համար հարմար անձն»<sup>30</sup>:

Ներսես Աշտարակեցու հրավերով Հարուծյուն Ալամդարյանը 1824-ի սեպտեմբերի 10-ին ժամանում է Թիֆլիս: Այդ ժամանակից էլ սկսվում և մինչև 1830 թվականն է շարունակվում նրա արգասաշատ գործունեուծյունը Ներսիսյան դպրոցում, որն ուսումնարանի պատմուծյան մեջ հայտնի է որպես «Դար Ալամդարյանի»<sup>31</sup> պերճախոս բնուծյադրամբ:

Ալամդարյանի ժամանումով անմիջապես սկսվում են վարժարանի բացման նախապատրաստական աշխատանքները: Նա նախ մշակում է դպրոցի մի օրինակելի ծրագիր, որով կանոնավորվում են թե՛ ընդունելուծյան կարգն ու ուսման տեղուծյունը և թե՛ դասավանդվող առարկաների ցուցակը: Ծրագրի 12 կետերը վկայում են, որ կանոնադրուծյունը ճկուն էր, մարդասիրական և նպատակասլաց. հաշվի առնելով «յաղագս չլինելոյ յազգի մերում դպրուծյեան» հանգամանքը՝ ուսումնարանի դռները բաց էին ուծյից բարձր՝ առանց տարիքային սահմանափակման ցանկուծյուն ունեցող բոլոր հայորդիների համար: Բացի այդ՝ թեև ուսումնարուծյան ընթացքը սահմանվում էր նվազագույնը երեք, իսկ առավելագույնը տասը տարվա կրթուծյուն, այնուամենայնիվ դա չէր խոչընդոտում ուսման տարիների տեղուծյան կրճատմանը կամ ավելացմանը՝ նայած աշակերտի ընդունակուծյան ու առաջադիմուծյան ընդհանուր մակարդակի. ասել է թե՛ վերջնական նպատակը սաների՝ ուսումնարանից կրթված և խորապես հայեցի դաստիարակված հեռանալն էր:

Յուրաքանչյուր աշակերտ պարտադիր պետք է ուսումնասիրեր երեք լեզուներ՝ հայերեն, ռուսերեն և ընտրուծյամբ՝ ֆրանսերեն կամ պարսկերեն: Բավական լայն էր դասավանդվող առարկաների ցանկը՝ գրականուծյուն, ճարտասանուծյուն, տրամաբանուծյուն,

30. Նույն տեղում, էջ 75:

31. Տե՛ս Աույն տեղում, էջ 85:

թվաբանուծյուն, երկրաչափուծյուն, պատմուծյուն, աշխարհագրուծյուն, բնագիտուծյուն, աստվածաբանուծյուն...

Կանոնադրուծյունը սահմանում էր, որ ամիսը մեկ անգամ պետք է գումարվեն մանկավարժական խորհուրդներ, որոնց, բացի ուսումնարանի մանկավարժներից, կարող են մասնակցել մայրաքաղաքի ազդեցիկ, երևելի մարդիկ, նաև «բանասէր աւագ և հասարակ քահանայք», այսինքն՝ կրթուծյան գործը պետք է լինի բոլորի ուշադրուծյան կենտրոնում, և յուրաքանչյուրն իր դիտողուծյուններով ու շահեկան խորհուրդներով կարող է նպաստել դրպրոցի առաջընթացին:

Ծրագրի-կանոնադրուծյունից հետո՝ 1825-ի սկզբին, Ալամդարյանը մշակում է նաև այն հիմնական սկզբունքները, որոնցով դեկավարվելու էին վարժարանի ուսուցիչները: «Յուցակ պարտաւորուծյեանց վարժապետաց» անունը կրող այդ հրահանգներում շարադրվում են լուսավոր գործչի առաջադիմական հայացքները, որոնք հետագայում ուղենշային պիտի լինեին ոչ միայն իւ. Աբովյանի մանկավարժական բովանդակ գործունեուծյան, այլև ընդհանրապես հայ դպրոցի զարգացման ճանապարհին:

Առաջին հրահանգն ուսուցչից պահանջում էր ոչ միայն կայուն գիտելիքներ հաղորդել աշակերտներին, այլև նրանց համար լինել «խօսուուն և կենդանի օրինակ ամենայն առաքինուծյեանց և յինքեանէ քարոզեալ մարդավայել քաղաքավարուծյեան», քանի որ մատող սերունդը դյուրընկալ է «յընդունելուծյիւն ամենայն գործոց և՛ բարեաց, և՛ չարեաց»<sup>32</sup>: Ուսուցիչը պետք է «հայրագորով գթով սիրեսցէ զամենայն աշակերտեալսն ինքեան», պարտավոր է որևէ խտրուծյուն չդնել հարուստ և աղքատ աշակերտների միջև, քանի որ դպրոցի սեմից ներս մտնելով բոլորն էլ անմիջապես դառնում են նույն դպրոցի նվիրական որդեգիրները: Հմուտ մանկավարժը, սակայն, քաջ գիտակցում է, որ քաղցրուծյամբ դաստիարակել՝ ամենևին չի նշանակում ամենաթողուծյամբ զբաղվել, և պահանջում է, ինչպես Եղ. Չարենցը կասեր, պահպանել «երկաթե կոնտրոլը»: չէ՞ որ չափազանց գովեստը կամ անընդհատ պարսավանքը

32. Տե՛ս Աույն տեղում, էջ 93:

կարող են երեխային մի դեպքում նետել հանդգնություն խորխորատները, մյուս դեպքում՝ մատնել անդառնալի հուսահատության, ուրեմն անհրաժեշտ է առաջնորդվել «չընդհանուր չափառություններով»:

Ալամդարյանի հրահանգարանում աչքի է ընկնում նաև մի շատ ուշագրավ երևույթ. առաջին անգամ հայ դպրոցի (թերևս նաև ամբողջ Կովկասի) պատմության մեջ հատուկ օրհնքով արգելվում է ծեծի գործադրությունը ուսումնառության ընթացքում: «Հայհոյությունն ցուցանել զգուհակություն և զտկարություն վարժապետին՝ ի սանձահարություն ստահակութեանց համբակաց և իբրև զաննչան բռնբռն իմն թնդեալ ՚ի գործարան լսելեացն՝ ցնդի յօդս և ՚ի քթթել մի ական չքանայ. մոլորություն հայհոյեալ անվնաս մնայ ՚ի տեղոջ իւրում, և բերան վարժապետին առ փոքր սովորեալ յարտասանութիւն սոյնօրինակ անտեղութեանց՝ երբեմն և յակամայս ևս հանցէ զայսպիսիս յաններելի գայթակղութիւն ամենայն լսելեաց», – բացատրվում է «Յուցակ...»-ում, որին հետևում է կարևոր պահանջը. «Գրան և ծեծ մի՛ լիցին ՚ի դպրոցի»<sup>33</sup> (ընդգրծումն իմն է. – Ալ. Մ.): Դրա փոխարեն կարելի է բավարարվել միայն դաստիարակչական թեթև պատիժներով, ասենք, «կամ ՚ի գուճս անկեալ (ծնկի եկած. – Ալ. Մ.) ՚ի կենդրոնի դասատանն մնալ ժամս ինչ, կամ մրել գերեսս նոցա կամ արգելուլ զգնալն ՚ի ճաշ»:

Աշակերտների ծնողները ևս անմասն չպետք է մնային ուսումնական ընթացքին. նրանք ունենին կոնկրետ պարտականություններ. հատուկ այդ նպատակով ստեղծված «Պարալանդություն» (փխբ. պարտավորագիր, կաշկանդագիր) փաստաթուղթը, որի տակ պետք է ստորագրեին անխտիր բոլոր ծնողները, վերջիններից պահանջում էր ապահովել գրենական անհրաժեշտ պիտույքները, երեխաների՝ ուսումնարան անխափան հաճախելը, հիվանդության դեպքում երեք օրվա ընթացքում տեղյակ պահել ղեկավարությունը, վերակացուի կողմից աշակերտի՝ դպրոցից արտաքսելու ժամանակ անտրտունջ՝ «անբամբաս» մնալը և այլն: Նման պահանջները չկատարելու դեպքում «Պարալանդություն» սպառնում էր 50

33. Նույն տեղում, էջ 94:

ուղբի արծաթ գումարով տուգանք՝ «առաքելով զկէս գումարիս ՚ի բերդն վասն կալանաւորաց և զմիւս կէսն պահպանելով ՚ի գանձարանի իւրում ՚ի նպաստ չքաւոր աշակերտելոց»<sup>34</sup>:

Ուսուցիչն իր հերթին պետք է աչքի ընկնի բարոյական բարձր կեցվածքով, անհաղորդ մնա որևէ շահախնդրություն, իբրև լրացուցիչ վարձատրություն ոչինչ չպահանջի աշակերտից, քանի որ դա արատավոր ու անպատվաբեր երևույթ է: Այլ խնդիր է, եթե տարվա որևէ նշանակալից տոնի առիթով նրան նվեր է մատուցվում. այն ընդունելը կան մերժելը թողնվում է ուսուցչի ազնվությունը. «Եթէ ոք յաշակերտաց ՚ի նշանաւոր աւուրս ինչ տարւոյ ընծայ իմն մատուցէ վարժապետաց՝ յազնուականութիւն կամաց նորա թողցի առնուլ զայն կամ ո՛չ. այլ նոցա պահանջել ինչ՝ արգելեալ է իբրև գործ ամօթալի և հակառակ պատուոյ Հիմնադրին»<sup>35</sup>:

Ալամդարյանի հրահանգներում ուշագրավ են նաև այն հիմնական սկզբունքները, որոնք վերաբերում են բուն դասավանդման ընթացքին: Ուսուցիչը բնավ ուշացած չպետք է մտնի դասարան, «՚ի լսել զառաջին հնչիւն զանգակի՝ սկսեսցի, և ՚ի վերջնոյն՝ աւարտեսցէ», համապատասխան մատյանում աղյուսակներով պետք է ուշադիր հաշվառի աշակերտների հաճախելը և հատուկ նշումներ անի ցուցաբերած ջանասիրության կամ ծուլության մասին: Ուսուցիչը պարտավոր է յուրաքանչյուր ամիս հանրագումարի բերել աշակերտների գիտելիքները, խրախուսել արժանավորներին, «նրստուցանել ՚ի նախապատիւ տեղոջ», իսկ ծուլերին «ազգու օրինակօք պարսաւեալ նախատել»: Օգտագործելով Լազարյան ճեմարանում արդեն կիրառած իր արգասավոր փորձը՝ Ալամդարյանը «Յուցակ...»-ի «Եղանակ դասասացութեան» բաժնում հրահանգում է, որ ցանկալի արդյունքի հասնելու համար ուսումնառությունը պետք է ընթանա պարզից դեպի բարձր, աստիճան առ աստիճան, այլապես աշակերտը կարող է մատնվել անհուսություն. «...անկ է վարժապետին ընդ հարթ ճանապարհ առաջնորդել բանասէր համբակին՝ զի հոգեկան կարողութիւնը նորա իբրու թէ աս-

34. Տե՛ս նույն տեղում, էջ 92:

35. Նույն տեղում, էջ 94:

տիճան ընդ աստիճան 'ի պարզագուռնիցն 'ի բաղադրեալս և 'ի դիւրագուռնիցն 'ի դժուարինս քայլափոխեալ՝ փոքր առ փոքր ընտելասցին իւրաքանչիւրոցն, և իբր թէ անծանօթ թողլով զնոսս վեհերոտ կրից յուսահատութեան՝ ժաման առնել յեզր ուսումնական ճանապարհին»<sup>36</sup>:

Հրահանգներից մեկով՝ ուսուցիչը պարտավոր է ունենալ առանձին դասատետր (արդի եզրաբանությամբ՝ դասապլան), ուր պետք է համառոտակի գետեղվեն ուսուցանվող նյութերը, պարզաբանվեն դրանց «զամենայն մթութիւնս», հաշվի առնելով դասագրքերի խիստ պակասը՝ հանձնարարվեն աշակերտներին՝ ընդօրինակման: Չկաշկանդելով հանդերձ ուսուցիչների ստեղծագործական մոտեցումները (որոշ առարկաներ, օրինակ, կարող էին դասավանդվել աշխարհաբար)՝ արգելվում է ամենաթողությունը. վերջիններս պարտավոր են իրենց դասատետրերը «մատուցանել Հիմնադրին 'ի վերահաստեղծիւն, որպէս զի եթէ հաւանական երևեսցին՝ արձանացին 'ի տիպ 'ի վայելս նորընծայ աշակերտաց և 'ի պայծառութիւն անուան դպրոցիս և վարժապետացն»:

Ելնելով իր իսկ մանկավարժական հարուստ փորձից՝ Ալամդարյանը հրահանգում է նաև, որ առարկաների տեսական իմացություններին անհրաժեշտաբար վերընձյուղվեն գործնական աշխատանքները, գրվեն զանազան շարադրություններ, ճառեր, խրատներ, քարոզներ, հորինվեն բանաստեղծություններ, քանի որ «տեսական գիտութիւն առարկայից առանց գործնականին և գործնականն առանց տեսականին կա՛ղ է անուանեալ 'ի բանագիտաց»<sup>37</sup>:

Հրահանգներից նկատելի է դառնում, որ դրանց հեղինակը ձգտել է հաշվի առնել ուսումնառության ամբողջ գործընթացը՝ չզանցելով անգամ ամենաչնչին մանրուք: Ինչպե՞ս պիտի պահեն իրենց, օրինակ, ուսուցիչն ու աշակերտները, երբ դասարան են այցելում դպրոցի հիմնադիրը կամ արժանահարգ այլ անձինք. երբեք չընդհատել դասընթացը, այլ «յետ վայելչական եղանակաւ ընդունելութեան ողջունին»՝ այն անխափան շարունակել...

36. Նույն տեղում, էջ 100:  
37. Տե՛ս նույն տեղում, էջ 102:

Հայտնի է, որ ուսուցչի աշխատանքը, ցավոք, հանրության ընկալմամբ երբեմն չնչին է, իսկ քաղքենու աչքին՝ արհամարհելի: Հիշենք, օրինակ, հեռավոր Դորպատում ուսումնառություն ստանալուց հետո տուն դարձած Խ. Աբովյանի՝ հայագետ Մկրտիչ Էմինին 1846-ին գրած նամակի սրտամորմոք տողերը. «...Յանշուքն Երևան լաւ է ունիլ զէջ մի կամ ջորի պատրաստական, քան զամենայն գիտութիւնս հրեշտակային...»<sup>38</sup>: Գրեթե նույն մտահոգությունը դեռ Աբովյանից շատ առաջ ունեցել է նաև Ալամդարյան մանկավարժը: Այս տեսակետից հիշարժան է այն, որ վերջինս ձգտում է բարձրացնել ուսուցչի տեսակարար կշիռը հանրության հայացքում և իր հրահանգներից մեկում խոսում է նրա նյութական պաշտպանվածության մասին. «Իւրաքանչիւր վարժապետ ունի յեթնեկի ժամս 48. և տարեկան ռոճիկ այսպիսի վարժապետաց է (այսքան) դահեկան արծաթի: Բաց յայսմանէ չնորհէ նոցա ուսումնարանն զքնակարան, զփայտ, զմոմ և զսեղան: Եթէ վարժապետ ոք կամիցի զառանձին սեղան ունել՝ յաւելեալ լինի առ վերոյգրեալ գումարն 'ի ծախոյս սեղանոյ (այսքան) դահեկան արծաթի: Եթէ անբաւական գտցին վարժապետք իւրք իրօք, պարտին առանց շնչելոյ և տրտնջելոյ յայտնել զայնմանէ կամ Հիմնադրի կամ վերակացուի ուսումնարանին՝ յորոց ընկալցին կամ զբաւականութիւն և կամ զարձակումն»<sup>39</sup>:

Նորաբաց դպրոցի ուսումնառության կազմակերպման հոգսերով մտահոգված մանկավարժը, իր հրահանգներում հանգամանալից գատորոշելով աշակերտների և ուսուցիչների պարտավորությունները, «չկամենալով ընկերներին վիրավորել՝ նախադասվելով նոցանից վերակացույթյան կամ տեսչության տիտղոսով», համեստաբար լռում է այն հարաբերությունների մասին, որոնք պիտի լինեին ուսուցիչների և իր միջև, ու իրեն կոչում է լուկ վերակացու, «այն ինչ ռուսերեն՝ պաշտոնական գրությանց մեջ անվանվում էր «րեքտոր» և մի այլ տեղ հիշված է որպէս «գիրեքտոր»<sup>40</sup>:

38. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 10 (լրացուցիչ), Երևան, 1961, էջ 272:  
39. Ա. Երիցյան, Պատմություն... , էջ 103:  
40. Տե՛ս նույն տեղում:

Շնորհիվ Ալամդարյանի մեղվաջան գործունեության և Ներսես Աշտարակեցու ջանադիր մասնակցության ու աջակցության՝ Ներսիսյան դպրոցի համբավն օրըստօրե աճում է. այն հետզհետե ստանում է բարձրագույն կամ համալսարանական հաստատության հոչակ: Խոսուն է, ասենք, այն փաստը, որ 1824 թվականի դեկտեմբերի 1-ին 80 աշակերտներով պաշտոնապես բացված դըպրոցն արդեն 1826-ի մայիսին ուներ մոտ 360 աշակերտ, և եթե նախկինում այնտեղ ընդունվում էին բոլոր ցանկացողները, ապա այնուհետև պահանջվում էր գիտելիքների որոշակի պատրաստվածություն, որը դիմորդները ձեռք էին բերում մայրաքաղաքի գրագետ հոգևորականների կողմից բացված մասնավոր «չկոլաներում»: Ինչպես նկատել է Միք. Պատկանյանը, Ալամդարյանը «տավորեց մանկանց սրտումը սեր առ եկեղեցին, ազգը և կրոնը, արմատախիլ արեց նրանց միջից վատ սովորությունքը, բաց արեց նրանց մտավոր աչքը, որով սիրեցին նրանք ուսումն, ճշմարտություն և մարդկություն»<sup>41</sup>:

Լինելով Ներսիսյան դպրոցի հիմնադիր տեսուչ՝ Հ. Ալամդարյանը միաժամանակ դասավանդում էր կրոն, հայոց և ռուսաց լեզուներ ու վայելչագրություն: Աստվածաբանության և ռուսաց լեզվի մեջ նա հմտացած էր դեռևս Մոսկվայում, ուր ռուսերենից թարգմանել էր «Քրիստոնեական վարդապետություն» դասագիրքը (այն լույս տեսավ 1825-ին Թիֆլիսում), իսկ մայրենին վաղուց կատարյալ էր՝ շնորհիվ տաղանդավոր Սերովբե վարժապետ Պատկանյանի: Ինչպես հավաստում է Ալ. Երիցյանը, Ներսիսյան դպրոցի պատմության մեջ նաև առանձին ուշադրության է արժանի Ալամդարյանի ներմուծած հայերեն-ռուսերեն վայելչագրության ձևը, որը, լինելով «մաքուր, կոկիկ և վերին աստիճանի պարզ», ստանում է օրինակի ուժ և հայտնի դառնում «Ալամդարյանի ձեռք» անվամբ՝ կիրառվելով նույնիսկ նրա մահվանից մի քանի տասնամյակ հետո էլ:

Ներսիսյան դպրոցում Ալամդարյանի առաջին տաղանդաշատ

41. «Մեղու Հայաստանի», 1865, թիվ 25, էջ 199 (Միք. Պատկանյան, Ալամդարյան Հարություն վարդապետի հիշատակը):

սաներից էին Խաչատուր Աբովյանը, Առաքել Արարատյանը, Ստեփանոս Նազարյանը, Գալուստ Շերմազանյանը, Պետրոս Մադաթյանը (աշուղ Սեյադ), Հովնան Հովնանյանը (Հովնանյան դպրոցի հիմնադիրը) և այլք: Ծիշտ է, Ալամդարյանը նրանց դասավանդում էր ռուսաց լեզու, կրոն և վայելչագրություն (մյուս առարկաները գլխավորապես ուսուցանում էին Պողոս վարդապետը, Ա. Զելինսկին, պարսկաստանցի Բեթղեհեմը...), բայց ոչ մի կասկած չկա, որ չի բավարարվել միայն լեզու սովորեցնելով և սաներին տարել է դեպի գեղեցիկ խորհրդավոր աշխարհը, նրանց հոգիներում սերմանել անհուն սեր լավի ու բարու նկատմամբ, նպաստել մտավոր հասունացմանն ու հոգևոր վերածննդին: Այդ իսկ պատճառով էլ այդ ազնիվ սերմնացանի մասին համակրանքով ու հիացմունքով են խոսել նրա երախտագետ սաները և ամենից առաջ՝ Խաչատուր Աբովյանը: Չնայած երբեմնակի ի հայտ եկող փոխադարձ դժկամություններին<sup>42</sup>, որոնք այնքան բնական են մարդկային հարաբերություններում ու հատկապես դպրոցի կյանքում, Ալամդարյանի և Աբովյանի հոգևոր կապվածությունն ու երկկողմանի հիացմունքը եղել է մշտատև: Դուրս-ինչ չժխտելով Դորպատի համալսարանի կատարած էական դերը Աբովյանի՝ իբրև մի բարձր ու բացառիկ մտավորականի ձևավորման գործում՝ այնուամենայնիվ չի կարելի դանց առնել նաև Ներսիսյան դպրոցի և առաջին հերթին Ալամդարյանի խաղացած բախտորոշ դերը հայ հանճարի մտավոր հասունացման ճանապարհին: Աբովյանը, օրինակ, առաջին անգամ Ալամդարյանի միջոցով ծանոթացավ ռուս և եվրոպական գրական շարժումներին, առաջավոր գրականությունը, հիացավ Կարամզինով ու Ժուկովսկիով և հետագայում էլ թարգմանեց Կարամզինի որոշ քերթվածներ («Րայիսայ», «Կղզին Բորնհոլմ»), իսկ ռուսական ռոմանտիզմի պարագլխի՝ Ժուկովսկու հետ հաստատեց անձնական մտերմություն: «Ասիայի սրտից ես ճանաչեցի Ձեր ար-

42. Խ. Աբովյանը, օրինակ, մի առիթով դժգոհում է, որ Ալամդարյանն իրեն իր «աշակերտության ժամանակը դատն աչքով էր մտիկ տալիս և շատ վերք հասցրել ս...» (Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 6, Երևան, 1955, էջ 302:)

ժեքը: Դեռևս իմ մանկական հասակի նիրհում Ձեր անունը թուփ-  
չում էր հոգուս ամենաազնիվ հույզերն ու զգացումները»<sup>43</sup>, – խոս-  
տովանում է Աբովյանը Վ. Ժուկովսկուն 1836-ին գրած մի նամա-  
կում:

Վաստակաշատ մանկավարժի ազդեցությունը էական է եղել  
նաև մի ուրիշ խոշոր մտածողի՝ Ստեփանոս Նազարյանցի աշխար-  
հայացքի և գեղագիտական ճաշակի զարգացման վրա: Այդ հան-  
գամանքը նկատել են շատերը, որոնց թվում՝ և հմուտ քննադատ  
Նիկոլ Աղբալյանը, որը Ալամդարյանին անվանել է «տաղանդա-  
վոր բանաստեղծ», «բարեխիղճ պաշտոնյա» և «լուսամիտ դաս-  
տիարակ»<sup>44</sup>:

Ալամդարյանը ոչ միայն Ներսիսյան դպրոցի տեսուչն էր և ու-  
սումնառություն հիմնական կազմակերպիչը, այլև դպրոցին կից  
գործող տպարանի վերատեսուչը: Այդ տպարանը, որը կոչվում էր  
«Տպարան Ուսումնարանի Հայոց ընծայելիցոյ յազնուական Գէորդ-  
գայ Երեմեան Արծրունւոյ», անդրանիկն էր Թիֆլիսում և գործում  
էր դեռևս 1819-ից Վանքի առաջնորդարանում: Տպարանը դպրո-  
ցին էր նվիրել Վանից Թիֆլիս վերագաղթած Գեորգ Երեմյան  
Արծրունին, որն այն գնել էր Ամստերդամում 1817 թվականին:  
Տպագրական մամլիչներն ու տառատեսակները մի ժամանակ  
պատկանել էին նշանավոր տպագրիչներ Ոսկան Երևանցուն և  
Թովմա ու Ղուկաս Վանանդեցիներին: Սկսած 1824-1828 թթ.՝ Ա-  
լամդարյանի գլխավորությամբ այնտեղ տպագրվեց 30 անուն  
գիրք՝ 18.000 ընդհանուր տպաքանակով, այդ թվում՝ նշանավոր  
«Երախայրիք Ներսիսեան դպրոցի» ժողովածուն, որի մեջ անստո-  
րագիր գետեղվում են նաև նրա մի քանի բանաստեղծություննե-  
րը՝ «Ողբերգութիւն Իսրայելի», «Տեսիլ», «Տաղաչափութիւն»,  
«Տաղերգութիւն» և «Աղօթք»: Այդ տպարանում էր նախատեսված  
սկսել նաև մի շատ կարևոր աշխատանք՝ «Տարեգրութիւն Հայոց

գրագիտական» գուտ գիտական բովանդակությամբ եռամսյա  
հանդեսի հրատարակությունը՝ Ալամդարյանի անմիջական ղեկա-  
վարությամբ, սակայն 1826-28 թթ. ուսուսպարսկական և ապա  
1828-29 թթ. ուսուսթուրքական վերահաս պատերազմները և Աշ-  
տարակեցու, նաև Ալամդարյանի դեմ ծայր առած հալածանքները,  
ցավոք, ճախողում են այդ մտադրությունը:

\* \* \*

Ներսիսյան դպրոցում, այսպիսով, աստիճանաբար առավել  
ցայտուն են դառնում Ալամդարյան մանկավարժի, հանրային  
գործչի ու բանաստեղծի շնորհքները: Երբ սկսվում է 1826-28 թթ.  
ուսուսպարսկական պատերազմը, նա Ներսես Աշտարակեցու հետ  
միասին եռանդուն մասնակցում է հայ կամավորական առաջին ջո-  
կատների («Հայ գործի») ստեղծմանը, ուր ընդգրկվում են նաև  
Ներսիսյան դպրոցի տասնյակ հայրենասեր սաներ: Ինչպես հետա-  
գայում ի՞նչ Աբովյանը, Ալամդարյանը ևս խորապես գիտակցում է  
Ռուսաստանի դրական դերը Հայոց կյանքում, հասկանում, որ  
միայն «Հյուսիսի տիրակալը» շարունակ բզկտվող փոքր ազգին  
կարող է փրկել Ֆիզիկական բնաջնջումից և բացել հույսի նոր հո-  
րիզոններ: 1827 թ. ապրիլի 2-ին Ներսես Աշտարակեցին փութով  
մեկնում է պատերազմի դաշտ՝ Ալամդարյանին թողնելով իրեն փո-  
խանորդ հոգևոր և աշխարհիկ բոլոր գործերում: Հայոց գնդի կազ-  
մակերպման վերջին պատրաստությունների համար ստեղծվում է  
Հատուկ Հանձնաժողով՝ նախագահությամբ Թիֆլիսի զինվորական  
նահանգապետ գեներալ-ադյուտանտ Սիպյազինի և անդամակցու-  
թյամբ Հարություն Ալամդարյանի ու մայրաքաղաքի մի քանի  
երեկելի անձանց: Երբ 1827-ի մայիսի 15-ին Թիֆլիսի՝ Մուղղու Ս.  
Գևորգ եկեղեցու բակում «ինքնակամ գունդն զինվորության հա-  
յոց» երգվում է՝ հավատարիմ մնալու կայսերը և հայրենիքին, Ա-  
լամդարյանն այնտեղ հանդես է գալիս մի ազդեցիկ ճառով, բա-  
ցատրում առաջիկա ճակատամարտերի պատմական մեծ խորհուր-

43. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 10  
(լրացուցիչ), էջ 191:

44. Տե՛ս Ն. Աղբալյան, Գրական-քննադատական երկեր, Պետրոս, 1959,  
էջ 136:



դը և օրհնում հայկական դրոշակը. «Անցանէ ահա դարն հինգերորդ, ո՛վ որքը Հայաստանի, յորմէ հետէ գրկեալ կամք ի թագաւորութենէ, ի հայրենեաց և յամենայն ժառանգութեանց նախնեաց մերոց. հեծեմք ընդ ծանր լծով Քրիստոսատեաց պարսից, վշտացեալ, թախծեալ ընդ անրով ծառայութեան այսոցիկ բարբարոսաց, զի կողոպտեցին սոքա ի մէնջ ոչ զարտաքին ստացուածս և եթ, այլ յաւար հարին և զբարոյական և զքնատուր ձիրս Հայկազանցս:

Մեր ստուերք եմք մերոց նախահարց, չեմք ժառանգորդք արութեանց նոցա և առաքինութեանց, այլ ուրուական նոցա: Յառեցէք զակն ձեր ի հայրենի պատմագրութիւն՝ գծագրեալս արիւնազարդ տառիւք և հաւատաաջիք յայս դառնապէս ճշմարտութեան: Յանցանք մեր զինեցին ի վերայ մեր զվրէժխնդիր աջն արդարադատութեան Երկնից և ընկերացին զվատաբախտն Հայաստան ի վերայ չքութեան: ... Եւ ահա՛ ձայն Աստուծոյ, ձայն Թագաւորի կոչեն զձեզ, հօտ փոքրիկ, յասպարէզ փառաց և առաքինութեան: Արիացէ՛ք և դիմեցէ՛ք յայն հսկայօրէն քայլարկութեամբ:

... Դրօշակդ այդ, որ այսօր վերակարգալով զահաւոր անուն Տեառն սրբազանս և տուաւ գնդի ձերոյ, է առհաւատչեաց սիրոյ Աստուծոյ և Օծելոյ Նորա առ ձեզ: Պահեցէք զայս անգին աւանդ իբրև զբիւր ական: Ահաւասիկ ամաչեսցեն և պատկառեսցեն ամենայն հակառակորդք ձեր և եղիցին իբրև զչեղեալս և կորիցեն ամենայն դատախազք ձեր: Լուիցէ ձեզ Տէր յաւուր անձկութեան, օգնական եղիցի ձեզ յանուն Աստուծոյ Յակովբայ: Ամէն»<sup>45</sup>:

1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանն ազատագրվում է պարսիկներից: Պատմական այս իրադարձությունը՝ «ամենասիրելի հայրենեաց» փրկությունը «յերկաթի հնոցէ պարսկական բռնութեանց», Ալամդարյանը գնահատում է որպէս «դարագլուխ ազատութեան և երանութեան մերոց ապագայից» ու նոր եռանդով շարունակում իր արգասաբեր գործունեությունը թե՛ Ներսիսյան դպրոցում և թե՛ հոգևոր կառավարության հետ կապված խնդիրներում: Պատերազմի ավարտից հետո, սակայն, Ներսես Աշտարակեցու և նրա

45. Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Մասն Ա (1800-1832 թ.), Թիֆլիս, 1894, էջ 273-247:

համակիրների, մասնավորապես Ալամդարյանի համար սկսվում են դժնդակ օրեր: Կովկասի կուսակալ Պասկևիչը, կամենալով ընկճել հայոց ազատասիրական ոգին ու հասկանալով Աշտարակեցու և Ալամդարյանի վայելած մեծ ժողովրդականությունն ու նրանց ձգտումները՝ հոգ տանելու հայրենի ժողովրդի ապահովությանը, ամեն կերպ պահպանելու հայ հոգևոր ու կրթամշակութային հաստատությունների ինքնուրույնությունը, շուտով ասպարեզից հեռացնում է նրանց: Կուսակալը Պետերբուրգ՝ կոմս Դիրբիչին հղած նամակում գրում է. «Ձեմ ծածկում ձեզանից և իմ արած սխալներս, որոնցից մեկն էլ այն է, որ Երևանի նվաճելուց հետո Ներսեսին ես մասնակից արի այս երկրի վարչության մեջ: Բայց ես երբեք չէի կարծիլ, թե այս արքեպիսկոպոսը, որ ամեն բանում ջերմեռանդություն էր ցույց տալիս, հանձն է առել յուր պաշտոնը միմիայն այն նպատակով, որ յուր բոլոր հոգատարությունը գործ դնե բացառապես հայոց համար և, հոգ չտանելով պետական շահերի մասին, ավելի նախադասե Հայոց հոգևորականության և մանավանդ էջմիածնի վանքի շահերը»<sup>46</sup>:

1828-ի օգոստոսի 6-ին Աշտարակեցին Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց հոգևոր թեմի պաշտոնով ուղարկվում է Քիչնև: Սրբազանը սկզբում կարծում էր, թե իր՝ այնտեղ մեկնելը ոռուսթուրքական պատերազմի օրերին կարևորություն ունի տերության համար, և անհրաժեշտ է իր աջակցությունը Բեսարաբիայում, իսկ հետո ցավով հասկանում է, որ դա մի յուրօրինակ աքսոր է: Այդ հանգամանքն ըմբռնում են նաև ժամանակակիցները: «Ամենքին հայտնի էր, — գրում է Ալ. Երիցյանը, — որ երեկվա հզորագույն Արհին այսօր Պասկևիչի կամքով աքսոր է գնում: Սարսափ տիրեց Ներսեսի բարեկամաց և համակրողների վրա, որոց անունները ոստիկանության ձեռքով արդեն գաղտնի ցուցակագրվում էր: Հազիվ Ներսեսը Թիֆլիզից ոտքը դուրս դրեց, որ Ուսումնարանի վարժապետները վախից հրաժարվեցին շարունակելու յուրյանց պաշտոնները... Օգոստոսի 8-ին հարկ եղավ փակել ուսումնարանը»<sup>47</sup>:

46. Նույն տեղում, էջ 350:

47. Ա. Երիցյան, Պատմություն... , էջ 168:



Ալամդարյանի, Բզնունի Սիմեոն արքեպիսկոպոսի և Գեորգ Արծրունու գերագույն ջանքերով դպրոցը վերաբացվում է 20 օր հետո, իսկ այնուհետև Հաչվի առնելով Պասկեիչի և Շահան-Ջրպետյանի մտերմական հարաբերությունները (վերջինս հանուն անձնական բարեկեցության աստիճանաբար դառնում է թուևդ հակա-ներսեսական և քիչ անց բազում հոգսեր է պատճառում ուսումնարանի կառավարության անդամներին)<sup>48</sup> 1828-ի սեպտեմբերին դպրոցի տեսուչ է նշանակվում Ջրպետը: Ծեր, ծուլ, հիվանդոտ և անուղղելի շահախնդիր<sup>49</sup> նոր տեսչի պաշտոնավարության մի քանի ամիսների ընթացքում կտրուկ նվազում է աշակերտների թիվը (400-ից իջնում է 180-ի), ընկնում առաջադիմությունը, և 1829-ի հունվարի 1-ից Ալամդարյանը վերստին ստանձնում է տեսչի պարտականությունները:

1829 թ. հունիսի 6-ին Հայաստան՝ դեպի Արարատ ուղևորվելու ճանապարհին Թիֆլիս է ժամանում Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը: Վերջինս մի քանի հանդիպումներ է ունենում Հ. Ալամդարյանի հետ, ունկնդրում նրա խորհուրդներն ու հանձնարարական նամակ վերցնում էջմիածնի վանքի կառավարչի՝ Հովսեփ Տեր-Մարուքյանի անունով՝ իրեն այնտեղ աջակցելու և սատար կանգնելու համար: Գուցե և Ալամդարյանը Պարրոտին պատմել է Աբովյանի մասին, գովել նրա չնորհները և խորհուրդ տվել բիբլիական լեռան բարձունքները հաղթահարելու ճանապարհին վերջինիս իբրև ուղեկից և թարգման վերցնել: Դրվածք է պնդել: Բայց այն բարձր տպավորությունը, որ ստացել

48. Հակոբ Ծախան-Ջրպետյանը, օգտվելով Ներսես Աշտարակեցու բացակայությունից, շարունակ պահանջում է բարձրացնել իր աշխատավարձը (դա նրան հաճախ հաջողվում է) և հետո բողոքագիր ներկայացնում Պասկեիչին՝ պնդելով, որ ուսումնարանն իրեն պարտք է մի պատկանելի գումար: Երկար բանակցություններից հետո բավարարվում է Ջրպետի պահանջը՝ պայմանով, որ «հրամայվի Ջրպետին դուրս գնալ Ուսումնարանի շինությունից»: Ստանալով գումարը և միևնույն անգամ կառքի փողը, որով նա իբր Փարիզ պետք է վերադառնար, Ջրպետը ընդմիջտ մնում է Թիֆլիսում և Աշտարակեցու դեմ կուսակալի մատուցած ծառայությունների համար արքունի գանձարանից ցմահ ստանում 500 ոտլի թոշակ (Տե՛ս նույն տեղում, էջ 175-190):

էր Պարրոտն Ալամդարյանից, անկասկած է ու փաստված: Պարրոտն իր «Ուղևորություն դեպի Արարատ» («Reise zum Ararat») գրքում, որը թարգմանել է Խ. Աբովյանը, Ալամդարյանին անվանել է «առն պատուական՝ որ ջանայ լուսաւորել զագգ իւր, և որոյ երախտիք մեծ են ի մասի այսորիկ, զի նա միայն կառավարէ զգալրոցն Հայոց ի Թիֆլիզ... որոյ գուարթ և զգօնաւոր տեսիլ, որպէս և համեստ վարումն քաղցրութեամբ տպաւորեցաւ յիս»<sup>49</sup>:

Լինելով «սրտաբեկեալ կամ և տարակուսեալ», շրջելով և խոսելով «իբրև յերագի»՝ Ալամդարյանը քաջ գիտակցում էր, որ ստեղծված կացության մեջ այլևս անհնար է Թիֆլիսում իր մնալը և շարունակ հորդորում է Աշտարակեցուն՝ հաղորդեցնելու իր տեղափոխումը Քիչնև, էջմիածին կամ Հաղպատ... Սրբազանն իր հերթին նույնպես մտահոգ էր փրկելու Ալամդարյանին այդ մթնոլորտից և հավանաբար սպասում էր հարմար պահի: Մինչ այդ, սև ամպերն ավելի էին կուտակվում լուսավոր գործչի շուրջը: Ալամդարյանի թշնամիները, որոնք նրան կոչում էին «շարունակություն Ներսեսի», Պասկեիչի գլխավորությամբ մանր ու մեծ որոգայթներ են լարում հայրենասեր ու ազնիվ մարդու դեմ, մինչև իսկ նրանից պահանջում Ներսես Աշտարակեցու 14 տարվա առաջնորդության և ուսումնարանի կառուցման բոլոր հաշիվները՝ լավ իմանալով, որ վերջինը թեմի դրամական գործերում նշանակված էր «միայն հաշվատես և ոչ թե հաշվապահ»: Ալամդարյանի նկատմամբ երկդիմի էր նաև էջմիածնի միաբանության բռնած դիրքը: Շարունակաբար իր շուրջ ստեղծվող դավերից չի թափափար Եփրեմ կաթողիկոսը, որը միշտ էլ համակրել էր Ալամդարյանին, այլևս ի վիճակի չէր իր պաշտպանության տակ վերցնելու նրան, քանի որ չափազանց երերուն էր նաև իր դիրքը (որոշ ժամանակ անց նա հրաժարվում է կաթողիկոսությունից), իսկ ապագա կաթողիկոս Հովհաննես Կարբեցին, արտաքուստ գնահատելով Ալամդարյանի վաստակը, անգամ նրան անվանելով «ոսկի սյուն», ներքուստ ատում էր նրան՝ «Ալամդարյանը կոչելով դեղ մահու աբրուցեալ ի-

49. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 7, Երևան, 1956, էջ 191:

ցէ նմա»<sup>50</sup> իր հին հաշիվներն ունենալով Աշտարակեցու դեմ: Եվ էջմիածնի Սինոդը 1830 թ. հունվարին որոշում է Ալամդարյանին ուղարկել մի յուրօրինակ աքսոր՝ Հաղպատ, ուր և նա մեկնում է նույն թվականի հոկտեմբերին:

Այսպես, ահա, ավարտվում է Հ. Ալամդարյանի գործունեությունը թե՛ Լազարյան ճեմարանում և թե՛ Ներսիսյան դպրոցում: Երկու դեպքում էլ ակնառու է, որ հայրենի երկրի լուսավոր գավազը, իր կյանքի լավագույն տարիներին կրելով բարոյական, հոգեբանական ու նյութական անլուր զրկանքներ ու հալածանքներ, հայ սերունդներին անդուլտորեն առաջնորդում էր դեպի կրթության ու գիտության, գեղեցիկի խորհրդավոր աշխարհը: «Այդ դըպրոցներն էին մեզ կյանքի հրավիրողները. — նկատում է Լեոն, — այդ դպրոցներից էր, որ հայի խավար հորիզոնի վրա էլ բացվեց գարնանային առավոտը: Դրանք երկվորյակներ էին, միատեսակ էին մտածում, գործում: Երկուսի դավանանքը միևնույն էր, երկուսն էլ միևնույն ճանապարհով էին ընթանում»<sup>51</sup>:

\* \* \*

Ալամդարյանը Հաղպատ է հասնում հոգեպես ու ֆիզիկապես բզկտված: Մինչ այդ, երբ Թիֆլիսից մեկնել էր էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսի կողմից եպիսկոպոս ձեռնադրվելու, ու հանդիպել Մայր աթոռում ստեղծված խարդավանքների թունալից մթնոլորտին, ու այդպիսով ձախողվել էր հոգևոր բարձրաստիճան կոչում ստանալու ձեռնարկը, արդեն վարակված էր խոլերայով: Էջմիածնում ծանրանում է նրա վիճակը, տեղափոխում են Երևանի հիվանդանոց, որից հետո դեռ լրիվ չապաքինված՝ վերստին գալիս է էջմիածին ու այնտեղից մեկնում Հաղպատի Ս. Նշան վանք: Աքսո-

50. Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցվի անցքերը սկիզբեմ մինչև մեր օրերը հարակից ազգային պարագաներով պատմված, Գ. հատոր, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 4166 («Հարություն Ալամդարյան»):

51. Լեոն, Ստեփանոս Նազարյանց, I հատոր, Թիֆլիս, 1902, էջ 33:

րավայրում հալածական գործիչն ապրում է հոգեկան ու ֆիզիկական հոշոտումներ՝ նորից հայտնվելով կյանքի ու մահվան սահմանագծում: Պատմում են, որ այստեղ նրան օգնում ու խնամում է Հաղպատի և Սանահինի վանքերի մի սարկավազ, որ «մարդասիրաբար կ'երթևեկե Ալամդարյանցի քով, և գթալով հիվանդ Վարդապետին վրա, յուրովսանն կը ծառայե և կը սատարե»<sup>52</sup>: Խոլերան ի վերջո տեղի է տալիս ամրապինդ երիտասարդի կազմվածքի առջև. ապաքինվում է բանաստեղծը, և 1831-ի ապրիլի 27-ին ծնվում է հայ նոր քնարերգության գարունն ազդարարող առաջին գործերից մեկը՝ Ալամդարյանի «Գարունը» («Յամասվերջն ապրիլի զպատուհանս բացի») կյանքի ու բնության վերածննդի սրտառուչ երգը՝ այնքան հոգեհարազատ Աբովյանի համանուն բանաստեղծությանը (1831, ապրիլի 4):

Հեռավոր Քիչնեից Ներսես Աշտարակեցին հարազատի սիրով հետևում էր իր սիրելի բարեկամի ճակատագրին, բազմաթիվ նամակներով խրախույս ու հորդորներ տալիս Ալամդարյանին՝ դիմազրավելու ժամանակավոր դժվարություններին, մինչև ինքը կհաջողեցներ նրա տեղափոխումը Քիչնե: Եվ ահա 1831-ի ամռանը օտար դավանանքների նախարար Դ. Բլուզովը հարգում է Ալամդարյանին Քիչնե ուղարկելու Աշտարակեցու խնդրանքը, և նույն թվականի հունիսի վերջերին Ալամդարյանը մեկնում է այնտեղ: Չափազանց հուզիչ ու ազդեցիկ է եղել Աշտարակեցու և Ալամդարյանի հանդիպումը. «բազմարդին բազմութեանց մանկանց հայրենակցաց հարիւրաւորաց» ուսուցիչը բազում չարչարանքներից հետո նորից իր հոգևոր հոր գրկում էր, հուսալի ձեռքերում: Ահա ինչպես է նկարագրել նրանց հանդիպումը ակնառեսը՝ Գաբրիել Պատկանյանը. «Աչք պետք է տեսներ Ներսես սրբազանի և Հարունթյուն վարդապետի հանդիպման տեսարանը, որ պատահեցավ Գրիգորիպոլիս: Ոչ մեկ կարոտակեզ մայր, յուր բազմաժամանակյա հեռավորությամբ անկեցյալ որդվույն չէ կարող նույնպես ցույց տալ յուր մայրական գորովը, ինչպես Ներսես արհիւ ցույց տվեց կենդանի նահատակ Հարունթյուն վարդապետին»<sup>53</sup>:

52. Ա. Այվազյան, Ծար հայ կենսագրությանց, էջ 136:

53. Տե՛ս Է. Գևորգյան, Հարություն Ալամդարյան, էջ 99:

Ալամդարյանը, սակայն, այնտեղ էլ հանգստություն չի գտնում. կասկածամիտ ու քմահաճ Ն. Աշտարակեցին քիչ անց նրանից մանրակրկիտ հաշիվ է պահանջում Ներսիսյան դպրոցի դրամական գործերի մասին և մնում անբավարար, քանի որ նախկին տեսչի ձեռքին գտնվում էր հաշվեթղթերի միայն մի մասը: Թերևս այդ էր պատճառը, որ Ալամդարյանը Քիչնեում երկար չի մնում. Ներսես Աշտարակեցու հրամանով 1833-ի հունիսի 8-ին մեկնում է Նոր Նախիջևան՝ որպես Ս. Խաչ վանքի ժամանակավոր վանահայր:

Նորնախիջևանյան միջավայրում սկսվում է վաստակած ուսուցչի և հանրային ու կրոնական գործչի կյանքի մի նոր, ցավոք, վերջին շրջանը: Նա ուներ լուրջ և հիմնավոր մտադրություններ հայկական այդ գաղթօջախի ոչ միայն կրթամշակութային ու առհասարակ լուսավորական կյանքի, այլ նաև սոցիալական վիճակի բարելավման ասպարեզում: Ալամդարյանը հաճախ է դիմում քաղաքագլուխ Հարություն Խալիպյանի օժանդակությանը՝ սատար կանգնելու ժողովրդի ընչազուրկ խավերին, և համառ ջանքերով ստեղծում է փոխօգնության մի կոմիտե ու հնարավորինս մեղմում կարոտյալների զրկանքները: «Տիրխիսցիք երանի էին տալիս նոր նախիջևանցուց, որ այսպիսի գործունյա մարդը նոցա վիճակվեցավ»<sup>54</sup>, – հիշում է Գաբրիել Պատկանյանը:

Ալամդարյանը ծրագրում է քաղաքում մի մեծ դպրոց հիմնադրել և այդ նպատակով սկսում է ուսուցիչների ու աշակերտների հավաքագրման նախնական աշխատանքները: Ժամանակակիցները հավաստում են, որ նա վանքն արագորեն դուրս է բերում տգիտության ճիրաններից, կրթում հոգևորականներին, ուսուցանում նաև քաղաքից հատուկ իր մոտ եկող բազմաթիվ աշակերտների: Ժամանակակիցներից մեկը՝ Հակոբ Շատիրյանը, որն այդ ժամանակ 14-15 տարեկան տղա էր և ապրում էր Ս. Խաչ վանքում, հետագայում՝ արդեն առաջացած տարիքում, երբ Նոր Նախիջևանի Ս. Գևորգ եկեղեցու քահանան էր, պատմել է Նրվանդ Շահազիզին. «Մկրտիչ վարդապետն ուսյալ մարդ չէր. նրանից շատ բան չէր կա-

54. Նույն տեղում, էջ 104:

րելի սովորել, իսկ, ընդհակառակը, Ալամդարյանը մեծ ուսում ուներ և լավ վարժապետ էր: Ես առանձին ուսում չեմ ստացել, դըպրոց, ուսումնարան չեմ գնացել, բայց իմ այժմյան ունեցած քահանայական գիտությունս նրանից եմ ձեռք բերել: Նա, բացի հայոց լեզվից, լավ գիտեր և ուսուց լեզուն. քաղաքից աշակերտներ էին գալիս նրանից քերականություն սովորելու. շատ անգամ էլ նա ուղղում էր Մկրտիչ վարդապետի ուսուցիչներին գրությունները»<sup>55</sup>:

Համբավավոր մանկավարժը Նոր Նախիջևանում ուներ համակիրների լայն շրջանակ, բայց հոգեկան անդորրը գտնում էր հատկապես Պատկանյանների ասպնջական օջախում: Հայ կրթությունն ու մշակույթին մեծ ծառայություններ մատուցած այս նշանավոր գերդաստանն էլ իր հերթին ջանում էր մխիթարել օտարության մեջ գտնվող լուսավոր գործչին: Գաբրիել Պատկանյանը պատմում է, որ իր որդին՝ մանկահասակ Ռափուշը (որ հետագայում պետք է դառնար Գամառ-Քաթիպա՝ Ռափայել Պատկանյան), մի առանձին սիրով էր կապված Ալամդարյանին և միշտ լաց էր լինում նրա հետևից: Շուտով Պատկանյանների գերդաստանում հայտնվում է 14-ամյա մի գեղանի նորահարս՝ Ալամդարյանի Աննա դուստրը, որը կնություն էր եկել Ռափայել Պատկանյանի փոքր հորեղբորը՝ տիրացու Պետրոսին: Այդ ամուսնությունից էլ ծնվում է Քերովբեն՝ հետագայում Պետերբուրգի համալսարանի նշանավոր արևելագետը, որը մայրական կողմից պապի՝ Հարություն Ալամդարյանի վախճանվելուց ուղիղ 50 տարի հետո՝ 1884-ին, Պետերբուրգում հրատարակում է նրա «Չափաբերականք» բանաստեղծությունների ժողովածուն:

Ալամդարյանի գործունեության նորնախիջևանյան շրջանը ցավալիորեն կարճ է տևում: «1834 թվականը, – պատմում է ակնաստեսը, – մի անհանգիստ տարի էր նախիջևանցոց համար: Օր չէր անցնում, որ մի անբախտություն չպատահեր: Մեկ օր լսում էինք, թե այսինչ մարդու տունն են մտել, մյուս օրը՝ թե այսինչ աղայի թանկագին ձիերն են տարել, կամ խանութն են կտրել, կամ մարդ

55. Եր. Ծահագիզ, Հիշողություններ և դիմաստվերներ, Երևան, 1980, էջ 214 («Հարություն վարդապետ Ալամդարյան»):

են սպանել և այլն, և այլն»<sup>56</sup>: Հենց այդ խառնակ ժամանակներում՝ նույն թվականի մայիսի 6-ի լույս 7-ի գիշերը, մի խումբ ավազակներ կողոպուտի նպատակով ներխուժում են Ս. Խաչի բակում գտնվող հոգևորականների կացարանները, այդ թվում՝ նաև Ալամդարյանի առանձնասենյակը և մահացու վիրավորում նրան: Այդ ողբերգական գիշերվա մասին Հ. Շատվորյանը վկայում է. «Մեր սենյակում ամեն բան վերջացնելուց հետո, նրանք դիմեցին դեպի Ալամդարյանի սենյակը, և մենք աղաղակի ու լացի ձայն լսեցինք: Հետո մենք Հարուժյուլուից իմացանք, որ ավազակները մտնելով վարդապետի սենյակը, նախ կապում են նրա՝ Հարուժյուլուի ձեռքերը և սաստում են, որ աղաղակ չբարձրացնի: Այդ ձայներից զարթնում է Ալամդարյանը և հարցնում. «Ո՞րք են և ի՞նչ են ուզում»: Ավազակներից երեք հոգի հարձակվում են նրա վրա, բայց նա այնպես ուժգին զարկում է նրանց կրծքին, որ նրանք հետ-հետ գնալով՝ վայր են ընկնում և մեկի ուշքը գնում է. նրանք թողնելով վարդապետին, սկսում են ուշքի բերել իրենց ընկերոջը և վազում են ջրի: Այդ ժամանակ վարդապետը մոտենում է, որ փակի դուռը և չթողնի նրանց նորից սենյակ մտնելու, բայց ավազակները հենց այդ ժամանակ զարկում են նրա ձեռին ու գլխին և մահամերձ վիրավորելով՝ մեջքի վրա վայր են ձգում դռան առաջ: Այնուհետև նրանք կոտորում են նրա արկղները, քրքրում են բոլոր սենյակը, բայց փող չգտնելով՝ առնում են նրա մուշտակները, մետաքսե շորերը... Մինչ այժմ ես շատ լավ հիշում եմ նրա սենյակի դրուժյուլունը՝ կոտրած արկղները, քրքրված գրքերը, շորերը և արյան մեծ լճակը, որ լերդացել էր, մակարդվել և ստացել ճիշտ այն ձևը, որ ունենում է մեջքի վրա պառկած մարդը: Ալամդարյանը լուռ, անխոս պառկած էր անկողնում, նա գլուխը դրել էր վիրավորված ձեռքի վրա և կարծես նիրհում էր»<sup>57</sup>: Իսկ տառապանքները շարունակվեցին 15 օր:

Նորնախիջևանցի, Լազարյան ճեմարանի շրջանավարտ Աստվածատուր Խաղամյանը ազդեցիկ մանրամասներ է հաղորդել Ա-

56. Նույն տեղում:

57. Նույն տեղում, էջ 216-217:

լամդարյանի կյանքի այդ վերջին օրերի մասին, երբ մահամերձն անլուր տանջանքների մեջ էր: «Թէպէտ վէրք գլխուս և աւելի են և սաստիկ, սակայն վէրք ձեռացս այնպիսի իմն անտանելի և անմուռանալի ցաւ են, որք մոռանալ տան ինձ զգլխոյ վէրս, որովհետև բոլոր կեանք, բոլոր պարծանք, բոլոր ապրուստ վարդապետի, նոյնպէս և ամենայն մարդկան ձեռք են, իսկ առանց ձեռաց զի՞նչ իցէ կեանք մարդոյ...»<sup>58</sup>, – բողոքում էր կարեւոր խոցված մտածողը: Նա գիտակցում էր, որ մոտ է վախճանը, և ափսոսում էր իր անավարտ ծրագրերի ու նվիրական երազների համար, խնդրում սատար կանգնել իր մերձավորներին.

«– Ափսոս քեզ, Յարուժիւն վարդապետ, որ վաղ թառամելոց ես, կեանքդ քո և ծառայութիւն դեռ պէտք էին եկեղեցւոյն Հայաստանի: ... Բայց վերջին իմ խնդիրս այս է ի ձէնջ, սիրելի եղբարք, ահաւասիկ գոյ իմ յայսմ քաղաքի մի դուստր, մի փեսայ և մի աշակերտ: Խնդրեմ ի ձէնջ, մի՛ թողուք գնոսա անմխիթար և անտէր»<sup>59</sup>:

Այդ օրերին նա շրջապատված էր հոգատար ու սրտացավ մարդկանցով, սակայն ո՛չ Աննա դստեր ծայրահեղ հոգացողությունը, ո՛չ քաղաքագլխի՝ Հարուժյուլու Խալիպյանի սրտացավ վերաբերմունքն ու ուշադրությունը և ո՛չ էլ լավագույն բժիշկների դեղահամբերը չկարողացան փրկել ուժերի ծաղկման շրջանում գտնվող երիտասարդին: «Շուտ հասավ այս դառը համբավը Սրբազան Ներսիսի, Վեհազնյա Լազարյանց և Թիֆլիզու ազգասիրաց ականջները. ամեն լսողը արտասովեցին, ափսոսացին և եղուկ կարդացին ազգի անհաջողության վրա: Մոսկվայեն, Պետերբուրգեն, Օդեսսայեն, Աստրախսանեն, Ղզլարեն, Թիֆլիզեն, Հայաստանեն և այլ տեղերեն՝ փութացան եղբայրասեր և մարդասեր Հայերը ճարտար վիրաբույժներ ուղարկել դեպի Նախիջևան այն երեւելի վիրավորին օգնության. բայց նոքա չհասան նորա կենդանության»<sup>60</sup>, – ցավով հիշում է Գ. Պատկանյանը: Եվ նա մայիսի 24-ին կնքեց իր մահկանացուն:

58. Նույն տեղում, էջ 220:

59. Նույն տեղում, էջ 219, 221:

60. «Հյուսիս», 1863, թիվ 2, էջ 12:

Տեղի է ունենում աննախադեպ հանդիսավոր թաղում. մարմինը օծում, պատարագ է տալիս ու մի զգայացունց դամբանական կարդում Ղրիմի թեմակալ Թադեոս վարդապետը, սգահանդերձ հոգևորականությունը Նոր Նախիջևանի Լուսավորիչ մայր եկեղեցուց մինչև քաղաքից դուրս դադաղը տանում է ուսերի վրա, իսկ բազմահազար մարդիկ մինչև Ս. Խաչ յոթ վերստ ճանապարհն անցնում են ոտքով՝ ի պատիվ հանգուցյալի: Ալամդարյանի մարմինն ամփոփվում է Ս. Խաչ եկեղեցու գավթում՝ աջակողմյան դռան մոտ, ուր հետագայում իրենց հավերժական հանգիստն էին գտնելու նաև հայոց արժանավոր զավակներ Միքայել Նալբանդյանն ու Ռաֆայել Պատկանյանը:

Ալամդարյանի ողբերգական մահը ցնցեց հայ գաղթօջախներին, բոլոր հասավ նաև հեռավոր Դորպատ: «Հարուժյուն վարդապետի Ալամդարյան՝ իմ բազմերախտ վարժապետի հանկարծաս մահվան դառն խաբարն, որ ի 21-ին նոյեմբերի 1834-ին ստացա, այնպես տրտմեցուց, շփոթյաց իմ սիրտն, որ ես անհանգիստ գոլով, մեկ բանի էլա չէի կարողանում ձեռք տալ: Ա՛խ, նրանով մեր ազգի շատ երիտասարդքն կորցրին իրանց բախտը: Նա շատին կարեր լուսավորիչ լինիլ»<sup>61</sup>, – մղկտացող սրտով օրագրում գրառում է Խ. Աբովյանը:

Նրա գերեզմանին այցելության են գնացել շատերը, այդ թվում՝ և Ներսես Աշտարակեցին, որը 1845-ին Պետերբուրգից վերադառնալու ճանապարհին մեկնել է Ս. Խաչ, խոնարհվել է Ալամդարյանի գերեզմանին և բացականչել.

«– Հարուժյուն վարդապետ, եթե դու ողջ լինեիր, ես իմ ձեռքով կօծեի քեզ կաթողիկոս»<sup>62</sup>:

Այսպես, ահա, կանգ է առնում 41-ամյա լուսավորչի արգասավոր, բայց տառապալից կյանքը, մարդու, որը, ինչպես ցավով գրել է Բաֆֆին, «յուր կյանքի մեծ մասը անցրուց աքսորականքներում մեր եկեղեցիականների աններողամտությունից»<sup>63</sup>: Ավարտվում է

61. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 6, էջ 302:

62. Եր. Շահազիզ, Հիշողություններ և դիմաստվերներ, էջ 222:

63. Տե՛ս Բաֆֆի, «Խավարի արբանյակները», Երկերի ժող. տասներկու հատորով, հ. 10, Երևան, 1991, էջ 283:

մի մարդու կյանքը, որի «վարքն էր, – ինչպես հիշում է Գ. Պատկանյանը, – յուր ենթադրելոց հայելի և օրինակ, յուր ընթացքը՝ ուղղության խրատ: Արբեցողին չէր ասեր՝ մի՛ հարբիր, կամ ծուլ լին՝ թե արիացի՛ր. ինքը ժուժկալ, լուրջ, սթափ, օղիեն և գինիեն հեռու, գործին արի և ջանադիր, ամենքի աչքի մեջ էր, և նորա բարի օրինակը շարժում էր այլոց՝ հետևիլ նորան»<sup>64</sup>:

Եվ հայրենի ժողովրդի այդ ազնիվ զավակի ու մեծ նահատակի կյանքն ու ստեղծագործությունը այսօր էլ՝ երրորդ հազարամյակում, դեռ հուզում են հայ սերունդներին, և զրույցը նրա շուրջ շարունակվում է:

64. «Հյուսիս», 1863, թիվ 1, էջ 6:

## ԳԼՈՒԽ II

### ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

19-րդ դարի առաջին երեսնամյակի հայոց գրաբարալեզու բանաստեղծության մեջ, ինչպես արդեն նկատել ենք, գերակայող էին կրոնաբարոյախոսական և պատմահայրենասիրական տրամադրություններն ու բառարանային մարզանքների արդյունք՝ հոգևոր կամ աշխարհիկ պետերին ձոնված վերամբարձ ներբողյանները: Գրական ապաշնորհներ չէին, անշուշտ, դրանց հեղինակները (Աբրահամ Աստաբատցի վարդապետը, կեսարացի Գրիգոր Գապասախալյանը, Վենետիկի Մխիթարյաններից՝ Ղուկաս Ինճիճյանը, Գաբրիել Ավետիքյանը, Մանուել Ջախճախյանը, Եղիա Թովմաճյանը, Արսեն Բագրատունին, Ներսիսյան դպրոցի սաներից՝ Դավիթ Օղաբաշյանը, Թեոդորոս Խաղամյանը, Մովսես Հարությունյան-Վարդանյանցը, Լազարյան ճեմարանի որոշ աշակերտներ)։ նրանց մեջ կային տաղանդաշատ մարդիկ, լրջմիտ հայկաբաններ, և յուրաքանչյուրն ուժերի ներածի չափ հյուսում էր հեռուներում՝ մշուշների մեջ կորած հայ հայրենիքի կամ նրա ազնիվ ու քաջ նահատակների գեղարվեստական պատմությունը: Նրանց միավորում էին հայրենի եզերքի, հայրենասիրության, կրոնի ու եկեղեցու հայկական գաղափարաբանության շեշտադրումները և համագգային գիտակցությունը: Նպատակը, ինչ խոսք, չափազանց ազնիվ էր ու արդիական, բայց այդ պոեզիան մի տեսակ անարյուն էր, վերացական ու անկենդան, գրեթե իսպառ բացակայում էր քնարական ինտիմ բանաստեղծությունը:

Այդ բացը մեծապես լրացնելու էր գալիս անձնական վշտի ու

տառապանքի նոր երգիչը՝ Հարություն Ալամդարյանը: «Երևակայությունը բավական թույլ, գաղափարներով աղքատ է Ալամդարյանը, իսկ ձևով դեռ հաճախ միջնադարյան. — անկեղծորեն նկատել է Մ. Աբեղյանը, ապա անաչառ հայացքով ավելացրել, — բայց և այնպես անձնական կսկիծը դարձրել է նրան մեր՝ 19-րդ դարու գրականության առաջին երեսնամյակի միակ քնարերգուն, որի գրվածքների մեջ շինծուություն չկա: Այն, ինչ որ նա գրում է, ոչ թե մեռած, մեքենայական ձևով սարքում է ինչպես մի Գապասախալյան, և ոչ արվեստով հորինում ինչպես Մխիթարյան քերթողները, այլ իր զգացածն ու կրածը, իր վերավոր սրտի հառաչանքն ու հեծուությունը անկեղծությամբ, ինքնաբուխ, պարզ ու անպաճույճ ասում է մեզ: Նա յուր իրական, անհատական կյանքի բանաստեղծությունն է անում, յուր սրտի պատմությունը գրում, որ և քնարերգության իսկական աղբյուրն է. որովհետև բավական չէ միայն բանաստեղծ լինել, այլ հարկավոր է և զգացած լինել. իսկ Ալամդարյանը յուր կնոջ մահը, յուր կրած գրկանքներն ու հալածանքը զգացել է յուր բոլոր էությունը»<sup>1</sup>:

Ալամդարյանը չստեղծեց գրական հարուստ ժառանգություն. նրա միակ ժողովածուն՝ «Չափաբերականքը», անշուշտ, շատ կողմերով է գիշում միջնադարյան բանաստեղծների տաղերին, բայց քաղաքական տխուր հանգամանքների հետևանքով այդ գրականության անկման և նրա մեջ կրոնաբարոյական ու սխոլաստիկ տրամադրությունների գերակայության համապատկերում նոր երգչի հյուսած բնական ապրումները, սերը, տառապանքը, ցավերն ու ուրախությունները, ճիշտ է, գրաբարյան ձևի մեջ, սակայն շատ կարևոր էին նոր ժամանակների համար. ի հակակշիռ կրոնական ասկետիզմի՝ պոեզիայի մեջ վերստին դուրս են հորդում իրական կյանքի կենարար վտակները, խորապես ապրված զգացումները, ասպարեզ է հանվում մարդը՝ իրարամերժ ապրումներով, ցավերով, պոռթկումներով, հոգու դրամատիկ վիճակներով... Ուրիշ խոսքով՝ այս բանաստեղծը գրականություն է բերեց նոր բովանդակություն, նյութ, թեմա և այդ ամենն արտահայտեց բավականին

1. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 611:



պարզ ու մատչելի գրաբարով: Անվիճելի է, որ նա չստեղծեց բարձր արժեքներ, չգարձավ նոր գրականություն հիմնադիր կամ խոշորագույն դեմք: Բայց անվիճելի է նաև Հայտնի մի ճշմարտություն. գրականության պատմությունը միայն մեծերի կամ ընտրյալների պատմությունն է. գիտական ուսումնասիրությունը պահանջում է այսպես թե այնպես ներառել նաև «փոքրերին» ու «չարքայիններին», որովհետև նախ՝ նրանք կարողանում էին նոր արահետներ գտնել, և ապա՝ վերջիններիս անտեսումն անխուսափելիորեն կհանգեցնի իրական պատկերի անավարտությունն ու աղճատմանը:

Եվ նոր արահետներ գտնող բանաստեղծի լավագույն երգերը լայն շառավղով Աստրախանից մինչև Մոսկվա, Թիֆլիսից մինչև Կ. Պոլիս ու Զմյուռնիա, մինչև Հնդկաստան, ջերմ ընդունելություն էին գտնում հայ մարդկանց շրջաններում, դրանց ներհուսվում էին մեղեդիներ ու երգվում գանազան առիթներով: «Տաղք և երգք նորա մինչև ցայսօր կան կենդանի ի բերանս և ի հոգիս գալակաց ձերոց...»<sup>2</sup>, – Ալամդարյանի գերեզմանի մոտ նրա հիշատակը հարգելու հավաքված նախնիներին դիմելով՝ ասում է Խ. Աբովյանը: «Խնջույից և խրախճանների մեջ լսվում էին նորա քաղցրանվագ երգերը, որ ազգային եղանակ զգեցան»<sup>3</sup>, – երկրորդում է Գ. Պատկանյանը: «Հարիւրաւոր աշակերտք հանգուցեալ Ալամդարեանի, որք այժմ կենդանի են, յորոց միջի եմք ես... գիտեմք զժամանակն, զտեղին և զպատճառն յօրինելոյ նորա զայս... «Թշուառութիւն սոխակի» ասացեալ երգն... սիրեն և երգեն ի Թիֆլիզ, ի Հայաստան, երգեսցեն և ի Պոլիս, ի Զմիւռնիա, և ի Հնդկաստան, և այժմէն իսկ առաջի աչացս նկարագրեմ զսիրելի տեսարան, երբ սիրասուն օրիորդք Զմիւռնիոյ ի խնդրելն զհանգիստ յետ տնային աշխատութեանց, ճեմս առեալ ի պարտիզի, աջակցեալ ընդ իւրեանց սիրականաց և անցեալ առաջի թփոյ վարդի, երգեն քաղցրութեամբ. «Ա՛յ իմ վա՛րդ, վա՛րդ, իմ կենաց

2. Տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 8, էջ 312:  
3. «Հյուսիս», 1863, թիվ 1, էջ 6:

զա՛րդ, զա՛րդ...»<sup>4</sup>, – հիշում է Ալամդարյանի՝ Ներսիսյան դպրոցի երբեմնի աշակերտներից մեկը՝ Ն. Տեր-Շմավոնյանը: «Ալամդարյանի բանաստեղծությունները լինելով զուտ քնարական՝ դյուրութամբ վերցնում են եղանակ: Նրա «Յերկու ձեռին երկու մոմ», «Յամսավերջն ապրիլի», չնայած որ գրաբար են, երգում էին նույնիսկ գյուղերում: Դրանցից առաջինը ես լսել եմ Ազուլիսում, երբ դեռ մանուկ էի, գյուղական հարսանիքի հանդիսում: Իսկ մյուսը, դո՛ւն առաջին տունը, իմ մանկական սիրած երգերից մեկն է եղել»<sup>5</sup>, – պատմում է Լ. Լևոն Մանվելյանը: «Հայտնի և ժողովրդական էր «**Յերկու ձեռին երկու մոմ**» երգը, – նկատում է Վրթ. Փափազյանը, – որ կ'երգվեր իր ժամանակի շատ հարսնիքներու մեջ, իբրև ամուսնական տաղ»<sup>6</sup>: «Ալամդարյանի երգերը տարածվել են ձեռագիր երգարանների և ժողովածուների միջոցով: Ուշագրավ է, որ 20-30-ական թվականներից սկսած մինչև 70-80-ական թվականները, և դեռ ավելի ուշ, մեզ ծանոթ համարյա բոլոր ձեռագիր-երգարաններում տեղ են գտել նրա լավագույն տաղերը, մասնավորապես՝ «Պարերգութիւն»-ը («Յերկու ձեռին երկու մոմ...»), «Գարուն»-ը («Յամսավերջն ապրիլի զպատուհանս բացի...»), «Թշուառութիւն սոխակի» և այլն»<sup>7</sup>, – գրում է Արամ Ինճիկյանը:

Մանվել Կյուժմուշխանեցու և Գաբրիել Պատկանյանի վկայություններով՝ Ալամդարյանը բանաստեղծություններ գրել է պատանի հասակից, երբ դեռ սովորում էր Աստրախանի Աղաբաբյան դպրոցում: Մոտավորապես 1812-1813 թթ. նա հորինել է երկու երգիծական բանաստեղծություն՝ ուղղված իր ուսուցչի՝ Սերովբե վարժապետ Պատկանյանի դեմ: Ահա ինչ է պատմում Գ. Պատկանյանը. «... Երկու դիմառնություն էր շարադրել՝ շատ կծու և անպարկեշտ խոսքերով, մեկը՝ «Կայն և Աբել», և մյուսը՝ «Մավուղ և Դավիթ»: ... Երբ Սերովբե վարժապետը կարդաց այս ոտանավորները, այն-

4. «Արարատ», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1851, թիվ 23, էջ 362-364:  
5. Լ. Մանվելյան, Ռուսաստանի գրականության պատմություն, Ա., էջ 32:  
6. Վրթ. Փափազյան, Պատմություն հայ գրականության, Երկրորդ գիրք, Կ. Պոլիս, 1914, էջ 71:  
7. Ա. Ինճիկյան, Հարություն Ալամդարյանի գրական ժառանգությունը, «Տեղեկագիր հաս. գիտ.», հանդես, Երևան, 1957, թիվ 9, էջ 66:



քան չգայրացավ նորա սոգտանաց վերա, որքան ուրախացավ նորա հաջողակ գյուտերու և գեղեցիկ շարագրության վերա»<sup>8</sup>: Իսկ Մ. Կյուսուճյանցին, 1815-ին գրած իր մի նամակում հիշելով Ալամդարյանին, նրան հեղինորեն կոչել է «գեռաբույս բանաստեղծ – Հոմերոս»<sup>9</sup>:

Ալամդարյանի՝ մինչև 1821 թ. գրած բանաստեղծություններից, սակայն, ոչ մեկը մեզ չի հասել. դրանք, լինելով գրական նախափորձեր, կամ ոչնչացրել է ինքը՝ բանաստեղծը, կամ էլ պարզապես կորսվել են: Պահպանված քերթվածներից ժամանակագրական կարգով առաջինը՝ «Ն Ա Ջ Ե Լ Ի Ո Յ Ս դէմքն էր ճերմակ ու կարմիր...», գրված է կնոջ՝ Մարգարիտի մահվան օրը (1821, օգոստոսի 12), որին հաջորդում են նույն ամսին և նույն առիթով գրված «Կոծ», «Սուգ» և «Թշուառութիւն սոխակի» բանաստեղծությունները:

Նոր բանաստեղծը հիմնականում հնչեցրել է սիրո, վշտի և դրանց հետ կապված՝ մահվան տխուր նվագներ: «Բազմազան չէ Ալամդարյանի բանաստեղծության նյութը, – իրավացիորեն նկատել է Մ. Աբեղյանը, – բայց նա ունի քնարերգության ամենամեծ թեմաներից երկուսը՝ սեր և մահ, և այս միացած մի սրտի մեջ, միաժամանակ զգացած և ի մի ձուլված մի սիրած անձի համար»<sup>10</sup>: Գլխավոր շեշտը դրված է սրտի ամբողջ գորությունը սիրած կնոջ՝ Մարգարիտ Արզանգուլյանի մահվան վշտի ու մորմոքի վրա: Գեղեցիկուհի ու պարկեշտ ամուլի կորուստը դառնում է նրբին հոգու վշտի տրտմաբուխ աղբյուրը: Իսկ հետզհետե կուտակվող վիշտը, բնական է, որ այս շնորհալի բանաստեղծի հոգում պետք է ալիքվեր, ահագնանար ու ելք փնտրելով՝ դուրս հորդեր սիրային ողբերգերի ձևով: Ինչպես ուսսական սենտիմենտալիզմի հիմնադիրը՝ Ն. Կարամզինը, գեղարվեստական գրականության մեջ անընդհատ շեշտում էր «զգայնականության ոգեղենացումը» և գտնում, որ պետք է ստեղծագործության «սնուցող, եթերային հուրը գերի ըն-

8. Նույն տեղում, էջ 64:  
9. Տե՛ս նույն տեղում:  
10. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 611:

թերցողի նրբին հոգին»<sup>11</sup>, այնպես էլ Ալամդարյանը, որի նախընտրած հեղինակներից էր Կարամզինը, հայոց նոր քնարերգություն է բերում իր սրտի, զգացմունքի, վիրավոր երազների ու չհասկացվածություններից: «...Կարամզինն ընկալեց մարդու՝ որպես «արարչագործություն պսակի», «աշխարհի հպարտ արքայի» կոչման պատկերացումը: Բարին ու գեղեցիկը զգալու և ընկալելու կարողությունը մարդ արարածը դառնում է մի իսկական հսկա: Զգայնականությունն ամենից առաջ նշանակում էր ապրումներին հաղորդակցվելը և դրա համար անխուսափելիորեն ենթադրում էր ներքին «ես»-ի ու արտաքին աշխարհի՝ մյուս մարդկանց, բնություն, արվեստի հետ հաղորդակցություն»<sup>12</sup>, – նկատում է ուսսական սենտիմենտալիզմի տեսաբան Ն. Կոչետկովան: Այդպիսին էր նաև Ալամդարյանը. կործանվող հոգիների միայնության սարսափն զգացող բանաստեղծը պատեպատ է խփվում, ամայություն մեջ փնտրում հոգեկան օազիս-ապաստաններ, աղեկեզ դիմումներ ուղղում մերթ շրջապատի մարդկանց, մերթ բնություն մյուս արարածներին, մերթ էլ անդրադառնում աստվածաշնչյան թեմաներին...

Տանջահար հոգու անձնական վիշտն ու ապրած դրաման չափազանց մարդկային են, հավերժական և այսօր էլ հուզում են մեզ, քանի որ բանաստեղծը, ինչպես Մ. Մեծարենցը կասեր, դուրս է եկել իր «ես-ին տաղտկալի ոչնչաբանություններին» և հնչեցրել «համաշխարհիկ բաբախումներ»: Նրա սիրային սրտառուչ երգերը ներքնապես կապակցվում են, կազմում ամբողջություն և վերջնահաշվում կարծես դառնում մի գեղեցիկ ձոն հավերժական սիրո մասին: Ալամդարյանի սիրո քնարը չի արծարծում սիրո առեղծվածները մեկնող բազմազան ապրումներ. նրա երգերը կորցրած սիրո, նազելի ամուլի հետ անցկացրած օրերի հուշ-վերապրումներն են միայն, իսկ սիրո վայելքի երգը ցավալիորեն կարճառոտ է, չնչին, գրեթե աներևույթ:

Սիրելի մահն այնքան խորն է ակոսել նրա հոգին, վիշտն այն-

11. Տե՛ս Русский романтизм, Ленинград, 1878, с. 7.  
12. Նույն տեղում, էջ 20 (Н. Д. Кочеткова, “Русский сентиментализм”):

պես է համակել նրան, որ աշխարհը կորցրել է իր նշանակությունն ու իմաստը: Տանջահար հոգին հուսահատ ջղաձգումներով աշխարհին նայում է միայն իր վշտահար սրտի պատուհանից:

Առաջին սիրերգի մեջ՝ «Ն Ա Զ Ե Լ Ի Ո Յ Ս դէմքն էր ճերմակ ու կարմիր...», ուր, որպես բնաբան ընտրված է «Երգ երգոցի» նշանավոր տողը («Ամենեկին ես գեղեցիկ մերձաւոր իմ, եւ արատ ոչ ինչ գոյ ի քեզ»), Ալամդարյանը, ինչպես ժողովրդական ողբերգերում, դրվատում է սիրած էակի ֆիզիկական ու հոգեկան բարեմասնությունները՝ «ճերմակ ու կարմիր» դեմքը, ոսկեփայլ վարսերով պճնագարդ գլուխը, «չնորհաշուք հասակը», «աղեղունք նետարձակ» հոնքերը, «ճոխ» այտերը, «մարգարտայեռ» ատամնաշարը, հրեշտակի ձայնը, բոցավառ ստինքները...

Ձայնն էր հրեշտակի, անջինջ ի սրտես.  
Բերանդոն խօսուած հրրոյ պէս ազդէր:  
Ծոցն էր լի՛ հրով, ստինք բոցավառք.  
Լանջացն գովեստ՝ չէ՛ բան իմ լեզուի:

*Ի դեպ, սիրերգը մեծ չափով հիշեցնում է Գրիգոր Նարեկացու՝ Տիրամորը նվիրված «Մեղեդի Ծննդեան» տաղը.*

Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթեր,  
Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիդն:  
Ծոցն լուսափայլ կարմիր վարդով լցեալ,  
Ծղիքն ծիրանի՝ մանուշակի հոյլք<sup>13</sup>:

Աննման է Մարգարիտը, այնքան անզուգական, որ աշխարհի ու բնությունից հայտնի բոլոր գեղեցկությունները նսեմանում ու մարում են նրա առջև.

Չքնաղաց ըզգով, զանուն և պատկեր  
Ծատ լուայ, տեսի յայս աշխարհ ատեր.

13. «Գանձարան հայ հին բանաստեղծության» (աշխատասիրությանը Պ. Խաչատրյանի), Երևան, 2000, էջ 103:

Յուդիթ, Սաթիճիկ, Բերսաբէ, Եսթեր,  
Մեծ Կղեոպատրայն, որ զաշխարհ գերէր  
Պարք օրիորդաց ի Կողքիս, յԵգեթ,  
Ոյց սիրով երբեմն Հոովմ հեծեծէր,  
Ռաքէլն Յակովբայ՝ որ գղով այրէր,  
Զքեռ իւրոյն անխանձ ի բոց արծարծէր՝  
Առ քն չէ՛ն այլ ինչ, բայց միայն ստուեր.  
Դու՛ տիւ աննման, իսկ դոքա՛ գիշեր:

*(«Դու երեսակայութեան»)*

*Բայց սիրելի մահը, այնուամենայնիվ, սթափեցնում է նրան, և բանաստեղծը դարձյալ ժողովրդական էլեգիաներին բնորոշ շեշտերով դիմում է մարդկանց, նրանց հետ է կիսում իր վիշտը, նրանցից օգնություն խնդրում: Ուշագրավ է նաև, որ տեղ-տեղ ողբերգ են թափանցում ժողովրդական ոճավորումներն ու արտահայտչամիջոցները՝ այնքան խորթ կլասիցիզմի գեղագիտությունը.*

Պատմեցէք, մարդիկ, թէ տեսիք զնա,  
Պատմեցէ՛ք, եղբարք, թէ կայ սիրտ ի ձեզ:  
... Այդ զի՞նչ կակիծ է, այդ զի՞նչ չար տանջանք.  
Քարեայ սիրտ պիտի հանդուրժել դոցա:  
Թէ լուր ինչ չունիք զանգին չքնաղէս,  
Թէ ինձ չիք հնար գտանել զնա՝  
Ինձ յափստ եկայք անչափ անեղարյս,  
Ողջ ողջ դի՛ք յարգանդ մութ գերեզմանի:

*Հոգեկան ցավից ցնցված ու մահվան սարսափի դեմ մոլորված բանաստեղծը չի հաշտվում կատարվածի հետ: Ոչինչ չի կարող մխիթարել նրան. տառապանքներից կարող է փրկել միայն մահը.*

Երբ յիշեմ զանուն իմ սիրականի՝  
Յօդուածք իմ դողան, սիրտ իմ սարսափի:  
Դուք ի գուր ջանայք զիս մխիթարել.

Չկայ կէս արտիս՝ զիս՞ող ասրեցայց:  
Իմ կեանք այլ չեմ կեանք առանց փարելոյս.  
Իմ ցաւոյս դեղն է մահն, սիրելիք:

Նրա հոգին, մահվան դեմ ծառանալով և չհաղթահարելով այն, կրկին հանգում է անխուսափելի մահվան գաղափարին: Դա էլ դառնում է տիրապետող մոտիվներից մեկը նրա քնարերգութեան մեջ. /Զանյազ արգանդ բացէք գերկրիս, /Անդ կենդանւոյն թաղեցէք զիս. աւա՛ղ, մի՛ խնայէք յիս («Կոծ»)/. /Թէ քեզ առ իս գալ չէ հնար՝ /Գոնեա առ քեզ զիս փութով տար. /Հեռի ի քէն չունիմ դադար. /Կեանք այդպիսի քան մահ է չար («Սուգ»)/. /Զքեզ որոնմամբ համայն ոսկերքս մաշեցան, չորացան. /Արդ մեռանիմ. բարեաւ մնա՛. . . անասան («Սոխակ ի հոգեվարս»)/. /Ա՛խ, յիւր կէտ վերջին եհաս սեաւ կեանք իմ. / Ա՛հ, ես ե՞րբ մեռայց, ե՞րբ հանդարտիցիմ/ («Դաւ երեւակայութեան») և այլն:

«Ն Ա Զ Ե Լ Ի Ո Յ Ս դէմքն էր ճերմակ ու կարմիր...» բանաստեղծութեանը կրկին հետևում է անձնական դրաման՝ «Կոծը»: Հեղինակը մերթ դիմում է լուսահոգի կնոջը, որի սիրո կայծը հարավառ է իր վիրավիջ սրտում, մերթ խոսքն ուղղում է թռչունների «բամբից»՝ երամից, պարծանք անվարուժան, ամայաբնակ տատրակին՝ ընդհանուր քատակ՝ աղերսներ տեսնելով վերջիններիս և իր վշտի միջև.

Ուրախ ձայնի մի՛ դայլալեր,  
Զայրոյս այրած սիրտ մի՛ ճմլեր, ո՛հ, գվերս մի՛ անորգեր.  
Լերդակիզոյս գուգերգող լեր,  
Դու լաւ գիտես, թէ զինչ է սեր. վա՛յ ինձ, հուր վառէ սեր:

Բայց տատրակի սիրտն էլ է խոցված, մեռած է նաև նրա վարուժանը, և տատրակը չի պատասխանում բանաստեղծին, չի դայլալլում, այլ գոս մրտենու ճյուղի վրա հյուծվում է վշտից՝ «անկեր, անումպ, գերի կոծոյ»:

Բանաստեղծութեան մեջ սիրո խորհուրդն է բացահայտում

«Դու լաւ գիտես, թէ զինչ է սեր» տողը. առանց սիրո մարդը ոչինչ է, և գրողը միջնադարյան ողբասացների նման մոնչում է, հեծում կորստի ցավից. նա աղերսում է ամենքին «կականաբաղձ» ողբալիրեն, չխնայել, կենդանի թաղել.

Արդ անասուն գործք արարչիս,  
Կականաբարձ կոծեցէք զիս, վա՛յ, ողբացէ՛ք զիս.  
Զանյագ արգանդ բացէք գերկրիս,  
Անդ կենդանւոյն թաղեցէք զիս. աւա՛ղ, մի՛ խնայէք յիս:

Իրավացի է Մ. Աբեղյանը, երբ գրում է, որ բանաստեղծի համար մահը բնական վիճակ է, որի դեմ այնքան էլ նա կարծես չի բողոքում. մահը «նրան պատկերանում է միայն «գօրեն անողորմ, անհաշտ ոսոխի, ժանտ մարդասպանի», որ զրկում է մարդուս ծանոթներից ու բնությունից՝ լեռներից ու հովիտներից, պայծառ ծաղկափթիթ դաշտերից, որ զրկել է իրեն հատկապես յուր աննման Մարգարտից: Էականը մեր բանաստեղծի համար ոչ թե ինքը մահն է, այլ մահի բերած այս զրկանքը, որ ճնշում, խորտակում է նրան ոչ միայն հոգեպես, այլև ֆիզիկապես»<sup>14</sup>: Բանաստեղծն աշխարհում Մարգարտին հավասար ուրիշ ոչինչ չունի. նա պետք է գոհաբերի իր կյանքը.

Նուագս քեզ ձօն չէ՛ գուգակշիո,  
Ո՛ Մարգարիտ՝ գա՛նձ անկշիո. ա՛խ ա՛խ, զիս անսուր գեներ.  
Քեզ ի նուէր չունիմ գայլ իր,  
Զկեանս իմ դնեմ արդ ի կշիո. աւա՛ղ, ասա՛ մեռի՛ր:

Սիրող սրտի մեղմ հանդիմանանքն է արտահայտում «Սուգ» բանաստեղծութունը: Ալամդարյանի սերը միակողմանի չի եղել. սիրել ու սիրվել է փոխադարձաբար: Սիրավառ հոգիներն ուխտել են ապրել ու մեռնել միասին. երկուստեք նրանց միավորել է հոգեկան անբասիր ու գեղեցիկ դաշինքը.

14. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 612:

Ա՛յս, անմոռա՛ց կեանք, հոգի, սէր,  
Այդպէս երբէք չէր պայման մեր.  
Կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ  
Ի միասին՝ խոստումն էր մեր:

*Տառապած հոգուն հենց այդ դաշինքն է դարձնում աշխարհի տերը.*

Քն տէր էի ես աշխարհաց,  
Իսկ առանց քո՝ որք գետնամած:

*Կորցնել սիրած էակին՝ նշանակում է զրկվել կենսաթրթիւն հոգուց և դադարել իբրև բանական, ապրող, մտածող անհատ գոյութիւն ունենալուց, կյանքն անցկացնել լացով ու աղի արտասուքով.*

Չի՛ք չափ հեղման դառն արտասուաց  
Յիմոց պղտոր միշտ թաց աչաց.  
Լեղի՛ իմ ջուր, մոխի՛ր է հաց,  
Նիւնջ իմ՝ պատկեր զարհուրանաց.

*Նկատելի է, որ բանաստեղծի համար առանց սիրո կյանքն անապատ է, այն մահից էլ վատթար է, ավելի դառը, «քան բիւր չար կատարած»: Միայնակ հոգին միշտ գլխիկոր, դժգունած ու տխուր սրտով օրեր, ամիսներ ու տարիներ է անցկացնում անիրավ աշխարհում՝ չգտնելով որևէ հնար ու երազելով արդեն հանդերձյալ կյանքում ձուլվել սրտի թագուհու հետ.*

Առանց քո ես գամ, ամիս, օր  
Անցուցանեմ միշտ զլիսակոր.  
Դժգոյն դիմօք, արտիւ տխուր  
Մաշեմ զկեանս հանապազօր.  
Թ՛է քեզ առ իս գալ չէ հնար՝

Գոնեա առ քեզ զիս փութով տար.  
Հեռի ի քէն չունիմ դադար.  
Կեանք այդպիսի քան մահ է չար:

*Կնոջ մահից մեկ տասնամյակ հետո էլ՝ 1831-ին, Ալամդարյանի սիրակեզ հոգին չի հանդարտվում: Հաղպատի մենախցում առանձնացած հալածական բանաստեղծը «Դաւ երեւակայութեան» քերթվածում խորհում է աշխարհի ներդաշնակ ու նաև անողոք օրենքների մասին. ինչպես բնության մեջ ծուխը ձգտում է վեր, նետը՝ նպատակակետին, ջուրը վերևից վայր է իջնում, հիվանդը տենչում է կազդուրվել, այնպես էլ երկաթի պես մագնիսին ձգտող բանաստեղծի հոգին է տենչում իր սիրուն.*

Որպէս ծուխն ի վեր բնապէս ձգի,  
Որպէս գետն առ իւր նպատակ բերի,  
Որպէս ջուր վերուստ ի վայր սողոսկի,  
Որպէս մարդ հիւանդ՝ ողջ լինել կամի՝  
Նոյնպէս սիրտ, մարմին, իմ բոլոր հոգի  
Քեզ բաղձայ, սէ՛ր իմ, քև վատի, մաշի:

*Ի դեպ, Լևոն Մանվելյանը «բոլորովին պատահական» «գարմանալի նմանութիւն» է տեսել Պերսի Բիշի Շելլիի (1792-1822) «Սիրո փիլիսոփայութիւն» ("Love's philosophy") և Ալամդարյանի «Դաւ երեւակայութեան» բանաստեղծութիւնների մեջ<sup>15</sup>: Հիրավի, հանդիպաբերով վերոհիշյալ քերթվածները, աղբրսներն ակնառու են դառնում, բայց, կարծում ենք, դրանք ոչ պատահական բնույթ ունեն, քանի որ Ռուսական Կայսրութիւն սրտում՝ Մոսկվայում, կրթական, գրական ու գիտական լայն գործունեութիւն ծավալած Ալամդարյանը չէր կարող անձանոթ լինել անգլիացի նշանավոր ռոմանտիկի ստեղծագործութիւններին: Նրա կենսագրութիւնից հայտնի է, օրինակ, որ հայ բանաստեղծը քաղածանոթ էր նաև Զորջ Բայրընի քնարերգութիւնը և իր «Լաց դատերն Յեփթայեայ»*

15. Տե՛ս Լ. Մանվելյան, Ռուսահայ գրականության պատմություն, Ա., էջ 29-30:

բանաստեղծութիւնը գրել է «Լորդ Բայրընի հետեմամբ»: Ահա Շելլիի՝ 1819-ին գրած բանաստեղծութիւնը.

Առվակներն ընդէլուզվում են գետին,  
Գետը սլանում է դեպի Օվկիանոս,  
Սուրում է քամին Երկրի վրայով,  
Նրան է փարվում Մշուշը հեզ:  
Արարածները բոլոր կարծես մի սերտ դաշնությամբ  
Պարփակված են սիրո դաշինքում:  
Օ՛, ինչու՞, իմ սքանչելի՛ ընկեր,  
Չեմք կարող ձուլվել մեզք իրարու:  
  
Նայի՛ր, գնում են սարերը դեպ Երկինք,  
Իսկ ալիքները փախչում են դեպ ափ,  
Ծաղիկները խոնարհած հայացքները քնքուշ,  
Ինչպես եղբայր ու քույր, փարվում են իրար:  
Համբուրում է Գիշերը կոհակները ծովի,  
Իսկ երկրին՝ օրվա փայլը շողշողում:  
Սակայն ինչի՞ս են պետք համբուրներն այդ սին,  
Երբ չես համբուրում դու ինձ, բարեկամ:

Նմանութիւնները, անտարակույս, շատ են, նույն համեմատութիւնները սիրո և բնութիւնը երևույթների միջև, երկու բանաստեղծների համար էլ սերը թե՛ պաշտամունքի, թե՛ հանապազ վըշտի ու տանջանքների աղբյուր է, և այդ թեման հավերժական է ու հուզել է նրբին հոգիներին բոլոր դարերում:

Ալամդարյանի սիրո քնարերգութիւնը լավագույն նմուշներից է «Ողջոյն հրաժեշտի գաւակաց իմոց» բանաստեղծութիւնը: Սա դրամատիկով հագեցած ազդեցիկ ստեղծագործութիւն է, ողբերգական փաստի առաջ կանգնած ընտանիքի մի փոքրիկ պատկեր: Այստեղ բանաստեղծը քնարական նոր թեմա է բերում հայոց բանաստեղծութիւն, շեշտադրում խորապես ապրված աշխարհիկ տրամադրութիւնները՝ այնքան տարբեր միջնադարյան աշխարհը ընկալումից: Իրավացի է էլ. Գևորգյանը՝ գրելով. «Այսօրինակ

դրամատիկ բանաստեղծութիւններ ունեն նաև միջնադարի մեր առանձին քերթողներ, սակայն բոլորն էլ նվիրված են Քրիստոսի խաչելութիւնը: Դրանց մեջ ներկայացվում են Քրիստոսի տառապանքներն իր աչքով տեսնող աստվածամոր՝ Մարիամի աղեկտուր ողբը և Քրիստոսի՝ որդիական նվիրական զգացմունքները մոր նկատմամբ: Ալամդարյանն իր «Ողջոյն հրաժեշտի գաւակաց իմոց» երգով հանգում է նոր արդիւնքների, քնարական նոր խոսք, նոր թեմա է բերում հայ բանաստեղծութիւն մեջ, որով ընդլայնվում են նրա քնարերգութիւնը շրջանակները»<sup>16</sup>:

Բանաստեղծութիւնը մի հուզիչ գրույց է սգացող հոր և նրա մատաղահաս երեք դուստրերի՝ Մարիամի, Աննայի և Կատարինեի միջև: Աշխարհի ցավերի դեմ մոլորված ընտանիքի հայրն այլևս չի կարող ապրել անհուն վշտերի մեջ, սիրասուն դուստրերին ապավինած Հիսուս Քրիստոսի սուրբ աջին՝ ուզում է մեկնել երկնային ոլորտները՝ այնտեղ գտնելու իր վաղամեռիկ ամուլին.

Երթամ ես յաշխարհ ի ձեռք յոյժ հեռի,  
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.  
Արտասուօք, ողբովք՝ ձայնի սրգալի  
Խնդրեցից զնա յամենայն երկրի:

Անօգնական որբերը, իմանալով իրենց միակ ապավենի՝ սիրելի հոր ծանր խոհերը, թախանձում են նրան հետ կանգնեցնել անդառնալի կործանումից: Դուստրերից ամենափոքրը՝ Մարիամը, որ դեռևս անհաղորդ է կյանքի չարին ու բարուն, անկարող ըմբռնելու հոր վիշտն ու նրա խոսքերի բուն իմաստը, մանկական անմեղութիւնով հարցնում է «անծանոթ երկրի» մասին և ցանկութիւն է հայտնում հոր հետ միասին մեկնել այնտեղ.

Զի՞նչ խօսիս, Հայրի՛կ, զի՞նչ դու կորուսեր,  
Եւ զի՞նչ գտանել յանձնաօթ երկիր  
Կամիս, ասա մեզ, մի՛ թագուցաներ,  
Տա՛ր և զմեզ ընդ քեզ, Հա՛յր, մի՛ արտասուեր:

16. Է. Գևորգյան, Հարություն Ալամդարյան, Էջ 141:

*Իրողությանը տեղյակ է միայն Ալամդարյանի Աննա զուստըր- նա բացատրում է քույրերին, որ հայրը սգում է իրենց մոր կորուս- տը.*

Հայր մեր, ես գիտեմ, ըզմայր մեր ողբայ,  
Չմահ նորա յիշեալ՝ մորմոքի, սրգայ.

*Կատարինե զուստըր մխիթարում է հորը. վերջինիս հեռացումը մորից զրկված աղջկան կզրկի նաև հայրական սիրո գգվանքից.*

Զիս ո՞ սիրեսցե՛՜ գԿատեալս քո թշուառ...

*Եվ մայրական գգվանքներից այնքան վաղ զրկված որբուկների աղբասանքները կասեցնում են նոր աղետը՝ հայրակորուստությունը:*

*Ծնողական սիրուն են նվիրված Ալամդարյանի նաև «Մոր աղե- կիզի ողբ քստմենլի ընդ մահ անդրանկի յօտար աշխարհի» և «Կօծ մեղկաղէտ ծնողաց ի վերայ վաղամեռիկ միամօր դստեր» բանաս- տեղծությունները: Հարազատ զավակի մահվան մորմոքը խորա- պես գգացած քերթողը միայն թերևս կարող էր այնքան ճշմարտա- ցի ու ազդեցիկ վերարտադրել օտար ափերում մեռած որդուն սգացող մոր հոգեկան անասելի տառապանքը.*

Հոգեզուարճ դարձիդ, հոգեկից որդեակ,  
Ես ցայգ ու ցերեկ բաց աչօք սպասեմ.  
Ի տունջեան յուսով զիս խաբեմ, որդեակ,  
Զգիշերն երագովք միշտ ընդ քեզ խօսիմ.  
Ո՛հ, ե՞րբ եկեսցես, զիս ե՞րբ սփոփեսցես:

Իմ սիրտ մայրեմի, իբրև ջուր յստակ,  
Զպատկերդ ցուցանե յինքեան պարզ, որդեակ.  
Ա՛խ, մեոցի իմ սիրտ, սիրտ տրտմագուշակ.  
Քայքայիմ, հալիմ, կաթոգնիմ, հաշիմ.  
Զիս ե՞րբ սփոփեսցես, ե՞րբ տեսցես որդեակ:

*Ինչպես Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմում Սարոյի եղերա- մայր դարձած ծեր նանն է ցավից բառաչում, ծառս լինում «զուշ- ման» երկնքի դիմաց ու աղաչում մեռած որդուն՝ «մի անգամ խո- սի, աչքը բաց անի», այնպես էլ այստեղ: Ճիշտ է, դրամատիկ ու հոգեբանական ոչ նույն ուժով՝ որդեկորույս մայրը փափագում է գոնե մեկ անգամ տեսնել որդու երեսը, լսել նրա ձայնը, թող այ- նուհետև երկնահասանք շանթերը կտրատեն իր սև կյանքի թեւը: Չէ՞ որ որդու կորստյան ցավը հավերժական է և անթեղված է մնում բոլոր մայրերի սրտերում.*

Միանգամ ցո՛յց մօրդ գերեսս քոյ, որդեակ,  
Միանգամ լուսաց զձայն քոյ, որդեակ՝  
Ծանթք երկնահոսանք զսեաւ կեանաց իմ թել  
Փութասցեն ապա կտրատել, խզել.  
Ի սեր քո կիզիմ, տոչորիմ, որդեակ:

*Տառապած մոր «տրտմագուշակ» սիրտը տեսիլքներ է տեսնում. տարաշխարհիկ դարձած որդին օտարների մեջ է՝ հիվանդ, անխը- նամ, հոգեվարքում պառկած... Մայրն իր գորովագութ ձեռքերն է կարկառում նրան, բայց չի կարողանում հասնել: Եվ «նզովյալ ե- րազից» վերստին սթափված՝ անհուն քնքշանքով փարում է իր հուսո խարսխին, «լույս, տատրակ» որդու մտապատկերին.*

Փարիմ զքո ոտիւք, որդեակ նազելի,  
Զոհ լիցիմ իմ կեանք քեզ, անգիմ որդի.  
Դու արդ դարձ առ իս, իմ հնազանդ որդի,  
Ընդ քո զի՛ս մեռո, կեցո զիմ հոգի:  
Վա՛յ, քանի՛ դառն է մայրութիւն, որդի:

Համբար է վշտաց սիրտ մօր քոյ, որդեակ,  
Անհուն եմ աչացս հոսանք արտասուաց:  
Դու ինձ մխիթար, ծաղիկ անուշակ,  
Խարիսխ իմ յուսոյ, իմ կեանք, լոյս, տատրակ,  
Փութաս, դարձ առ իս, սպառիմ ի կեանաց:

Ինչպես տեսնում ենք, որգեկորույս մոր սրտառուչ այս խոսքը, որն իր մեջ ամփոփում է և՛ մայրական անեզր սեր ու քնքշանք, և՛ սրտմաշուկ կարոտ ու անփարատելի վիշտ, գեղարվեստական ազդեցիկ ու շարժուն պատկեր է, որը նույն ուժով չի հանդիպում մինչալամդարյանական մեր պոեզիայում, և որը իրավունք է տալիս այն անվերապահորեն դասելու հայ նոր քնարերգության մեջ մայրական անափ սերն ու վիշտը մարմնավորող լավագույն բանաստեղծությունների շարքը:

Հեծեծում է Ալամդարյանի քնարը, և սիրո անհուն կարոտից ու տենչանքից տվյալտող բանաստեղծը միայն անուրջներում է գըտնում իր թանկագին կորուստը: Անձնական կյանքի ողբերգությունն է ծնվում նաև «Անուրջ» սիրերգը՝ հայոց նոր քնարերգություն անուրջն ու շագրավ նմուշներից մեկը:

Յառաօտուց ի յանկողնի  
Սէր անգելույս զիս խորովէր.  
Անքուն զգիշերն էս անցուցի,  
Զի տանջէր զիս անորա պատկեր:  
Լեզուս ցամաք, հոգուով վհատ,  
Տկար մարմնով կայի անկեալ.  
Անուրջք անուրջք ի միմջ կիսատ  
Զթաց աչօքս կայիմ սփռեալ:

Վաղորդյան աղամուղջի ցրվելուն պես ներս են թափանցում լույսի ցնցուղ ցայտերն ու բանաստեղծին գցում պատրանքների մեջ: Իրականության և երազի սահմանագիծը կորցրած երիտասարդը լսում է իր նազելու ոտնաձայնն ու քաղցրիկ հանդիմանություններ:

...«Աւա՛ղ գլխոյս, գոչեաց ճեպով,  
Ընդէ՞ր մաշիս, սրտիս իշխան»:

Սիրած կնոջ ձայնից բորբոքվում է կյանքի կայծն ու բանաստեղծի ողջ էությունը համակում ցնծություններ:

Նազելույս ձայնն լուսկն իմ հնչեալ՝  
Յիս արծարծեաց զկայծ կեանց.  
Յնծութիւն իմչ հանրածաւալ  
Հոգույս մարմնոյս իսկոյն տիրեաց:

Իր ծանր ու անսփոփ վշտի մեջ դժբախտ սիրահարն ունենում է նաև թեթևացման, հաճելի մոռացման ակնթարթներ: Նա անհանում է դառն իրականությունից և վերհիշում իր կյանքի երջանիկ պահերը: Այս առումով հիասքանչ է «Պարերգութիւնը»՝ անաղարտ սիրո սրտառուչ երգը, ժամանակին շատ սիրված ու տարածված երգերից մեկը: Այստեղ այնքան կենդանի ու շոշափելի է պարկեշտ կույսի պատկերը, որ թվում է, թե բանաստեղծն այն կերտել է նշանախոսության ներշնչանքով, այնինչ դա անափ սգի մեջ տառապած մարդու սրտի վերհուշն է միայն, քաղցր հիշատակների լուր վերապրումը, հիշատակներ, որոնք զարմանալիորեն ավելի են սաստկացնում անցյալի երջանիկ օրերի և ներկայի դժբախտությունների ցավի շոռավիզը:

Տակավին պատանի հասակում ամուսնացած բանաստեղծի մտապատկերում ամենայն մանրամասնություններ են պահպանվել նշանտուքի տեսարանը, իրեն ընդառաջ եկող ամոթից վարդ կըտրած Մարգարիտը:

Յերկու ձեռիմ երկու մոմ՝  
Ինձ ընդ առաջ ել յիր տան.  
Մի՛ հարցանէք ո՛վ էր նա,  
Հրեշտա՞կ, թէ կոյս լուսագեղ:

Ամօթն զնա վարդ արար,  
Ես հիացեալ դարձայ քար.  
Այն զի՛նչ օր էր և զի՛նչ ժամ,  
Յորում տեսի ես կեանք անոր:

Փեսացուին ընդառաջ եկող օրիորդը երևում է իր ողջ շքեղություններ ու հմայքով:



Մարգարտափայլ մարմինն էր,  
Հասակն էր յոյժ վաչելուչ,  
Զոտիքն իւր վարսք քարշ կային,  
Ի գոյն քրքմոյ փայլէին:

Դիմացն շքեղ երևոյթ  
Յոնից, աչաց, այտից գեղ,  
Օրթանց լեզուին համ անոյշ՝  
Խոստանային ինձ կեանք անոր:

*Հարսնացուի գեղեցկութիւնն ընդհանուր է սիրահարը բռնվում է հիացմունքի, հաճույքի ու ինքնամոռացութեան դողով, մոռանում ամբողջ աշխարհն ու պարուրվում շոյող թմրութեամբ, զգում հաճելի գլխապտույտ.*

Ա՛խ, ասացի թմրեցայ,  
Սիրտս սկսաւ դողդողալ.  
Զաշխարհի համայն մոռացայ  
Ի գեղ կուսին ապշեցայ:

*Այս սիրերգ-վերհուշը հատկանշվում է խորապես ապրված զգացմունքների նրբութեամբ ու քնքշութեամբ: Ի տարբերություն մյուս երգերի՝ այստեղ կարծես այնքան էլ ճնշող չեն վշտի բեռն ու սեւամաղձութիւնը: Բայց, ավա՛ղ, արագ է անցնում վերհուշի երջանիկ պահը. մարդու աստեղային ժամը տեղի է տալիս դառն իրողութիւնների առաջ, և սիրակորույս բանաստեղծը հանգում է հուսահատական եզրակացութիւնների. աշխարհն անգութ թշնամի է, ավելի դժիւսեմ, քան մահաթույն օձը: Անագորույն ու սնամեջ աշխարհը սիրո ցանցերով քեզ գցում է իր անել որոգայթը՝ եղծելով գեղեցկութիւնն ու արագորեն հափշտակելով բարոյական արժեքները.*

Նամրախորհուրդ ա՛գգ մարդկան,  
Օտտ մի՛ սիրէր դու գաշխարհ.

Նա թշնամի է անգութ,  
Չար քան զքարք մահաթոյն.

Ցանցի սիրոյ զքեզ կարթէ,  
Ի հաղբ անել ըմբոնէ.  
Ապա զսիրոյդ առարկայ  
Ի քէն արա՛գ կողոպտէ:

*Սիրո գայթակղիչ ցանցերով բանտված բանաստեղծի ցավը տարբեր է շատ ուրիշներից. նա պատճառներ չունի բողոքելու իր սիրո էակից կանացի սեթեւեթանքների կամ քմահաճույքների համար, ինչպես, ասենք, նրան ժամանակակից Մեսրոպ Թաղիադեյանը, որը «Տուտու» բանաստեղծութեան մեջ տրտնջում է իր սրտի դշխուհու անընդմեջ պչրանքներից ու սիրային խարդավանքներից.*

Ե՞մ ես արդեօք խաղալիկ քոյ  
Որ ի հրապոյր խաբէութեան,  
Մտեալ յամուրս հոգւոյ իմոյ,  
Կողոպտեցեր ողջ զիս, Տուտու<sup>17</sup>:

*Ալամդարյանին նագելի էակը չի տանջել սիրո որոգայթներով ու ծեքծեքումներով, և նրա ֆիզիկական կորստից հետո կյանքն ընդհանրապես ևս կորցնում է բոլոր հմայքները, ու հուսահատ բանաստեղծը հանգում է մահվան սրտամորմոք գաղափարին:*

*Ո՛րն է «Պարերգութիւն» բանաստեղծութեան հաղողութեան գաղտնիքը, այսօր արդեն շուրջ 200-ամյա հմայքի առեղծվածը: Պատասխանը մեկն է՝ ամենից առաջ խոր բնականութիւնը և հավերժ մարդկային ապրումը...*

17. Մ. Թաղիադեյան, Գեղարվեստական երկեր, Երևան, 1965, էջ 58:

\* \* \*

Ալամդարյանի սիրային քերթվածների առանձին շարք են կազմում վարդին ու սոխակին նվիրված երգերը՝ «Սոխակ ի հոգեվարս», «Վարդակորոյս», «Կոկովանք վարդի», «Թշուառութիւն սոխակի», որոնք յուրօրինակ արձագանք են միջնադարում Արևելքի շատ ժողովուրդների մոտ լայն տարածում գտած այլաբանության: Բանաստեղծութունների հիմքում ընկած է նաև հայ միջնադարյան պոեզիայում շատ սիրված ու տարածված վարդի ու սոխակի մոտիվը: Սոխակը սիրահար բանաստեղծն է, վարդը՝ նրա սիրո էակը:

Ալամդարյանը, հետևելով միջնադարյան հայ տաղերգության ավանդներին՝ սկսած Կոստանդին Երզնկացուց և Առաքել Բաղիչեցուց մինչև Պաղտասար Դպիր ու Սայաթ-Նովա, հայտնի այլաբանությանը հաղորդում է, սակայն, սիրո ու կարոտի, անհուն ցավի ու գեղեցկության ինքնատիպ երանգներ:

Վարդի ու սոխակի այլաբանությունը հաստատելու է գալիս բնության ու սիրո հավերժության գաղափարը: Ծջմարիտ, իրական ու մարդկայնորեն հասկանալի է սոխակի վիշտը: Այս տեսակետից ուշարժան է «Թշուառութիւն սոխակի» բանաստեղծությունը:

Աղջամուղջին սոխակը սրտի տագնապով մտնում է այգի. տերևների ողջույնը, մեղմ սոսափյունն իսկ նրան սարսափ են պատճառում, որովհետև միամիտ չէ սոխակը. սև օրեր ու անիրավ հալածանքներ է տեսել կյանքում, տեղյակ է բիրտ պարտիզպանի «գռեհիկ և տմարդի» բարքին, կյանքի անողոք օրենքներին: Նա արդեն «կիրթ կիրթ» է՝ վարժված է դրանց.

Յայգուն ընդ աղջամուղջն  
Սոխակն մտեալ լայգիմ՝  
Օրջէր խի՛րտ խի՛րտ.  
Ի ձայնէ ողջունի  
Տերևոց ընդ տերևոց  
Սարսափէր շի՛րտ շի՛րտ.

Նա սեաւ ատուրց,  
Անիրաւ հալածմանց  
Էր միշտ կի՛րթ կի՛րթ.  
Չէ՛ր անտեղեակ գռեհիկ  
Եւ տմարդի բարուց  
Պարտիզպանիմ բի՛րտ բի՛րտ:

Մոտենում է սոխակը՝ հառաչելով, սրտի դողով ու բաբախով, ամեն սոսափյունի ունկն դնելով: Ինչքան մոտենում է վարդին, այնքան ավելանում է տագնապը. սիրտը տրտմություն է գուշակում և աչքերից քամում արցունքի անամոք կաթիլներ: Սոխակը մերթ սրտաբեկ հառաչում է, մերթ մեղմ երգում և մերթ լռում...

Պճնազարդ այգին՝ ծառազարդ ու ցողոտ, ավերակ է թվում սոխակին, իսկ նարդոսների, շուշանների հոգեզվարճ ու զգլխիչ բուրմունքը, թռչունների քաղցրաձայն դայլայլները, արծաթափայլ ու սառնորակ աղբյուրները՝ դահիճ ու դանակ: Տանջահար հոգին վարդից բացի ուրիշ ոչինչ չի տեսնում.

Սոխակն իմ կոյր է.  
Բաց ի վարդէ  
Ոչ իմչ տեսանէ.  
Սոխակիմ դիպամ  
Զճանապարհայն  
Ծաղկումք զանազան.  
Նա ոչ գոք էտես,  
Ոչ իմչ խօսեցաւ,  
Յոչ իմչ հայեցաւ.  
Նա զայլ ոք խնդրէր,  
Յառաջէր, հառաչէր,  
Աչօք թացօք զվարդն որոմէր:

Աստիճանաբար թանձրանում են պատկերները, իսկ այս դրամատիկ իրավիճակի լարվածությունն իր ավարտին է հասնում, երբ

սոխակը տեսնում է թփից պոկված, գետնատարած վարդը. կատարվել էր նրա տխուր կանխազգացումը.

Յանկարծ թալկացաւ,  
Կենդանի մեռաւ,  
Ուշաբարձ անկաւ,  
Ընդ թփով վարդին  
Տեսեալ գթերթ անոթին  
Ընդ պերճ երանգին  
Ակնախաբ բոսորին  
Զգոյն շառագոյն և տեղին  
Տարա՛ծ ի գետին.  
Մեծաձայն վայեաց  
Վա՛րդ իմ վա՛րդ, ձայնեաց,  
Զիւր շունչ վճարեաց:

*Սիրերզն աչքի է ընկնում նրբին կրկնություններով, որոնք մի տեսակ թախիժով են պարուրում նաև ընթերցողի սիրտը հազարաթերթ՝ «բա՛րդ բա՛րդ» թերթիկներով վարդի կորստյան համար.*

Ա՛յ անգին վա՛րդ վա՛րդ,  
Իմ կենաց զա՛րդ զա՛րդ,  
Ծոխ թերթիք բա՛րդ բա՛րդ,  
Բանիս լուր կարճ կարճ,  
Քանի ես զուարճ զուարճ.  
Տես զիմ լաց ու հառաչ,  
Զարտօսք իմ սրբեա՛,  
Զիս քեզ զոճ արա՛,  
Զիմ ողբ ու լաց մեղմեա.  
Ապա թէ ոչ՝ մեռայց.  
Յետոյ քո անագան այց ու դարձ  
Զօգնեսցեն իմոց կենաց:

*Ի դեպ, արդեն իրավացիորեն նկատված է, որ հեղինակի որոշ սուղերն ու տաղաչափությունը այստեղ մեծապես հիշեցնում են Պետրոս Ղափանցու հյուսվածքին<sup>18</sup>.*

Իմ անընման վա՛րդ, վա՛րդ,  
Պարծանք գարնան, վա՛րդ, վար՛դ  
Մատի՛ր առ իս,  
Մի՛տ դիր բանիս,  
Եւ հայեա՛ց յիս,  
Տե՛ս, թէ զիարդ կիզանիմ:

*Բանաստեղծության մեջ պատկերները հազեցած են դրամատիկ շարժումներով: Ակամայից զգում ես պճնազարդ այգու խորքը գնացող սոխակի սրտի բաբախյունը, հոգու հառաչները, տխուր կանխազգացումը.*

Յառաջեր հառաչեր,  
Սիրտ իւր թռչնակի պէս  
Դողդողայր բաբախէր.  
Քանի առ թուփ վարդին  
Մերձեճայր մօտեր՝  
Այնքան ցնորէր, քրտնէր և սարսէր.  
Սիրտ իւր գտրտմութիւն  
Ծատ ազդէր, գուշակէր,  
Զարտասուս յաչացն քամէր.  
Սրտաբէկ հառաչէր,  
Մեղմ երգէր, լռէր,  
Ամէն ձայնի ունկն դներ:

*«Կոկովանք վարդի» բանաստեղծության մեջ ևս խտացված է ճակատագրից հալածված հոգու տառապանքն իր սիրած էակի կորստյան առթիվ, որին պատկերում է դարձյալ իբրև վարդ՝ գովե-*

18. Տե՛ս է. Գևորգյան, Հարություն Ալամդարյան, էջ 139:

լով նրա պերճուկությունը, գեղեցկությունը: Տառապած սիրահարը դիմում է բնությանը, որպեսզի վերջինս կենարար ավիշ ներարկի իրեն ու իր վարդին. վաղորդայնը լուսով ցնցուղի նրան, լուսինը պարզեի «չող պանծազին», արևը՝ ջերմություն, որովհետև վշտահար հոգին, կորցնելով իր սիրուհուն, զրկվել է այդ բոլորից.

Արև բարեբար, զվարդն իմ ջեռո՛ւ՝  
Նախածագ լուսովդ, եռանդեամբ լցո՛ւ, զարթո՛ւ, փայլեցո՛ւ.  
Բակերտ է, չքնաղ, գիրգ, ջիգջ ծով սիրոյ,  
Արժանի շողոյդ ջեր, գթոյ, լուսոյ, մաքուր ի տապոյ:

Ես յանմանէն ցարդ գուրկ մնացի,  
Աչօք գողանալ զնա ոչ կարացի, շատ գուն գործեցի.  
Նախա՛տ, վա՛յ, ամօ՛թ անգութ օրհասի,  
Զօրէն անողորմ, անհաշտ ոսխի, ժանտ մարդասպանի:

*Ինչպես նկատելի է, Հայտնի այլաբանության շղարշի հետևից ամենուր իրենց զգացնել են տալիս բանաստեղծի անձնական վիշտն ու դրաման, խորապես ապրված մարդկայնորեն այնքան հասկանալի մորմոքը: Սակայն այս մոտիվի մշակմամբ նոր բանաստեղծն էականորեն տարբերվում է նախորդ շրջանի քնարերգուներից մի առանձնատկույթով, որ բխում է նրա քնարերգության ընդհանուր ոգուց: Միջնադարյան տաղերգուների ստեղծագործություններում սոխակի վիշտը հարատև է, քանի որ նրա տենչանքի առարկա վարդը վերադառնում է յուրաքանչյուր գարնան հետ. սոխակը հասնում է իր բաղձանքին՝ նոր հրապույրներով և բույրերով վերաբացված վարդին: Համեմատության համար վերցնենք, օրինակ, Գրիգորի Աղթամարցու՝ վարդի ու սոխակի այլաբանությունը («Նորին Գրիգորիսի ասացեալ»): Աշնանային պարտեզում անհետացել է վարդը, սոխակը տազնապած սրտով փընտրում է նրան՝ վախենալով իր սիրուհու ճակատագրի համար: Կասկածանքով նայում է մյուս ծաղիկներին և մտածում, թե վերջիններս, միգուցե նախանձից զրգված, ոչնչացրել են նրան, հետո անիծում է անիրավ պարտիզպանին, որ չի խնամել վարդին կամ էլ անփուլթ*

*է գտնվել... Ինչպես Ալամդարյանի, այնպես էլ Աղթամարցու մոտ սոխակի տազնապանները գնալով ահագնանում են, մեծանում է վիշտը, բայց հենց այստեղ էլ սկսվում են էական տարբերությունները. միջնադարյան տաղերգուի սոխակը նամակ է գրում վարդին՝ պատմելով իր մեծ սիրո և անհուն սպասումների մասին: Վարդն էլ իր հերթին հավաքում է ծաղիկներին, նրանց մոտ ընթերցում նամակը և պատասխանի մեջ խոստանում, որ իր սիրեցյալը փոքր-ինչ համբերի, ինքն անպայման այցի կգա նրան, և ժամադրում է պարտեզում: Եվ ահա վերստին գալիս է գարունը, փթթում են գարնանային երփնազան ծաղիկները, ու նրանց մեջ, գահավորակին պերճանքով բազմած, երևում է նաև բացարձակ գեղեցկությունը՝ ծաղիկների թագուհին՝ սոխակի սիրեցյալ վարդը.*

Յորժամ արևն ի խոյն եկեալ ժամանեաց,  
Ամպ ի վերուստ ի վայր յանկարծ որոտաց,  
Բուսան ծաղկունք լերկրի և ազգոս ազգաց,  
Վարդըն չէր ի միջին, պլպուլն որոնեաց:

Յետոյ տեսա զկանաչ տերևըն վարդին  
Այլ պատուական պայծառ որպէս առաջին,  
Վարդն էր կարմիր զգեցեալ որպէս ծիրանին,  
Ծաղկունքն հաւասար երկըրպագեցին<sup>19</sup>:

*Այդպիսին են նաև Նահապետ Քուչակի՝ մեզ Հայտնի Հայրենիներից երկուսը. առաջինը պատմում է կանաչ շապիկը կարմիրով փոխած վարդի սեթևեթանքի, երկրորդը՝ հավերժ նորոգ բնության շնորհիվ վերստին փթթած գեղեցկուհու մասին.*

Պիլպիլն ի յեփն մտաւ,  
Ի վերայ վարդին թառեցաւ,  
Եբաց զիր բարի բերան,  
Եվ ասաց մինչոր լուսացաւ.

19. Գրիգորի Աղթամարցի, Տաղեր, Երևան, 1984, էջ 104:

Վարդն ալ ի փշի միջին,  
Սուտ ի քունէ զայն իմացաւ,  
Խղդեց զիր կանանչ շապիկն,  
Զկարմիր մի շուտով հագաւ:

Եկին ու բերին խապար,  
Պիւպիւկն թէ վարդն մեռաւ,  
Պիւպիւկն ի վարդին սիրուն,  
Սև անկեց զշապիկն ու հագաւ,  
Շուտով մի բերին խաբար  
Պիւպիւկն թէ՛ վարդն եկաւ:  
Պատուեց զիր սևուկ շապիկն,  
Խատուտիկ շուտով մի հագաւ<sup>20</sup>:

*Ալամդարյանի երգերում, սակայն, վարդն ու սոխակը զուտ խորհրդանշական արժեք ունեն. հեղինակը դրանք օգտագործել է սոսկ իբրև արտահայտամիջոցներ՝ իր հոգեվիճակն առավել վառ ու ցայտուն դրսևորելու համար: Սգացողը ոչ թե սոխակն է, այլ իր սիրած էակի անվերադարձ կորուստը ողբացող մարդկային հոգին:*

*Միջնադարում Արևելքի շատ ժողովուրդների մոտ հանդիպող վարդի ու սոխակի սիրո թափառական այս մոտիվի նմանատիպ մեկնաբանումը Ալամդարյանի անհատականության արդյունքն է, որ, ինչպես արդեն իրավացիորեն նկատել է Արամ Ինճիկյանը, լիովին ներդաշնակում է նրա քնարերգության էլեգիական ընդհանուր բնույթին<sup>21</sup>:*

*Նագեղիին, նրա գեղեցկությունն ու հմայքը պատկերելու համար Ալամդարյանն անգամ չի դիմում փոխաբերությունների և համեմատությունների, որովհետև իր «սրտի թագուհին» անհամեմատելի է:*

Քեզ չի՛ք ինչ անան յոլորտս աշխարհի...

20. «Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը» (աշխատասիրությունը Հր. Թամրազյանի), Երևան, 2001, էջ 537-538:

21. Տե՛ս «Հայ մոր գրականության պատմություն», Բ. առաջին, էջ 309:

*Ալամդարյանի սիրո երգերը խորապես ապրված զգացմունքների բուռն պոռթկումներ էին, որոնք թեև չունեին միջնադարյան մեր տաղերգուների վառվռուն, շլացուցիչ գույները և կամ զգայական շերտերը, այնուամենայնիվ նոր շրջանում անձնական քնարերգության համար դառնում էին մայրուղի նախապատրաստող նվագներ:*

\* \* \*

*Ալամդարյանը բնութային երգիչ չէ. բնությունը նրա ստեղծագործության ներչնչման աղբյուրը չէ, և գրեթե աննշան է նրա զբաղեցրած տեղը բանաստեղծի սիրերգերում: Բայց, այնուամենայնիվ, հանդիպող պատկերներում այն բնավ ինքնանպատակ չէ ու էապես նպաստում է պոեզիայի խոհանարարությանը և հուզական հագեցվածությամբ օժտում սիրերգը: Հեղինակը երբեմն դիմում է բնութային՝ մեկնաբանելու համար իր միտքն ու խռովահույզ հոգին: Ահա նրա նշանավոր «Գարունը»՝ Վրթ. Փափազյանի բնորոշմամբ՝ «դառնազին թախիժով լի և քնքուշ տխրության մեջ համակված երգը, որ մինչև այժմ դեռ չէ կորուսած իր ժողովրդականությունը»<sup>22</sup>: Այն հյուսվել է 1831 թ. ապրիլի 27-ին Հաղպատում, երբ մահվան դեմ մաքառող հիվանդ աքսորականը նոր-նոր էր ազատվում խոլերայի ճիրաններից:*

*Բանաստեղծի հեծեծանքի ակունքը միայն բացառապես կորսված սերը չի եղել. դրան միացել են նաև դարանակալ ու բացահայտ բազում թշնամիների հյուսած սարդոստայնները, աքսորական կյանքի զրկանքներն ու նեղությունները... Վերածնվող, փրթթող զարնանային բնութային իր ծաղկազարդ դաշտերով հակապատկերն է սիրած էակից զրկված, թշնամիներից Հալածված բանաստեղծի հոգեվիճակի, որն այդ հակադրությունից ավելի է մոայլվում: Գարնան թովչանքն է՛լ ավելի է ակոսում նրա հոգու*

22. Տե՛ս Վրթ. Փափազյան, Պատմություն հայ գրականության, Երկրորդ գիրք, էջ 70:

վերքերը՝ հիշեցնելով իր «անդարձ գերությունը», և նա անիծում է անգամ իր ծննդյան օրը.

Յամսավերջն ապրիլի գպատուհանս բացի,  
Չձինսաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.  
Արտասուք եռանդունք գայտս իմ այրեցիմ,  
Չիմ անդարձ գերութիւն յուշն իմ մուտ անիմ:

Լեղուապէս դառնացան քիմք վհատ հոգույն,  
Չմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս:  
Ափսոս՛ս ինձ, ասացի բիր անգամ յայն օր,  
Ծատ անէծս թափեցի ի ծննդեանս վատ օր:

*Յավի ծանրութիւնից և հոսահատութիւնից «հեք այրին» թալկանում է ու ընկնում խոր քնի մեջ: Երազում նրան այցի է գալիս կենսածին Տիրամայրը և իր ամենագոր ձեռքերով հանում անհոսութեան գուբից.*

Դշխոյն մեծ անմահից էջ ինձ յայց տեսլեամբ,  
Որպէս թէ ի փոսոյ զիս ելոյզ ձեռամբ:

*Հիրավի, մի քանի ամիս հետո իրականանում է բանաստեղծի տեսիլքը. Ներսես Աշտարակեցին հաջողեցրել էր աքսորավայրից նրա այցը Քիչնէ:*

*Ազդեցիկ է նաև «Լաց դստերն Յեփթայեայ» բանաստեղծութիւնը, որտեղ հեղինակը Եփթայեի դստեր ապրումների միջոցով իր վիշտն ու ցավն է պատմում ինչպես հարազատ մարդկանց, այնպես էլ լեռներին ու հովիտներին, ծաղկափթիթ պայծառ դաշտերին ու անտառներին.*

Ա՛յ ծանօթք, լերիմք և հովիտք,  
Ա՛յ պայծառ դաշտք ծաղկափթիթք,  
Ահա ի ձէնջ հրաժարիմ,  
Փութով եդայց ի շիրիմ:

Լացէ՛ք զիս, ո՛վ անտառք, բլուրք,  
Լացէ՛ք, հարք, մարք, եղբարք և քորք,  
Չիս փոյթ զենցէ սուր ուխտիմ,  
Յօդուածքս այժմէն սարսափիմ:

*Ալամդարյանի քնարական հերոսը բանաստեղծի հոգեկան տվյալանքներն արտահայտող սիրող և տառապող մարդն է: Հեղինակը ներկայացնում է ոչ միայն իր՝ տառապալի կերպարը, այլև առհասարակ մարդ արարածի սիրո ողբերգութիւնը, համամարդկային սիրո ողբերգութիւնը: Անձնական վիշտն այստեղ դառնում է բոլոր դարերում հանուր մարդկութեանն ուղեկցող ողբերգութիւն: Տառապող կերպար է խորայնացիների զորավար Եփթայեի մինուճար դուստրը, որին պատերազմից հաղթանակորեն վերադարձած հայրը պետք է զոհ մատուցի: Չորավարի տված խոստման համաձայն՝ կզոհաբերվի նա, ով առաջինը տնից դուրս կգա՝ դիմավորելու իրեն: Եվ հորն առաջինը ընդառաջ է եկել գեղանի դուստրը: Ի դեպ, աստվածաշնչյան այս լեզենդը գեղարվեստական մշակման է ենթարկվել նաև Բայրենի կողմից, բայց եթե անգլիացի հանճարեղ գրողը շեշտադրել է հայրենասիրական պարտքի գիտակցման գաղափարը, ապա հայ բանաստեղծին, որն, անշուշտ, ստեղծագործական մղումներ է ստացել նրանից, ամենից առաջ հուզել է անհատի ապրած դրաման: Զոհաբերումից առաջ սգակիր հրեուհին խորհում է մարդկային անկատար հարաբերութիւնների ու ճակատագրի անողոք հարվածների մասին. հանգիստ ապրում են մեղապարտ հոգիները, մինչդեռ անմեղ կյանքերը վերանում են, պատանքի է վերածվում իր հարսնութեան քողը, իսկ պճնազարդ հարսնարանը՝ խոր գերեզմանի:*

Աւաղիկ երամք հրեշտակաց  
Առ երկնիք կան թևատարած.  
Չիս հրաւիրեն յաղինն բաց,  
Չիս կոչեն հարսն հօր փառաց:

Նկարեմ քօղն իմ հարսնութեան  
Փոխարկի ի պատան թաղման.  
Իմ պճնազարդ հարսնարան  
Եղև այս խոր գերեզման:

Ալամդարյանը ստեղծագործական մղումներ է ստացել նաև իտալացի բանաստեղծ Տորկվատո Տասսոյից՝ թարգմանելով վերջինիս «Երուսաղեմն ազատագրված» պոեմի 4-րդ երգի մի հատված՝ «Ստորագրուածին Արմիդեայ» վերնագրով: Թարգմանված հատվածի ընտրութունը վկայում է, որ հայ բանաստեղծին ամենից առաջ հետաքրքրել են իտալիայի Վերածննդյան խոշորագույն վարպետներից մեկի աշխարհիկ տրամադրութունները, ավելի որոշ՝ գեղեցկուհի Արմիդան՝ իր կանացի բոլոր հմայքներով:

Նորատունկ անույ իրանն է անան,  
Ուղիղ, դիրարթեք, բարձր, պատուական.  
Ոսկեգոյն հերաց հարուստ հիւս շքեղ  
Յակն ականողին արկանէ խտտիղ.  
Ի բնէ եմ գանգուրք այս հերք պաշտելիք  
Սիրահար հողմոց քնքուշ խաղալիկք:  
Հայեացք անգելիք՝ սիրոյ տեսարան.  
Յայտս անրա փթթին անրոս, վարդ, շուշան:  
Ի վերայ շրթանց, կրից շնչարանին,  
Ուր մոլին անքա, կիզին, տոչորին՝  
Ճոխափայլ պանծայ վարդ կոկոնապատ,  
Ախորժ, հոգեհան, յերանգ բոտորին:

\* \* \*

Ալամդարյանը գրել է նաև բարոյական, ազգասիրական խոհեր արտահայտող բանաստեղծութուններ, կրոնական երգեր: Լինելով իր դարաշրջանի հարազատ զավակը և ինքն էլ կրելով հոգևորականի վեղար՝ հեղինակը, ինչ խոսք, դրանց մեջ պետք է արծարծեր

կրոնաբարոյախոսական զանազան տրամադրութուններ, քրիստոնեական հավատքին ծառայելու պահանջ: Բայց, այնուամենայնիվ, դժվար է նկատել, որ դրանց ենթատեքստերում վերստին ցուանում են քնարերգակ բանաստեղծի գրական ըմբռնումներն ու ստեղծագործութայն աշխարհիկ ոգին, ժամանակի աշխարհիկ մարդու իրարամերժ հուզաշխարհը: Այդ թեմաներով հյուսված գրեթե բոլոր երգերը՝ «Աղօթք», «Աղերս առ ամենօրհնեալ Տիրամայրն», «Յորդորակ առ ուխտաւորս», «Կողկողանք առ Խաչ Փրկչին», «Աղերս առ նախավկայ ամլորդին», «Սաղմոս ՄԵ», «Սաղմոս ՃԼԹ», «Բանք մօր խաչելոյն», խորապես ապրված մարդկային զգացումներ են և արծարծում են ամենատարբեր խոհեր: Թեև բազմազան են հարցադրումները, հերոսները, թեմաները, սակայն նույնն է բանաստեղծի հայացքը կյանքի, մարդու և աշխարհի նկատմամբ:

«Սաղմոս ՄԵ» խորագրով քնարական բանաստեղծութայն մեջ Ալամդարյանը բողոքում է մարդկային անկատար հարաբերութունների, ամեն քայլափոխի հյուսվող որոգայթների դեմ, մարդկանց զնահատում հասարակական օգտակարութայն չափանիշներով և առանձնացնում ընդհանուրի գործին նվիրված ազնիվ ու անանձնական հոգիներին:

Աստուած, լուր՝ ձայնի իմում, չարք զարարածդ տագնապեմ.  
Զիս իբրև կաւ գոեհաց՝ այպանելով ընդոտեմ:

Լալագին առ քեզ գոչեմ, հալը իմ, լոյս, կեանք, ապաւեմ,  
Զի անցա դաւք անդադար յիս տեղան անձրևօրեմ:

Կյանքի անարդարութունների դեմ է ուղղված նաև «Սաղմոս ՃԼԹ» բանաստեղծութունը: Ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այս քերթվածը, անշուշտ, կրում են անձնական կյանքի նոտաներ. վերապրելով իր հաճախագեպ ծանր ու ցավալի կացութայնը և երկյուղելով չարակամների դավերից՝ բանաստեղծը թախանձում է Աստուծուն հեռու պահել իրեն թշնամիների հետապնդող հալածանքից:



Ապրեցո՛ղ զիս, Տէր, ի մարդոյ չարէ,  
Զերծո՛ղ զիս, փրկեա՛լ յանիրաւ առնէ.  
Սիրտ նորա է վիճի խորհրդոց չարաց,  
Վիճի և կոտուց, նեճգոտ խաբասաց:

... Խափանել խորհի նա զգնացս իմ բարի,  
Գաղտ որոգայթել զանձն իմ դարանի.  
Թակարդ հնարի՝ գայթ ոտից իմոց,  
Շուրջ զիմն դնէ զանթիւ հաղբ դաւուց:

*Ալամդարյանը ողբում է դառնագին, հեծեծում: Նրա հուսահատ հոգին, որ մահվան մեջ էր փնտրում իր հանգրվանն ու միակ սփոփանքը, հանկարծ արտասովախառն ծառս է լինում ու աղերսում Տիրոջը՝ ապրեցնել իրեն, պաշտպանել դարանակալ չար ու անիրավ մարդկանցից:*

*Գեղեցիկ ու ազդեցիկ է նաև «Կողկողանք առ Խաչ Փրկչին» աղոթք-բանաստեղծությունը, որտեղ հեղինակը դարձյալ խոսում է իր հակառակորդների լարած որոգայթների մասին ու խնդրում Տիրոջը փրկել իրեն, բժշկել վերքերն անհուն ու պաշտպանել իր հովանու ներքո:*

Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,  
Յո՛ւ և գնացի՝ միշտ գտի դարան.  
Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ գերծայ:

Առ դրան տաճարիդ արդ կամ գետնամամծ,  
Հայցեմ զօգնութիւն Խաչիդ պարծանաց.  
Յիս գթա՛, խնայեա՛, զանհուն վէրս իմ բժշկեա:

*Այդ մի քանի աղոթք-բանաստեղծություններով, ինչպես դիպուկ նկատել է Մ. Աբեղյանը, Ալամդարյանը «միանգամից բարձրացնում է մեր կրոնական սառն բանաստեղծությունը, ցույց տալով, որ, ինչպես ամեն քնարերգություն, ավելի ևս կրոնականը, նույնիսկ եթե սաղմոսներից է տաղաչափված, պետք է հորինվի*

*միայն անձնապես զգալուց հետո և նյութ պիտի ունենա մարդուս ապրածը, և ոչ թե սարքվի մտածած ճարտասանությունը»<sup>23</sup>:*

*Ալամդարյանը գրել է նաև սյուժետային բանաստեղծություններ՝ Հին կտակարանի մոտիվներով: Ուշագրավ է «Ողբերգութիւն Իսրայելի» բանաստեղծությունը: Սա, կարելի է ասել, դրամատիկական փոքրիկ պոեմ է, ուր ներկայացված է բիբլիական Հակոբի ողբերգությունը նրա միակ որդու՝ Հովսեփի եղբրական մահվան առթիվ: Այստեղ ևս դժվար չէ նշմարել բանաստեղծի ապրած անձնական դրաման. չէ՞ որ ծաղիկ հասակում վախճանվել էր նաև իր անդրանիկ զավակը՝ Հովսեփ մանուկը: «Այս Հովսեփ մանկան տարածամ մահը, — պատմում է Գ. Պատկանյանը, — խանգարեց նորա կենաց կանոնավոր ընթացքը: Անմխիթար թախիծը նրա զվարթ բարբրի տեղը սերմանեց սևամաղձություն, որ պատճառ տվեց նրան զանազան եղբրերգական բանաստեղծություններ շարագրել»<sup>24</sup>: Եվ հենց անձնական այս խոր դրաման էլ հիմք է հանդիսացել հյուսելու հուզական շնչով հագեցած աշխարհիկ մի ազդեցիկ երգ, ուր հոգեբանական համոզիչ գծերով ներկայացվում է որդեկորույս հոր իրական ու կենդանի կերպարը: Կրոնական նյութի միջոցով բանաստեղծը խոր դրամատիզմով փաստորեն ողբում է իր սիրելի որդու մահը: Ալամդարյանը հիմնականում օգտագործել է բիբլիական Հակոբի ողբերգության այն բնորոշ գծերը, որոնք համընկնում են իրեն բաժին ընկած դժբախտությունը: Գուժկանը, «չքնաղ հրեշտակ պատանու»՝ Հովսեփի արյունաթաթավ պատմուճանը ձեռքին, ներկայանում է Հակոբին և հայտնում, որ գազանները մթին անտառում պատառոտել են նրա «անմեղ մանկանը»: Միրասուն որդու մահվան բոթը հիմնովին ցնցում է «հինավուրց, ընտիր, մաքուր» ծերունուն:*

Ա՛խ, Յովսէ՛փ Յովսէ՛փ, ցուպ իմ ծերութեան,  
Շնորհալի, քաղցրիկ, քնուշ, գեղազան,

23. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 621:  
24. «Հյուսիս», 1863, թիվ 1, էջ 6 (Գ. Պատկանյան, Վարքագրություն Հարություն վարդապետ Ալամդարյան):

Աչեղ, մրայօն, կարմրայտ, քաղցրաբամ,  
Խարտեաշ, գանգրահեր, մանուկ անմանա.

... Ո՛հ, որդեա՛կ որդեա՛կ, զիս բարձ, առ քեզ տար,  
Մի՛ թողուր զիս աստ տանջիլ չարաչար.  
Ես՝ քո մոլորակ, դու՝ արփի պայծառ.  
Առանց քոյ զինն պատեալ է խաւար:

*Իսրայելի հարսներն ու թոռներն աշխատում են սփոփել ողբա-  
ցյալ ծերունուն, բայց զուր. անչափելի է նրա վիշտը: Զավակի  
կորստյան վիշտը նորոգում է կնոջ՝ Ռաբելի վաղաժամ մահվան  
հին, բայց դեռ մխացող վերքը: Որքա՛ն հոգեբանորեն ճիշտ,  
հետևաբար և համոզիչ է իր սիրելիների կորուստը ողբացող  
«տրտմալի այրու» ցասումը «համայն կենդանեաց» ատելի մահ-  
վան գերանդու դեմ:*

Մահաշունչ, ժոռատ, կարճու՛նչ ծերունի,  
Ճաղատ, շիլ, կաղ, հիւծ, խրտուիլ անճոռնի,  
Մեռելոց իշխան կմախք սուկալի,  
Համայն կենդանեաց տեսիլ ատելի,

... Անգու՛թ, ձգեցեր զքոյ սուր գերանդի,  
Հնձեցեր լերկրէ զիմ Ռաքէլ բարի,  
Զիս ի սուգ արկեր, յողբ անտանելի,  
Զիս միայն թողեր այրի տրտմալի:

*Իսկ ու՛մ համար է ավելի դժվար՝ նրա՞, ով մեռնում է, թե՞ նրա  
հարազատների: Բանաստեղծի պատասխանը հետևյալն է.*

Զէ՛ ան վատաբաղդ, որ վաղ մեռանի,  
Այլ որ լետ մահու սիրելւոյն ապրի.  
Արդ կեանք իմ մահ է, մահ՝ կեանք ցանկալի.  
Փափագիմ դնիլ յորովայն շիրմի:

*«Ողբերգութիւն Իսրայելի» բանաստեղծութիւնը հայրական  
սիրուն նվիրված արվեստի մի գեղեցիկ էջ է, որը մեր քնարերգու-  
թյան մեջ առաջինը ներկայացնում է Ալամդարյանը:*

\* \* \*

*«Զափաբերականք» ժողովածուում տեղ են գտել նաև ազատա-  
սիրական, հայրենասիրական բանաստեղծութիւններ («Տաղաչա-  
փութիւն», «Տաղերգութիւն», «Տեսիլ», «Նիւթք նախապատրաս-  
տեալք», «Տապանագիրք»...), որոնք հայրենիքի անձնվեր զինվորի  
աշխարհայացքի գեղարվեստական ուրույն անդրադարձներն են:*

*Բանաստեղծը հայոց պատմութիւնը նայում է սթափ հայաց-  
քով, հիշում անցյալի սխրագործութիւնները, խորհում հայութեան  
անցած փառքի ու կորցրած պետականութեան շուրջ, երագում հայ-  
րենիքի գեղեցիկ գալիքի մասին: «Տաղերգութիւն» բանաստեղ-  
ծութեան մեջ հեղինակը միտումնավոր խառնում է դարաշրջաննե-  
րը և պատկերում մի հավաքական «նորահրաչ չքնաղ» գորահան-  
դես՝ կազմված «քաջալանջ, արի, սաղաւարտ ի գլուխ» աղեղնա-  
վորված հայ մարտիկներից, որոնք պատրաստ են թոթափելու կե-  
ղեքիչների լուծը և ազատագրելու իրենց եզերքը: Նրանց մեջ է  
«անզոյգ Պետ» Հայկ Դյուցազնը, որ ոչնչացրել է Բելին ու դեկա-  
վարում է մարտը, այնտեղ են նաև մյուս քաջագունները՝ Արամը,  
Պարուրը, Արան, Վաղարշակը, Խոսրովը, Վահագն ու Վահեն...*

Հայկ է, բազմականք, մերն անզոյգ Պետ, Հայր, Բելայ գլխահար,  
Հայկայն է ստուերս, նորին կերպարան, պատկեր անվթար.

Ա՛խ, ուստի՞ եմուտ ան յայս տեսարան, յայս յարկ պերճափառ,  
Եւ զի՞ քայլարկէ անկիւն յանկեճէ՛ խրախ, յուսապատար.

Լո՛ւել հրամայէ, յայտնել խափանէ,

Զիտ մուտն աստ՝ գաղէ, խայտայ, արտասուէ:

Ի թիկանց վեհիս անաքայլ ճեմեն Արամ մեծ անուն,

Զարմայր սաստ քաջաց, Պարոյր թագապէրճ, Արայն քաջ,  
 սիրուն,  
 Արտաշէս աշխոյժ, Վաղարշակ խոհեմ, Խոսրով քաջագուն.  
 Զուգընթաց սոցին այլ ճեսք դիցազաւաց ակնապիշ կառուն.  
 Վահագն աննման, Վահէ, քաջն Վան,  
 Անուանին Տիգրան՝ յայսմ խմբի կան:

*Խորապես մտահոգված Հայաստան աշխարհի քաղաքական բախտով՝ Ալամդարյանը յուրովի կամրջում է անցյալն ու ներկան, արծարծում ազգային հպարտութեան թեման՝ տենդագին բորբոքելով հայկական ոգու հուրը և հայրենասիրական կայծեր արթնացնելով հայ սերունդների երակներում.*

Եւ զի՞ սատ խմբին ստուերք վեհագանց տանս  
 Աքսանազեան.□  
 Ի զնին իջին ի տես հանդիսի որդւոց զարգացման.  
 Արդ ծայտին, խնդան, սիմեանց ակնարկեն, բայց  
 բառնան կական,  
 Զի մեկնէ զնոսա ի մէնջ մէգ մոլար կոոց պաշտաման:  
 Ո՛հ, մեկնին, ցրուին, ծխօրէն ցնդին.  
 Արիք երկնչին, խուճապին, փախչին:

*Արևելյան Հայաստանի՝ պարսկական անագորուէն լծից ազատագրվելու յուրօրինակ արձագանքն է «Տեսիլ» բանաստեղծութիւնը՝ թվագրված 1 հոկտեմբերի 1827 թ., այսինքն՝ հայրենիքի փրկութեան օրը:*  
 Գիշերային աղջամուղջին անծանոթ մի դաշտում թափառում է բանաստեղծը, չի նշմարվում որևէ շավիղ, իսկ երկնքի կապույտ քողի տակ կուտակվում են սևաթուշր ամպեր: Այլազան կասկածներէ անհուշում են նրա սիրտն ու միտքը, և բանաստեղծն ակամայից մեծ դժվարութեամբ շարժվում է դեպի նշմարվող լեռան կատարը՝ հաղթահարելով բազում խոչընդոտներ: Բայց մի անտես ձեռք, մի ոգի անկուններից հետ է պահում նրան՝ ապահով դուրս բերելով

*լայնահուն պողոտա: Ահա երևում է երկնահաս Արարատը՝ Հայոց հավերթ գոյություն խորհրդանիշը: Բանաստեղծի առջև բացվում է ահեղ մարտի մի տեսարան. հուժկու պայքար է տեղի ունենում բնություն ուժերի միջև. «հոգեբեկք կայծակունք» են ցոլանում ամպերի մեջ, մրրկահույզ փոթորիկն է սուլում, սասանվում են լեռները, աստղերը՝ թալկանում, իսկ երկինքը համբառնում է ու լույս ցոլում... Մահվան սարսափն է պատում բանաստեղծին, բայց շուտով նրա շուրջն ամեն ինչ խաղաղվում է, և Ամենաբարձրյալը հրամայում է տոնել Հայոց աշխարհի ազատությունը.*

Հրամայէ. «Մերկասցի՝ քորձ սգոյ Հայաստան,  
 Պճնէսցի՝ յիր շքեղ ոսկեխալտ պատմութեան,  
 Լուսասցի՝ յարտասուաց դարաւոր պատմութեան,  
 Խնկեցցի՝ հոտ յանոյշ երկնաբոյս կնդրկան:  
 Տու՛ք մնա զքօղ կարմիր նախեղակ հարսնութեան,  
 Հնչեցե՛ք յարարածս գերգ փառաց յաղթական.  
 Քարասիրտ, ոխերիմ, խորամանկ, անպիտան  
 Թշնամիք եղկելոյս առ ժամայն բերկրութեան՝  
 Պրկեցցի՛ն ի կապանս անազատ գերութեան,  
 Մատնեցցի՛ն չարաչար անվախճան գեղութեան:

*«Տեսիլը» Ալամդարյանի քաղաքական երազանքների իրականացումն է, «Հայկայ սեռի յանաղարտ խնդուլթեան» վառ արտահայտությունը.*

... Դարն ոսկի մոռացեալ՝արդ կրկին յայտնեցի,  
 Սեռն Հայկայ յանաղարտ խնդութիւն զմայլեցցի:

\* \* \*

*Հ. Ալամդարյանի գրչին է պատկանում նաև «Հոամիզդ և Զենոբիա» պատմական անավարտ ողբերգությունը, որը պատմական թեմայով գրված առաջին երկերից մեկն է հայ գրականության մեջ:*

ժամանակակիցների վկայությունները՝ այն գրվել է հեղինակի կյանքի վերջին տարիներին՝ 1833-34 թթ. Նոր Նախիջևանում: Այդ ողբերգությունն մասին առաջին անգամ հիշատակել է «Հայաստուն» հանդեսը 1925-ին<sup>25</sup>, այնուհետև տեղեկություններ են հաղորդել Ա. Երեմյանը<sup>26</sup>, Վ. Թերզիբաշյանը<sup>27</sup> և ուրիշները, իսկ Արամ Ինճիրկյանը, համադրելով այդ գործի մասին ցարդ եղած բոլոր կարծիքները, եզրակացրել է, որ «Հռամիզդ և Զենոբիա» անավարտ ողբերգությունը երբևէ չի տպագրվել և չի բեմադրվել: Բանասերը, նաև համեմատելով ոուս դրամատուրգ Ա. Գրիբոյեդովի և Ալամդարյանի համանուն ստեղծագործությունները՝ առաջինի նախագիծը, երկրորդի անավարտ ձևագիրը, իրավացիորեն մերժել է այն տեսակետը, թե իբր հայ գրողի ձեռագիր պիեսը գրվել է Գրիբոյեդովի անմիջական տպավորության տակ, և նկատել է, որ դրանք «բոլորովին տարբեր ստեղծագործական հղացումներ են. ընդհանուրը միայն նյութն է, խորագիրը և գործող անձանց մի-երկուսի անունները»: «Այն փաստը, սակայն, շարունակել է գրականագետը, որ ոուս մեծ դրամատուրգը և հայ ականավոր բանաստեղծմանկավարժը գրեթե միաժամանակ ձեռնարկել են գրելու պատմական ողբերգություն՝ նյութ ունենալով Հայաստանի միևնույն պատմաշրջանի անցքերը, վկայում է, որ նրանք Թիֆլիսում, թերևս հենց Ներսիսյան դպրոցի վերնահարկում գտնվող «Ազնվականաց կլուբում», որ, սովորաբար, լինում էին ոուս պետական և զինվորական գործիչները, հանդիպումներ են ունեցել, զրուցել են իրենց սրտին մոտ գրական խնդիրների շուրջը, մտքեր են փոխանակել Հայաստանի անցյալի ու ապագայի մասին, միմյանց են հաղորդել իրենց ստեղծագործական մտահղացումները՝ ունենալով միանգամայն ուրույն ու տարբեր քաղաքական հայացքներ և էսթետիկական ըմբռումներ»<sup>28</sup>:

25. Տե՛ս «Հայաստուն», Բանդե, Բարու, 1925, թիվ 1, էջ 64-65:

26. Տե՛ս Ա. Երեմյան, Ռուսախոս թատրոնի պատմությունը, Ա. Բատոր, Վենետիկ, 1933, էջ 82-83:

27. Տե՛ս «Տեղեկագիր հաս. գիտ.», 1956, թիվ 3, էջ 57-68:

28. Ա. Ինճիրկյան, Հարություն Ալամդարյանի գրական ժառանգությունը, «Տեղեկագիր հաս. գիտ.», 1957, թիվ 9, էջ 66:

Ողբերգության նյութը վերցրած է մ. թ. առաջին դարի դեպքերից, երբ պարսից Վաղարշ Ա (Վուրգես) թագավորը, օգտվելով հայ նախարարների երկպառակություններից, ինչպես նաև հայ և վրաց ֆեոդալների թշնամական հարաբերություններից, արշավում է Հայաստանի վրա:

Ալամդարյանի պատմական թատերախաղում գերիշխող է հայրենիքի ազատագրության գաղափարը: Այնտեղ «հետադարձ» արձագանք են գտել քաղաքական այն դեպքերը, որոնք բախտորոշ նշանակություն ունեցան Արևելյան Հայաստանի համար, և որոնց ականատեսն էր հեղինակը:

Գլխավոր հերոսի՝ Հռամիզդի միջոցով գրողն իր խոր ատելությունն է արտահայտում պարսկական նվաճողների դեմ, դատապարտում պարսիկ իշխանների ազատությունն ու ընչաքաղցրությունը: Պիեսը գրված է հայրենասիրական կրքով, պաթոսով և Հայոց աշխարհի նկատմամբ տածած խոր սիրով:

Հայաստան չքնաղ ակն է աշխարհի,  
Աղբիր ճոխութեանց՝ փարթամ բարելի,  
Բազմամարդ, իզոր, միշտ անպարտելի,  
Է Եդեմ երկրորդ՝ մայր մարդկան ազգի:

Դժբախտ է, սակայն, Հայաստանը, որ ներքին երկպառակությունների հետևանքով ոտնակոխ է լինում բազմաթիվ թշնամիների ասպատակություններից:

«Հռամիզդ և Զենոբիա» պատմական ողբերգությունը 19-րդ դարի 30-ական թվականների ազգային ինքնագիտակցության արտահայտություններից մեկն է ժամանակի հայ դրամատուրգիատուրգ:

\* \* \*

Հ. Ալամդարյանի քնարերգությունը, թվում է, հարուստ չէ բանաստեղծական ձևերի ու չափերի բազմազանությամբ, սակայն

մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը նրանում կիրառել է չափածոյի կառուցման ամենատարբեր հնարքներ ու ձևեր, բանաստեղծության կառուցման բազմապիսի եղանակներ: Ինչպես նկատել է Մ. Աբեղյանը, Ալամդարյանը բանաստեղծություն գրել սովորել է Աստրախանի Աղաբաբյան դպրոցում իրեն դասավանդող ուսուցչից՝ Սերովբե Պատկանյանից. «Սերովբե վարժապետը, որ իր ժամանակին գիտնականի համբավ ուներ և միաժամանակ պարապում էր ոտանավորներ գրելով, անպայման բանաստեղծության սեր է զարթեցրել յուր աշակերտի մեջ և ոտանավոր գրելու արվեստը սովորեցրել նրան»<sup>29</sup>:

Ալամդարյանի բանաստեղծական փորձերն, անշուշտ, դուրս չեն գալիս մեր չափածոյի ավանդական ձևերի սահմաններից, բայց այդ շրջանակներում անգամ, խուսափելով միօրինակությունից, իր 32 բանաստեղծությունները նա կառուցել է ամենատարբեր չափերով, սկզբունքներով ու եղանակներով:

Ինչպես հայտնի է, հայ բազմադարյան բանաստեղծության հիմնական տարրերը վանկային չափերն են, այսինքն՝ տողերում հավասար թվով վանկերի առկայությունը, և տողամիջյան դադարների (հատածների) միջոցով նույնաքանակ վանկեր ունեցող անդամների առանձնացումը ռիթմի ստեղծման հիմնական գործոնն է: Վանկային ոտանավորի ամենատարածված չափը հայկական պոեզիայում 10 վանկանի տողն է (5+5 ներքին բաժանումով), որը մյուս չափերի նկատմամբ բոլոր ժամանակներում բացարձակ գերակշռություն է ունեցել: Եվ առհասարակ 5 վանկանի անդամները՝ տարբեր զուգորդումներով (5, 10 կամ 15 վանկանի տողերում), եղել և մնում են մեր պոեզիայի ռիթմական հիմնական միավորը: Հետաքրքիր է, որ նմանատիպ պատկեր ենք տեսնում նաև Ալամդարյանի «Չափաբերականքում», որտեղ բանաստեղծությունների ուղիղ կեսը (16 բանաստեղծություն) գրված է 5 վանկանի անդամների ամենատարբեր զուգորդումներով: Ընդ որում, դրանց մեջ բացարձակ մեծամասնություն են կազմում 10 (5+5) վանկանինե-

րը: Ժողովածուն բացող հենց առաջին բանաստեղծությունը («Ամենեւին ես գեղեցիկ...») գրված է այդ չափով:

**ՆԱԶԵԼԻՈՅՍ** դէսքն էր / ճերմակ ու կարմիր,  
Հրաշագեղ, չքնաղ, / անմահ ումեք:  
Ծնորհաշուք հասակն / չէր երկայն կամ ցած,  
Միջակ և քնքուշ՝ / զարմանք տեսողաց:

Նույնատիպ տաղաչափական կառուցվածք ունի նաև նշանավոր «Ողջոյն հրաժեշտի գաւակաց իմոց»-ը:

Մի՛ արտասուէր, Հայր, / մի՛ սգար ողբար,  
Արտասուք գքեզ / մաշեցիմ իսպառ

Ժողովածուի բանաստեղծություններից երեքը գրված են 15 (5+5+5) վանկանի չափով, որը 10 վանկանիների համեմատ ավելի երկարաշունչ և հանդիսավոր է: Ահա մի հատված «Տաղաչափութիւն»<sup>30</sup> բանաստեղծությունից.

Արշալոյս ատուրս / սուրբ ջուրք սրկեալ / լուսապեճ զարփիմ՝  
Լանջակցեալ անս / հանէ խնդագիմ / յիւր ծիր երկնայիմ.  
Մաղթեմ իրերաց, / պարգևիչ ան լոյս / մարդկան երկրածիմ՝  
Նոր օր, ան տարի, / ան վաստակ, զանուն, / ան գործ  
պանծագիմ:

10 և 15 վանկանի տաղաչափերի զուգորդումներով է գրված «Տաղերգութիւնը», որտեղ 15 (5+5+5) վանկանի քառատողերին հաջորդում է 10 (5+5) վանկանի երկտողը, որն արդեն ունի այլ հանգավորում և կատարում է յուրօրինակ կրկնադարձ դեր: Մեկ այլ՝ «Կոկովանք վարդի» բանաստեղծության մեջ կանոնավոր կերպով իրար են հաջորդում 10 և 15 վանկանի տողերը, ընդ որում

29. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 610:

30. Տաղաչափություն Աշանակել է չափածո տաղ, ոտանավոր:

կարճ տողերի սկզբնատառերի միջոցով կառուցվում է ակրոստիքոս՝ **ՅԱԼԱՄԴԱՐԵԱՆ**:

Հետաքրքիր է, որ 5 վանկանի անդամների բացարձակ գերիշխանությունը չի խանգարել, որ բանաստեղծը լայնորեն կիրառի նաև այլ չափեր, որոնք նույնպես լայն տարածում ունենին հայ պոեզիայում: Մասնավորապես, դրանք 8 (4+4) վանկանի տողաչափերն են, որոնք խոսքն ավելի երգեցիկ ու սահուն են դարձնում:

Յառաօտուց / ի յանկողնի  
Մեր անգեղություն / զիս խորովէր.  
Անքուն զգիշերն / ես անցուցի,  
Զի տանջէր զիս / անրա պատկեր:

Ալամդարյանը կիրառել է նաև 12 (6+6) և 11 (6+5) վանկանի տողաչափեր, որոնք ավելի հանդարտ ընթացք են հաղորդում խոսքին: Այդ չափերով են գրված «Տեսիլ», «Յորդորակ առ ուխտաւորս», «Գարուն» բանաստեղծությունները: Հայ միջնադարյան և նոր ժամանակների պոեզիայում լայն տարածում ունեցող չափերից մեկով՝ 7 (4+3) վանկանի տողերով է գրված նաև Ալամդարյանի նշանավոր «Պարերգությունը», որը մեր քնարերգության գոհարներն է: Այս կարճ տողերի, ինչպես նաև 4 և 3 վանկանի անդամների պարբերական կրկնությունը բանաստեղծական խոսքին հաղորդում է արտակարգ երաժշտականություն՝ այն դարձնելով իսկական պարերգ:

Յերկու ձեռքն / երկու մոմ՝  
Ինձ ընդ առաջ / ել յիր տան.  
Մի՛ հարցանէք / ո՛վ էր ան,  
Հրեշտա՞կ, թե՛ / կոյս լուսագեղ:

Շատ ինքնատիպ տաղաչափական կառուցվածք ունի «Սոխակ ի հոգեվարս» բանաստեղծությունը: Այստեղ հնգատող տների առաջին չորս տողերը 14 վանկանի են, որոնք ունեն 4+4+3+3 ներքին

բաժանումներ, իսկ վերջին՝ հինգերորդ տողը, 11 վանկանի է, որտեղ երկրորդ եռավանկ անդամը բացակայում է (4+4+3): Վերջին տողի կարճությունը կարծես կրճատում է ռիթմը և կտրուկ ավարտ հաղորդում բանաստեղծական տանը:

Ա՛ն քեզ յաւանդ / զողջոյն իմ սիրտ, // վա՛րդ պայծառ,  
/ բոցավառ.

Որ և եղէց՝ / միշտ քո եղէց // սիրահար, / սրահար,  
Լալով մեկնիմ, / կեա՛նք իմ, ի քէն // ոգեսպառ, / ոչ իսպառ.  
Փոյթ չքասցիմ / բուքք ձմերանս, // չարաչար, / խոտվարար.  
Ի քաղցրաշունչ / գարնանն է մեր / մխիթար:

Ժողովածուում կա նաև 14 (7+7) վանկանի տողերով գրված մի բանաստեղծություն, որը բավական հազվադեպ հանդիպող չափերից է: Այդպիսին է «Սաղմոս ԾԵ»-ն, որտեղ երկարաչունջ տողերն ու անդամները աստվածաշնչյան սաղմոսների նմանություն են ստեղծում:

Աստուած, լու՛ր ձայնի իմում, / չարք զարարածդ տագնապեն.  
Զիս իբրև կառ գոեհաց՝ / այպանելով ընդոտանն:

Լալագին առ քեզ գոչեմ, / հա՛յր իմ, լոյս, կեանք, ապաւեն.  
Զի անցա դաւք անդադար / յիս տեղան անձրևօրէն:

Քիչ չեն նաև խառը չափերով գրված բանաստեղծությունները, որտեղ չկա որևէ կանոնավորություն. տողերը հաճախ տատանվում են 4-9 վանկերի սահմաններում, ինչը խոսում է այն մասին, որ այստեղ արդեն գործ ունենք ոտանավորի ազատ չափերի հետ: Այդպես է գրված, օրինակ, «Թշուառութիւն սոխակի» բանաստեղծությունը, որտեղ ռիթմի հիմնական գործոնն արդեն ոչ թե վանկային հավասարությունն է, այլ յուրաքանչյուր երեք տողը մեկ կրկնվող ուժեղ հանգր: Ահա բանաստեղծության տներից մեկը.

Յայգուն ընդ աղջամուղչն  
Սոխակն մտեալ յայգին՝  
Օրջեր խի՛րտ խի՛րտ.  
Ի ձայնէ ողջունի  
Տերևոց ընդ տերևոց  
Սարսափէր շի՛րտ շի՛րտ.  
Նա սեաւ աւուրց,  
Անիրաւ հալածմանց  
Էր միշտ կի՛րթ կի՛րթ.  
Չէ՛ր անտեղեակ գոեհիկ  
Եւ տմարդի բարուց  
Պարտիզպանին բի՛րտ բի՛րտ:

Ինչ վերաբերում է բանաստեղծությունների հանգավորմանը, ապա պետք է ասել, որ այստեղ Ալամդարյանը բավական մոնոտոն է միօրինակ է. նրա հանգերը ձևավորվում են մեծ մասամբ մեկ հընչյունի կամ վանկի կրկնության միջոցով: Այդպիսին էին հայ միջնադարյան տաղերգուների (Ֆրիկ, Քուչակ և այլք) բանաստեղծական հանգերը: Ալամդարյանի ոտանավորներում հանգերը կառուցվում են պարզ վերջավորություններով, ինչպես՝ **զիս-իս-հողիս, վեր-սէր-մեր, կուսին-խաչին** և այլն: Ընդ որում, նա մեծ մասամբ կիրառում է կից հանգավորում. միայն մեկ բանաստեղծության մեջ՝ «Անուրջք»-ում, հանդիպում ենք քառատող տների խաչաձև հանգավորման.

Միշտ մտախառն, / միշտ կաթոգին,  
Ալեկոծեալ / անու անան.  
Դեղն իմ ցառոց / սերն էր անգին,  
Բայց չերևեր / անրայն անան:

Շատ հաճախ բանաստեղծության մեջ ամեն մի տուն բոլոր տողերում ունենում է միևնույն հանգավորումը: Երբեմն էլ ողջ բանաստեղծությունն է գրվում նույն հանգով, ինչպես, օրինակ, «Կոծ մեղկաղէտ ծնողաց...»-ը, «Աղօթքը», «Ապաշաւը», ինչը, անշուշտ,

որոշ միապաղաղություն է հաղորդում ասելիքին: Ժողովածուում կան նաև անհանգ բանաստեղծություններ, ինչպես «ՆԱԶԵԼԻՌՅՍ ղէմքն էր ճերմակ ու կարմիր...»-ը, «Պարերգութիւնը» և այլն: Ալամդարյանի կիրառած հանգերը բոլորն էլ արական են (իգական հանգերը մեր պոեզիայում լայն տարածում ստացան 20-րդ դարի սկզբներից), սակայն «Կոծ» բանաստեղծության մեջ մենք հանդիպում ենք իգական հանգերի ու վերջավորությունների, որոնք կրկնվում են նաև տողամիջում.

Թառանջք՝ մեզ կեր ըմպելի եմ,  
Մերոց խոցից դեղ ու ճար եմ. ո՛հ, վերք մեր շատ մեծ եմ:

Բազմաբնույթ են նաև Ալամդարյանի կիրառած տները. այստեղ կարելի է հանդիպել ամենատարբեր դրսևորումների՝ երկտող, եռատող, քառատող, հնգատող, վեց, ութ, տասը, տասներկուտողանի, ինչը վկայում է, որ բանաստեղծը ձգտել է խուսափել միօրինակությունից և ամեն անգամ իր ասելիքին հաղորդել նոր ձև ու չափ:

Այս ամենին ավելացնենք նաև, որ «Չափաբերականք» ժողովածուի 32 բանաստեղծություններից 14-ը աղբյուրագրություններ են, որոնցից 11-ը՝ **ՅԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ, ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ** կամ **ԱԼԱՄԴԱՐԵԱՆ**, 1-ը՝ **ՅԱՐՈՒԹԻՒՆ**, 1-ը՝ **ՀՌԻՓՍԻՄԷ**, իսկ մեկն էլ՝ **ՄԿՐՏԻՉ**: Այսօր մեզ համար դժվար է ասել, թե ով է եղել **Հռիփսիմեն**՝ «Կոծ մեղկաղէտ ծնողաց ի վերայ վաղամեռիկ միամօր դստեր» բանաստեղծության մեջ, որը մինուճար դստերն անդառնալիորեն կորցրած շփոթահար ամուլների զգայացունց մի ողբ է. այն, ինչպես նաև «Ողբերգութիւն Իսրայելի» բանաստեղծությունը, անշուշտ, իր վրա կրում է Ալամդարյան մարդու անձնական վշտի արձագանքները (տարիներ առաջ նա էլ կորցրել էր իր որդուն՝ Հովսեփ մանկանը): 2-րդը՝ **ՄԿՐՏԻՉ**-ը, «Աղերս առ Նախավկայ Ամլորդին» բանաստեղծության մեջ, թվում է, տարակույս չի թողնում, քանի որ խոսվում է Հովհաննես Մկրտչի մասին: Բայց այստեղ ծնվում է մի հետաքրքրական հարց, որն առաջ է քաշել գրականագետ Պ. Հակոբյանը Խ. Աբովյանի «Առ Մ. Ա.» բանաստեղծության վերտառությունից առիթով. «Արդո՞ք Ալամդարյանին ժամանակակիցներն



այս անունով ևս (Մկրտիչ.— Ալ. Մ.) չեն կոչել և արդյո՞ք Մ. Ա. անվանատառերը Մկրտիչ Ալամդարյան, այսինքն՝ Հարություն Ալամդարյան չպիտի ընկալվեն»<sup>31</sup>: Գրականագետի այս երկմտանք-կռահումը զուրկ չէ իրական հիմքից, քանի որ Աբովյանի վերոնշյալ բանաստեղծության մեջ կերպավորված **Մ. Ա.-ն**, իրոք, մեծապես հիշեցնում է ազգի գալիքի և լուսավորության ու կրթության համար իր անձը նվիրած Ալամդարյանին: Մեր կողմից հավելենք նաև երկու դիտարկում, որ նույնպես խոսում է Հարություն-Մկրտիչ Ալամդարյան համարժեքության մասին: Նախ «Աղբյուր առ Նախավկայ Ամլորդին» բանաստեղծության վերջին տան մեջ հեղինակն ուղղակիորեն մատնանշում է իր և Հովհաննես Մկրտչի անվանակցությունը, հանգամանք, որը, չգիտես ինչու, անտեսվել է բանասիրության կողմից.

Ի մեղապարտ անուանակցեդ  
Հերքեա՛ զչարին ոյս, հաղբ և անտ...

Բացի այդ՝ **Խ. Աբովյանի** «Գրեցաւ ի վերայ դամբարանի բազմերախտ ուսուցչի իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարեան. Ի 1836. 15 Մայիսի. Ի Նոր Նախիջևան» բանաստեղծության մեջ հանդիպող մի արտահայտություն՝ «**պսակ քո դարու**» («Զքեզ զա՛րդ ազգի, **պսակ քո դարու** / Զի փառակցեսցիս երկնայնոցն դասու»<sup>32</sup>) նույնությամբ կրկնվում է նաև «Առ Մ. Ա.»-ում («**Պսակ քո դարու** բարեկամ անբախտ ազգային հայրենւոյն...»<sup>33</sup>):

Հայտնի է, որ աղբյուրիցս ղեռնս անտիկ պոեզիայում կիրառվող և մեր միջնադարյան քնարերգության մեջ ևս տարածում գտած ոտանավորի մի ձև է, որտեղ յուրաքանչյուր տողի սկզբնատառով կամ տների առաջին տողերի տառերով գրվում է իր՝ հեղինակի կամ էլ այն անձնավորության անունը, որին նվիրված է բա-

31. Պ. Հակոբյան, Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը (1809-1836), Երևան, 1967, էջ 624-625:

32. Տե՛ս **Խ. Աբովյան**, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 1, էջ 141:

33. Տե՛ս նույն տեղում, էջ 110:

նաստեղծությունը: Տողի սկզբնատառով է ստեղծված, ասենք, ժողովածուի «Կոծ մեղկաղէտ ծնողաց ի վերայ վաղամեռիկ միամօր դասեր» բանաստեղծությունը.

Հրեշտակ շնորհադէմ, վասն է՞ր զմեզ թողեալ յողբ անմխիթար՝  
**Ռ**ահիմ երկնացոյց՝ անմահ փեսայիդ՝ փափագող գտար:  
**Ի** քեզ անլելով, ի հոտ քո զմայլեալ, մեր վարդ բոցավատ,  
**Փ**առաց խումկ անոյշ էիցս Էակի տայաք անդադար:  
**Ս**իրտ մեր զկարեւլեր յանկարծ խոցեցեր անտիք մահարար.  
**Ի**՞ւ առ քեզ մեղաք, գրաւական սիրոյ ամոլիցս շուար:  
**Մ**ի զմեզ, աղէկէզ, բազմադէտ ծնողքդ, մոռանար իսպառ.  
**Է**իմ հրամանաւ էջ ընդ սուրբ զուարթոնց, զմեզ առ քեզ տար:

Իսկ նշանավոր «Պարերգութիւն»-ը տների առաջին տողերի տառերով գրված աղբյուրիցսի հիանալի նմուշ է.

Յերկու ձեռիմ երկու մոմ՝  
Ինձ ընդ առաջ ել յիր տան.  
Մի՛ հարցանէք ո՛վ էր նա,  
Հրեշտա՞կ, թէ կոյս լուսագեղ:

Ամօթն զնա վարդ արար,  
Ես հիացեալ դարձայ քար.  
Այն զի՛նչ օր էր և զի՛նչ ժամ,  
Յորում տեսի ես կեանք նոր:

Լիաճրագ յայնմիկ տան  
Ի մարդաշատ բազմութեան  
Ի մէջ աղջկանց և հարսանց  
Յոտիմ կայր ոմն անդ յանկեան:

Այն օրիորդն էր պարկեշտ  
Ինձ պատահեալ առ դրամբ տան.  
Զոգիս գրաւեաց յիր ի սէր,  
Ի նմա տեսի ես կեանք նոր:

**Մ**արգարտափայլ մարմինն էր,  
Հասակն էր յոյժ վայելուչ.  
Զոտիքն իր վարսք քարշ կային,  
Ի գոյն քրքմոյ փայլեին:

**Դ**իմացն շքեղ երևոյթ  
Յոնից, աչաց, այտից գեղ,  
Օրթանց լեզուին համ անոյշ՝  
Խոստանային ինձ կեանք նոր:

**Ա**՛խ, ասացի թմրեցայ,  
Սիրտս սկսաւ դողդողալ.  
Զաշխարհ համայն մոռացայ  
Ի գեղ կուսին ապշեցայ:

**Բ**ամք կոչելոցն լայն հանդէս  
Ընդ իմ մեծ բաղդ ոխային.  
Զի մերձատրք այն կուսին  
Փեսայ զանձն իմ ձայնէին:

**Ե**թէ զաշխարհ լի գանձուք  
Ինձ ոք բաշխէր ի պարզն՝  
Ոչ տեսանէր այնքան թախ՝  
Որքան ի գոլս առ կուսին:

**Ա**րդեօք գուցէ՞ յաշխարհի  
Սիրոյ մնան իր հզօր.  
Սէրն ի ձեռաց Արարչին  
Մեզ մահացուացս է ձիր նոր:

**Ն**անրախորհուրդ ա՛զգ մարդկան,  
Ծատ մի՛ սիրեր դու զաշխարհ.  
Նա թշնամի է անգութ,  
Զար քան զքարք մահաթոյն.

**Ց**անցիւ սիրոյ զքեզ կարթէ,  
Ի հաղբ անել ըմբռնէ.  
Ապա զսիրոյ առարկայ  
Ի քէն արա՛գ կողոպտէ:

*Ի դեպ, պետք է նշել, որ Ալամդարյանը կիրառել է նաև ակրոստիքոսի մի հետաքրքրիչ ձև, երբ բառը կազմվում է ոտանավորի զույգ տողերի սկզբնատառերով: Այս տեսակետից բնորոշ է, օրինակ, «Վարդակորոյս»-ը.*

**Ա**յգանայ ահա, այգացաւ ահա.  
Ա՛խ, սոխակս հեծէ, դնի անգգայ:  
**Լ**աց չառնէր երէկ. այսօր շատ ողբայ.  
Վարդն իր չերևի, այգն է ցայգ մնա:

**Ա**ւա՛ղ վիճակի անբաղդ սոխակին,  
Ոյր կեանքն ի հնոցի սիրոյ սոչորին:  
**Մ**ա՛հ, ու՞ր ես, ե՛կ, հա՛ս, օգնեա թշուառին.  
Դու դառն ես այլոց, քաղցր ես անբաղդին:

**Դ**արք, սորք, ծերպք, անձաք, մթագգած փապար  
Զտան եղկելոյնն ճիւղ, քուն և դադար.  
**Ա**չքն ի յոյժ լալոյ եղև լուսագար.  
Այդպէս խիստ ցաւոյ ո՛չ դեղ կայ, ո՛չ ճար:

**Բ**ամէ զուշն ի կուրծս, տքնի հանդուրժել,  
Անօրէն բաղդին զկիրս իր հնազանդել.  
**Ե**ղու՛կ, նա խաբի. չէ՛ կարող ժուժել.  
Ուժգնութեան սիրոյն ո՞վ կարէ յաղթել:

**Ա**րդ սիրտ սոխակին է խոց, վիրաւոր,  
Լեարդն լեալ հրաբուն, վիշտքն՝ քիրաւոր.  
**Ն**ա զուրկ ի վարդէն շրջի խելացնոր,  
Ցաւոտ, աղէխարշ, կիսամեռ, անգօր:

Այսպիսով, Ալամդարյանի պոեզիայի տաղաչափական ձևերի մանրակրկիտ քննությունը թույլ է տալիս ասելու, որ հայոց նոր քնարերգության նախաշավիղ հանդիսացող «Չափաբերականը» ժողովածուի երեք տասնյակ բանաստեղծություններում հեղինակը, դուրս չգալով մեր ավանդական վանկային ոտանավորի կառուցման սկզբունքներից, կարողացել է միևնույն ժամանակ խուսափել միօրինակությունից և կիրառել տաղաչափական ձևերի բազմազանություն:

\* \* \*

Այսպես, ահա, հայ հին և միջնադարյան շքեղ քնարերգության անկման և կրոնաբարոյական, սխոլաստիկ բովանդակությամբ զրականության գերակայության համապատկերում Հարություն Ալամդարյանի երգած մարդկային նրբին ապրումները, սերը, կորստյան ցավից ծիր առած անհուն տվյալանքներն ու տաղնապները 19-րդ դարի առաջին երեսնամյակում պոեզիան աստիճանաբար ձերբազատում էին կլասիցիզմի մերկապարանոց ու կաշկանդող սխեմաներից և ազդարարում սենտիմենտալիզմի ու ռոմանտիզմի մուտքը հայոց նոր քնարերգություն: Կարճ, ցավալիորեն կարճ տևեց Ալամդարյանի գրական ճանապարհը, բայց այն արդասավոր էր ու անչափ ուսանելի ժամանակակից և հետագա շրջանի գրողների համար, քանի որ նախանշում էր գեղարվեստական նոր որակ, բերում նոր բովանդակություն ու ճաշակ: Եվ պատահական չէ, որ այսօր էլ մեզ հուզում են ճակատագրից հալածված այդ շնորհաշատ բանաստեղծի երգերը, մարդու, որն այսպես է ներկայացրել իր եղերական ուղին.

Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,  
Յո՛ւ և գնացի՝ միշտ գտի դարան.  
Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ գերծայ:

ՀԱՎԵԼՎԱԾ

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ

## ՉԱՓԱԲԵՐԱԿԱՆՔ

(ԾՆ. 1796, ՎԱԽԾ. 1834)

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ  
ՏՊԱՐԱՆ Ա. Ա. ԿՐԱԵՎՍԿՈՒ  
1884

**ՄՕՐ ԻԻՐՈՒՄ**  
**ԱՆՆԱՅԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՊԱՏԿԱՆԵԱՆ**  
**ԴՍՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ**  
**Ա Լ Ա Մ Դ Ա Ր Ե Ա Ն Ց**

**Նուիրէ Ք. Պ.**

**ԱՄԵՆԵՒԻՆ ԵՍ ԳԵՂԵՑԻԿ, ՄԵՐՁԱԻՈՐ ԻՄ,  
ԵՒ ԱՐԱՏ ԻՆՉ ՈՉ ԳՈՅ Ի ՔԵԶ:**

Երգ: Դ. 7.

**Ն Ա Զ Ե Լ Ի Ո Յ Ս** դէմքն էր ճերմակ ու կարմիր,  
Հրաշագեղ, չքնաղ, անմնան ումեք:  
Ծնորհաշուք հասակն չէ՛ր երկայն կամ ցած,  
Միջակ և քնքուշ՝ զարմանք տեսողաց:  
Գլուխն էր պճնագարդ ոսկեփայլ վարսիք.  
Հիւս անցա այրեր զաչս անգաաստից:

Փայլէր ճակատուն լոյս ի հայեցողն.  
Յօնք իր՝ աղեղունք անտարձակ մարդկան:  
Ի լայն յօնամէջն կայր տիպ հանճարոյ.  
Պարկեշտ տեսք աչացն քաղէին զհոգի:  
Ծոխ յայտից վերայ բաց վարդք ծպտէին.  
Ծարք ջինջ ատամանցն էր մարգարտայեռ:

Զնոքօք պատէին շրթունք հրատապք.  
Ի լեզուն կաթեր շունչ արծարծ կեանաց:  
Զայնն էր հրեշտակի, անջինջ ի սրտէս.  
Բերանոյն խօսուած հըրոյ պէս ազդեր:  
Ծոցն էր լի՛ հրով, ստինք բոցավառք.  
Լանջացն գովեստ՝ չէ՛ բան իմ լեզուի:

Ակն իմ ի հեռուստ զհրաշտ տեսանէր,  
Մօտիլ չկարէր, զաղիս գալարէր:

Այս նշանք սիրոյս. զայլ ինչ չի՛ք ասել.  
Կորուսի զնա՛ այլ ոչ գտանեմ:  
Պատմեցէք, մարդիկ, թէ տեսիք զնա,  
Պատմեցէ՛ք, եղբարք, թէ կայ սիրտ ի ձեզ:

Կաթոտ խանդակաթ եմ ի սէր նորա,  
Լացոտ արտասուոտ որոնեմ զնա:  
Կեանք իմ մաշեցան յոգոց հանելով,  
Աչք իմ կուրացան միշտ արտասուելով.  
Ուշ իմ ցրուեցաւ միշտ մտածելով,  
Հոգիս քաղեցաւ շա՛տ մորմոքելով:

Այդ զի՞նչ կսկիծ է, այդ զի՞նչ չար տանջանք.  
Քարեայ սիրտ պիտի հանդուրժել դոցա:  
Թէ լուր ինչ չունիք զանգին չքնաղէս,  
Թէ ինձ չիք հնար գտանել զնա՛  
Ինձ յափսոս եկայք անչափ նեղելոյս,  
Ողջ ողջ դի՛ք յարգանդ մութ գերեզմանի:

Երբ յիշեմ զանուն իմ սիրականի՛  
Յօդուածք իմ դողան, սիրտ իմ սարսափի:  
Դուք ի զուր ջանայք զիս մխիթարել.  
Չկայ կէս սրտիս՝ զիս՞րդ ասրեցայց:  
Իմ կեանք այլ չեն կեանք առանց փարելոյս.  
Իմ ցաւոյս դեղն է մահն, սիրելիք:

12 Աւգոստ. 1821. ի Մոսկով:

## ԿՈԾ:

Մոնչէի առ հեծութեան սրտի իմոյ: Սաղմ. ԼԵ. 9:

Յար վա՛ն է կայծ սիրոյ սիրոյդ,  
Ի վիրալից սրտի գերուոյդ, ո՛հ, ի յանձին գերուոյդ.  
Յորմէ յաւէտ խիստ տոչորի  
Հալի, մաշի հոգի այրուոյդ. ափսո՛ս կենաց գերուոյդ:

Արդ անասուն գործք արարչիս,  
Կակամաբարձ կոծեցէք զիս, վա՛յ, ողբացէ՛ք զիս.  
Զանյագ արգանդ բացէք գերկրիս,  
Անդ կենդանւոյն թաղեցէք զիս. աւա՛ղ, մի՛ խնայէք յիս:

Բամից թոչնոց պարծանք տատրակ,  
Անվարուժան, ամայաբնակ, վա՛յ, քեզ եմ քատակ.  
Զմէ՞ սիրելիք մեր անքատակ  
Հարին ի սիրտ մեր զայս սլաք, եղու՛կ, զմահաբեր սլաք:

Ուրախ ձայնի մի՛ դայլալեր,  
Զայրոյս այրած սիրտ մի՛ ճմլեր, ո՛հ, զվէրս մի՛ նորոգեր.  
Լերդակիզոյս զուգերգող լեր,  
Դու լաւ գիտես, թէ զինչ է սէր. վա՛յ ինձ, հուր վառէ սէր:

Իիծիս ի շիղ գօս մրտենւոյ  
Անկեր, անումպ, գերի կոծոյ, ո՛հ, պատկեր ցաւոյ.  
Զնետ՝ որ մեռոյց զվարուժան քոյ,  
Ա՛ն, հա՛ր ի սեաւ տրտում սիրտ քոյ. ափսո՛ս, այլ հնար ոչ գոյ:

Թառանջք՝ մեզ կեր, ըմպելի եմ,  
Մերոց խոցից դեղ ու ճար եմ. ո՛հ, վերք մեր շատ մեծ եմ.  
Համակ զօդուածք մարմնոյս հեծեմ,  
Սարսիմ՝ այլ դեռ քայքայեալ չեմ. բիր վա՛յ, ե՞րբ հանգիցեմ:

Ի յաւերակս ի յամայիս  
Ձեռն ի ծոցի շրջիմ գերիս, ո՛հ, խնդրեմ զհոգիս.  
Անափետոր տխրատեսիլ  
Բոտոց ձայնից ձայնակցիմ ես. վա՛յ վա՛յ, այսպէս կեամ ես:

Իհիւանդ զանձն իմ չընդունին հիր  
Ո՛չ հող, ո՛չ ջուր, ո՛չ օդ, ո՛չ հուր. վա՛յ գերուդո՛՛ սէ՛ր մաքուր.  
Աղէտք՝ այրուդ եմ միշտ անուր,  
Անվերջ, անկէտ և ջանք միշտ զուր. ո՛վ, փախեայց, բայց ու՞ր:

Նուագս քեզ ձօն չէ՛ զուգակշիռ,  
Ո՛ր Մարգարիտ՝ գա՛նձ անկշիռ. ա՛խ ա՛խ, զիս անսուր զեներ.  
Քեզ ի նուէր չունիմ գալլ իր,  
Զկեանս իմ դնեմ արդ ի կշիռ. աւա՛ղ, ասա՛ մեռի՛ր:

15 Աւգոստ. 1821. ի Մոսկով:

## ՍՈՒԳ:

Յոյս իմ ի քոյ տես յաշխարհիս  
Ցարդ չարաչար խոշտանկէ զիս,  
Մտացս աչաց միշտ երևիս,  
Սիրոյդ հրով կիզես զհոգիս.  
Անգին ընկեր, ոչ խնայես յիս,  
Որ սէր ի քոյ մոռացայ զիս.  
Զիմ սուգ արդ տե՛ս, փոյթ դա՛րձ առ իս  
Լի՛ց զիմ փափագ, ա՛ն քեզ հոգիս:

Զիմ սիրտ ուրախ արեամբ լցեր  
Քով փախստեամբ արագ ի վեր.  
Յանել վիրապ զայրիդ արկեր,  
Յոր թառամիմ իբրև ստուեր.  
Ա՛խ, անմոռա՛ց կեանք, հոգի, սէր,  
Այդպէս երբէք չէր պայման մեր.  
Կեալ, մեռանիլ, ցնծալ, տրտմիլ  
Ի միասին՝ խոստումն էր մեր:

Առանց քո ես գամ, ամիս, օր  
Անցուցանեմ միշտ գլխակոր.  
Դժգոյն դիմօք, սրտիս տխուր  
Մաշեմ զկեանս հանապազօր.  
Թէ քեզ առ իս գալ չէ հնար՝  
Գոնեա առ քեզ զիս փութով տար.  
Հեռի ի քէն չունիմ դադար.  
Կեանք այդպիսի քան մահ է չար:

Արդէօք զի՞նչ ցաւ քեզ պատահեաց,  
Որ զիս ի քէն այդպէս զրկեաց.  
Քն տէր էի ես աշխարհաց,  
Իսկ առանց քո՝ որք գետնամած:  
Ե՞րբ ես զերծայց յայս տանջանաց,  
Ե՞րբ մօտ հոգւոյդ մարմնով եդայց.  
Այլ ճար, հնար իմոց վիրաց  
Ոչ գոյ, գոհա՛ր, հո՛ղ իմ կենաց:

Չի՞ք չափ հեղման դառն արտասուաց  
Յիմոց պղտոր միշտ թաց աչաց.  
Լեղի՛ իմ ջուր, մոխի՛ր է հաց,  
Նի՛նջ իմ՝ պատկեր զարհուրանաց.  
Հոգւով մարմնով կամ սևազգեաց,  
Կամաւ զրկեալ յամէն բարեաց.  
Ո՞չ տեսանես, զի այդպէս կեանք  
Դառն է քան բիր չար կատարած:

Ի 20-ն Աւգոստոսի 1821 ամի. ի Մոսկով:

### ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ ՍՈՒԱԿԻ:

Յայգուն ընդ աղջամուղջն  
Սոխակն մտեալ յայգի՛ն՝  
Շրջէր խի՛րտ խի՛րտ.  
Ի ձայնէ ողջունի  
Տերևոց ընդ տերևոց  
Սարսափէր շի՛րտ շի՛րտ.  
Նա սեաւ ատուրց,  
Անիրաւ հալածմանց  
Էր միշտ կի՛րթ կի՛րթ.  
Չէ՛ր անտեղեակ գոեհիկ  
Եւ տմարդի բարուց  
Պարտիզպանին բի՛րտ բի՛րտ:

Յառաջէր հառաչէր,  
Սիրտ իւր թռչնակի պէս  
Դողդողայր բաբախէր.  
Քանի առ թուփ վարդին  
Մերձեցայր մօտէր՝  
Այնքան ցնորէր, քրտներ և սարսէր.  
Սիրտ իւր զտրտմութիւն  
Ծատ ազդէր, գուշակէր,  
Զարտասուս յաչացն քամէր.  
Սրտաբեկ հառաչէր,  
Մեղմ երգէր, լոէր,  
Ամէն ձայնի ունկն դներ:



Ծառագարդ ցօղոտ  
Պճնագարդ այգին  
Թուէր նմա անապատ ւաւրակ.  
Զմայլելի բուրմունք  
Նարդոսաց, շուշանաց,  
Հոգեզուարճ, անուշակ,  
Քաղցրաձայն նուագաց  
Կերպ կերպ թռչնակաց  
Բիւր օրինակ եղանակ,  
Արծաթի գոյն աղբերաց  
Սպիտակ, սառնորակ՝  
Սրտի նորա էր դահիճ ու դանակ:

Սոխակն իմ կոյր է.  
Բաց ի վարդէ  
Ոչ ինչ տեսանէ.  
Սոխակին դիպան  
Զճանապարհայն  
Ծաղկունք զանագան.  
Նա ոչ գոք ետես,  
Ոչ ինչ խօսեցաւ,  
Յոչ ինչ հայեցաւ.  
Նա զայլ ոք խնդրէր,  
Յառաջէր, հառաջէր,  
Աչօք թացօք զվարդն որոնէր:

Յանկարծ թալկացաւ,  
Կենդանի մեռաւ,  
Ուշաբարձ անկաւ,  
Ընդ թփով վարդին  
Տեսեալ զթերթ նորին  
Ընդ պերճ երանգին  
Ակնախաբ բոսորին

Զգոյն շառագոյն և տեղին  
Տարա՛ծ ի գետին.  
Մեծաձայն վայեաց  
Վա՛րդ իմ վա՛րդ, ձայնեաց,  
Զիր շունչ վճարեաց:

Ա՛յ անգին վա՛րդ վա՛րդ,  
Իմ կենաց զա՛րդ զա՛րդ,  
Ճոխ թերթիք բա՛րդ բա՛րդ,  
Բանիս լուր կարճ կարճ,  
Քանի ես զուարճ զուարճ.  
Տես զիմ լաց ու հառաչ,  
Զարտօսք իմ սրբեա՛,  
Զիս քեզ զոհ արա՛,  
Զիմ ողբ ու լաց մեղմեա.  
Ապա թէ ոչ՝ մեռայց.  
Յետոյ քո անագան այց ու դարձ  
Զօգնեցեն իմոց կենաց:

21 Աւգոստ.1821. ի Մոսկով:

**ՊԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ:**

Յերկու ձեռին երկու մոմ՝  
Ինձ ընդ առաջ ել յիր տան.  
Մի՛ հարցանեք ո՛վ էր նա,  
Հրեշտա՞կ, թե՛ կոյս լուսագեղ:

Ամօթն զնա վարդ արար,  
Ես ճիացեալ դարձայ քար.  
Այն զի՛նչ օր էր և զի՛նչ ժամ,  
Յորում տեսի ես կեանք նոր:

Լիաճրագ յայնմիկ տան  
Ի մարդաշատ բազմութեան  
Ի մէջ աղջկանց և հարսանց  
Յոտին կայր ոմն անդ յանկեան:

Այն օրիորդն էր պարկեշտ  
Ինձ պատահեալ առ դրամբ տան.  
Զոգիս գրաւեաց յիր ի սէր,  
Ի նմա տեսի ես կեանք նոր:

Մարգարտափայլ մարմինն էր,  
Հասակն էր յոյժ վայելուչ.  
Զոտիքն իր վարսք քարշ կային,  
Ի գոյն քրքմոյ փայլէին:

Դիմացն շքեղ երևոյթ  
Յոնհց, աչաց, այտից գեղ,

Ծրթանց լեզուին համ անոյշ՝  
Խոստանային ինձ կեանք նոր:

Ա՛խ, ասացի թմրեցայ,  
Սիրտս սկսաւ դողդողալ.  
Զաշխարհ համայն մոռացայ  
Ի գեղ կուսին ապշեցայ:

Բամբ կոչելոցն յայն հանդէս  
Ընդ իմ մեծ բաղդ յխային.  
Զի մերձաւորք այն կուսին  
Փեսայ զանձն իմ ձայնէին:

Եթե՛ զաշխարհ լի գանձուք  
Ինձ ոք բաշխէր ի պարգև՝  
Ոչ տեսանէր այնքան թախ՝  
Որքան ի գոլս առ կուսին:

Արդեօք գուցե՞ յաշխարհի  
Սիրոյ նման իր հօօր.  
Սէրն ի ձեռաց Արարչին  
Մեզ մահացուացս է ձիր նոր:

Նանրախորհուրդ ա՛զգ մարդկան,  
Ծատ մի՛ սիրեր դու զաշխարհ.  
Նա թշնամի է անգութ,  
Զար քան զքարք մահաթոյն.

Ցանցի սիրոյ զքեզ կարթէ,  
Ի հաղբ անել ըմբոնէ.  
Ապա զսիրոյդ առարկայ  
Ի քէն արա՛գ կողոպտէ:

1 Հոկտ.1821. ի Մոսկով:

Զիս ո՞ սիրեացէ՛ զԿատեայս քո թշուառ՝  
Թէ՛ զքեզ Տէր տարցէ յիւր երկնից գաւառ:

21 Աւգոստ.1823. յԱստրախան:

### ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ ԶԱԻԱԿԱՅ ԻՄՈՑ:

#### Հ ա յ ը .

Հօր համայն որբոց, փրկչի՛ն Քրիստոսի  
Յանձն առնեմ զձեզ՝ դատերք նագելի.  
Սուրբ աջոյ՛ն նորա անտես հովանի  
Ի գլխոց՝ ձերոց մի՛ պակասեսցի:

Երթամ ես յաշխարհի ի ձեզ յոյժ հեռի,  
Երթամ որոնել զայն, զոր կորուսի.  
Արտասուօք, ողբովք՝ ձայնիս սըգալի  
Խնդրեցից զնա յամենայն երկրի:

#### Մ ա թ ի ա մ .

Զի՞նչ խօսիս, Հայրի՛կ, զի՞նչ դու կորուսեր,  
Եւ զի՞նչ գտանել յանձանօթ երկիր  
Կամիս, ասա մեզ, մի՛ թագուցաներ,  
Տա՛ր և զմեզ ընդ քեզ, Հա՛յր, մի՛ արտասուեր:

#### Ը ն ն ա յ .

Հայր մեր, ես գիտեմ, ըզմայր մեր ողբայ,  
Զմահ նորա յիշեալ՝ մորմոքի, սըգայ.  
Ե՞րբ սա մոռացի զանուն, զկերպ նորա,  
Ե՞րբ հանգիստ տեսցուք մեք զհոգի սորա:

#### Կ ա գ ա թ ի ն է .

Մի՛ արտասուեր, Հայր, մի՛ սգար ողբար,  
Արտասուք զքեզ մաշեցի՛ն իսպառ.

## ԱՂՕԹՔ:

Էդ անեղ, աներբ, անկէտ, անսահման, անհաս ի մտաց,  
Ի քրոյքէաբարձ յաթոռոյդ փառաց յայս մեր դաս հայեա՛ց:  
Հե՛ղ, Տէ՛ր սքանչելի, զաղբիւր անսպառ Հոգւոյդ քո շնորհաց,  
Լուա՛ ի հոգւոց, ի կամաց, մտաց զախտ մերոց մեղաց:  
Զքեզ ոչ ոք ետես, զքէն հողեղիմացս Որդիդ քո պատմեաց.  
Զքեզ ցոյց Հայր լուսոյ ոչ մարմնոց մերոց, այլ հոգւոյս աչաց:  
Էակք ամենայն եմ ջինջ հայելիք՝ ցուցակք քոց փառաց,  
Յոր տեսեալ զՈրէնդ՝ փառատրեմք, հրճուիմք խնդութեամբ անանց:  
Ուսո՛, աղերսեմք, Անուն պաշտելի, շնորհատու բարեաց,  
Քեզ երկրպագել, սիրով հնազանդիլ քոց քաղցր օրինաց:  
Ընկալ հոգեսէր զօրութեամբ նուագս յանսորբ մեր շրթանց,  
Այրեա՛ զմեր յանցանս հուրբ հզօր սիրոյդ, աստուածոց Աստուած:  
Քեզ Հօրդ ընդ Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, քոյին էակցաց,  
Փառք անլուելի, զոհութիւն, պատիւ, պաշտօն գետնամած:

15 Մայիսի 1825. ի Տիփսիս:

## ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ:

Արշալոյս ատուրս, սուրբ ջուրբ սրսկեալ լուսապերճ զարփիմ՝  
Լանջակցեալ նմա հանէ խնդագիմ յիւր ծիր երկնային.  
Մաղթեմ իրերաց, պարգևիչ նոր լոյս մարդկան երկրածիմ՝  
Նոր օր, նոր տարի, նոր վաստակ, զանուն, նոր գործ պանծագիմ:

Կոռնոս հինաւորոց, յոգունց ատելի անյագ ծերունի,  
Յարաշխատ սատար բազմոստեան արմին ճիշտ ժամանակի՝  
Ուխտէ պահպանել անեղծ անտխտեղծ զգործ առաքիմի,  
Միշտ գերեզմանել զիւր անգութ, հատու մանգաղ երկսայրի:

Յայս հանդէս շքեղ դիմէ սիգանեմ Յանոս երկդիմի,  
Խոստանայ հայիլ աչօք անկաշառ յանցեալ, յապառնի.  
Ընտրել զգուշեալ զցորեան ի յարդէ, կամ լաւ կամ յոռի,  
Կոչել զերկրածնաց զարարս ամենայն, զսիւն և զարգի:

Հեռի ի սոցունց յաջկոյս եթերի Աթենաս բերկրի,  
Ծիածան պայծառ լոյս մեծ զնովաւ շուրջ փայլատակի.  
Գրչաւ գերահրաշ անջինջ գծագրէ յանարուեստ վիմի  
Զանուն, զերախտիս մեծ ուստեր ուրուք ծեր Հայաստանի:

Ո՛հ, ո՞ր հողածիմ ժպիրհ պարզ աչօք հայիլ մարթիցի  
Յայն վէմ խորհրդեան, յայն գրուած չքնաղ, յայն անուն յարգի.  
Իմաստ, հմտութիւն, քաջ վերձանութիւն դպրաց կանառի  
Յայն նորատարագ գրուած ակնարկեալ՝ պապանձեալ կարկի:

Հոյք վերձանողաց այն ինչ սրտաբէկ խուսափեմ անտի՝  
Փողէ յեթերէ դիւրիմաց ձայնի երկթև ինչ ոգի.

Տայ տառից զանուն, արուեստէ զանուն մեզ յոյժ փարելի,  
«Դու ես սէրն» հեզէ, «Ներսէս», բարբառի մեկին և յայտնի:

Ձայնակցեալ մին որդիք սիրածինք զթոյղ արգանդի՝  
Սիրալից սրտիք մատեաք առ իսկ տիպո սիրոյն Ամմահի.  
Ձայն երկթև ոգոյն ուժգին արձագանգս տայ ի մեր հոգի,  
Խրախուսէ օրհնել, գոհանալ, գովել զքեզ, մեր Հա՛յր բարի:

Ամպք շնորհաց Հոգոյն ցոլեցեմ ի քեզ ցօղ համայն բարեաց,  
Քեզ սատար լիցին կազդորիլ, շինել զանեղձ յարկ փառաց.  
Չանսուտ գրաւական անանց հրճումանց երկնից խորանաց  
Աստէն յայտնեցեմ ի քեզ, պե՛տ հովուաց, ի յորդոր բարեաց:

1 Յունվարի 1828. ի Տփլիս:

## Տ Ա Ղ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն :

Յայսմիկ նորահրաշ չքնաղ հանդիսի հոգոյս տեսանի  
Ի ստուեր նազելի տեսիլ սխրալի դիցազն անձկալի,  
Անձնեայ, թիկնաւետ, քաղցրաղէմ, խայտակն, քաջալանջ, արի.  
Սաղաւարտ ի գլուխ արծուէնիշ, ընտիր, լուսապանձ փայլի:  
Աւաղիկ հրճուի, անպայման բերկրի,  
Յայլ ստուերս հայի, յորոց շուրջ պատի:

Յաջ բազուկ նորա աղէղն երևի, լայնալիճ, լարեալ.  
Ի ստուար կապարճի մահահոտ փքինք լիով կան լցեալ.  
Խեթիւ ակնարկէ առ մեր առելիս դիմօք զայրացեալ,  
Յայս համուտ հայի հայրօրէն սիրով, սրտի մորմոքեալ:  
Թագազարդ, անթագ ստուերք լուսածագ  
Գան, գնան, անյագ, յայտնեն զմե՛ծ փափագ:

Հայկ է, բազմականք, մերն անզոյգ Պետ, Հայր, Բելայ գլխահար,  
Հայկայն է ստուերս, նորին կերպարան, պատկեր անվթար.  
Ա՛խ, ուստի՞ եմուտ նա յայս տեսարան, յայս յարկ պերճափառ,  
Եւ զի՞ քայլարկէ անկիւն յանկենէ՝ խրախ, լուսապատար.  
Լռել հրամայէ, յայտնել խափանէ,  
Զիր մուտն աստ՝ գաղէ, խայտայ, արտասուէ:

Ի թիկանց վեհիս նազաքայլ ճեմեն Արամ մե՛ծ անուն,  
Զարմայր սաստ քաջաց, Պարոյր թագապերճ, Արայն քաջ, սիրուն,  
Արտաշէս աշխոյժ, Վաղարշակ խոհեմ, Խոսրով քաջազուն.  
Զուգընթաց սոցին այլ ճետք դիցազանց ակնապիշ կառուն.  
Վահագն անմնան, Վահէ, քաջն Վան,  
Անուանին Տիգրան՝ յայսմ խմբի կան:

Եւ զի՞ աստ խմբին ստուերք վեհագանց տանս Ասքանագեան։  
Ի զմին իջին ի տես հանդիսի որդւոց զարգացման。  
Արդ ժպտին, խնդան, միմեանց ակնարկեն, բայց բառնան կական,  
Զի մեկնէ զնոսս ի մէջ մէզ մոլար կոոց պաշտաման։  
Ո՛հ, մեկնին, ցրուին, ծխօրէն ցնդին。  
Արիք երկնչին, խունապին, փախչին։

Ահա տեսանեմ երկնից ցելանիլ ի ծագ հիւսիսոյ,  
Ոսկեգօծ փայլիլ ամպոց թխամած, մշուլիլ օդոյ。  
Հանգէտ տարափոյ՝ հոծ խիտ թօթափին ցայտք ահեղ լուսոյ,  
Վերուստ ի ներքոյքս լայն ուղի հորդի անմահից դասու。  
Գունարտակ զուարթնոց, պարք հոգւոց սրբոց  
Ի բարձանց ամպոց դիմեն յայց Հայոց։

Թաղդէ բազմարդին Տեառն, այգւոյ մշակ, տիրաջանն Աբգար,  
Գրիգոր լուսատիպ, անձնանուէր հովիւ, սրբութեան սատար,  
Սահակ Պալիստիկ, Մեսրոպ բանիբուն և քերթողացն Հայր,  
Նարեկայն հրեշտակ, շնորհապերճ Ներսէսք և սուրբ հարց կանառ՝  
Աստէն ակմբին, քաղցրութեամբ հային,  
Յնծան, սփոփին, զմեօք խանդաղատին։

Հեզաձայն կարդան զերկնից օրհնութիւն յայս յարկ կրթական,  
Միջնորդեն առ Տէր լինել Հիմնադրիդ յաւէտ օգնական,  
Ըզ Ներսէսդ իրեանց պահել յարկածից ազատ անասան,  
Քն սփոփել կրկին զտխուր, զընկճեալ զիրեանց Հայաստան։  
Աներկմիտ անսայ երկնից սուրբ Արքայ  
Զայնի արդարոց, այժմ և յարակայ։

Դու, որ զՄօր լուսոյ, սուրբ եկեղեցւոյ զորդիս աստ գգուես,  
Կաթոգին տածես, քաղցր արգահատես, յանձանձես, վարժես,  
Դու, որ զհաւատոյ լոյս ի մեր հոգիս ջինջ ճառագայթես՝  
Զանկշիռ զվարձ քոյդ հանդիսադրի աստէն գրաւես։  
Քրիստոս յոյս կենաց, յաթոռոյդ փառաց  
Լու՛ր մեր մաղթանաց, յայս մեր Հայր հայեա՛ց։

4 Փետրուարի 1827. ի Տփլիսի։

### ՏԵՍԻԼ:

Յաղջամուղջ գիշերի, ի տեսլեան տխրագին,  
Յարուցեալ թափառիմ յանձանօթ ի դաշտին։  
Ընդ ինն ոչ ուղի, ոչ շաւիղ երկին。  
Ընդ կապոյտ քօղ երկնից սևաթոյր ամպք կուտին։  
Սիրտ իմ, միտք յայլանդակ ի կարծեաց խիստ յուզին,  
Յակամայս զիս մղեն առ կատար մի լերին。  
Ի յանցնիր քայլափոխս խոչք և խութք ծնանին。  
Այլ անտես ձեռք ուրուք անկործան զիս ունին,  
Յանկմանէ զիս պահեն, ի վախից մեկուսեն,  
Յապահով, յարահետ պողոտայ վեր հանեն։

Այն ինչ ես անդր հասեալ ուշաբարձ, տրտմաղէմ,  
Անթարթափ, սառն աչօք զէակ ինչ որոնեմ՝  
Յանկարծուստ ի բարձանց զահաւոր ձայն լսեմ,  
ՅԱրարատ երկնահաս զատեան վեհ տեսանեմ。  
Զհրաշագիր դպրութիւն յաջ զուարթնոյն մշմարեմ,  
Յոր հայիլ սասափիմ, մերձեցալ ոչ իշխեմ։  
Սա փողէ սաստկաձայն, յորմէ ցարդ սասանիմ。  
«Խմբեսցին աստ, գոչէ, բոյլք հոգւոց լուսանեմ,  
Որք վարուք և արեամբ և քրտամբք ուղփանեմ  
Ոռոգեալ զՀայաստան՝ արարին նոր եղեն»։

Յակմբիլ լուսերամ երկնաբնակ սուրբ հոգւոց  
Յայս ատեան ահաւոր շրջապատ ի զուարթնոց՝  
Առժամայն զլերամբ շուրջ պատի հուր և բոց,  
Ծառաչեն ուժգնակի գոչք վերնոց մեծ փողոց։

Կայծակունք հոգեբեկք ցոլանան ի յամպոց,  
Նիստ լերինն հիմնովին սասանի յորոտոց.  
Մրրկայոյզ փոթորիկ սուլէ յոյժ սաստկակոծ,  
Թաւալին ի կայից աստեղաց բոյք ծերոց.  
Համբառնան դրունք երկնից, զեղու լոյս անմատոյց,  
Ակն ունի բնութիւնն եկի Տեառն աստուծոց:  
Քայքայի գոյութիւնս յահաբեկ տեսլենէս,  
Հոտ մահու առ քիմս իմ մերձենայ յայտնապէս:  
Ահա սիգ մեղմաշունչ հնչէ քաղցր օդոյ պէս,  
Խաղաղէ զխոռվեալ չնաշխարհիկ զհանդէս.  
Զգետտոք լուսազարդ սքօղին դասք անդրանկաց,  
Ակնարկել սարսափին Որ Էին յեկ փառաց.  
Հիասքանչ ձայն լսի սրբասաց նուագաց  
Յօրհնութիւն անմահին, խնամարկուի մահացուաց  
Մեծ ատեանն ապա լուռ ակն ունի հրամանաց  
Արարչին՝ յոյր աջ է չափ, կշիռ իրաւանց:

Հրամայէ. «Մերկասցի՛ քորձ սգոյ Հայաստան,  
Պճնեցի՛ յիւր շքեղ ոսկեխայտ պատմունճան,  
Լուսասցի՛ յարտասուաց դարաւոր պատմութեան,  
Խնկեցի՛ հոտ յանոյշ երկնաբոյս կնդրկան:  
Տո՛ւք մնա զքօղ կարմիր նախեղակ հարսնութեան,  
Հնչեցէ՛ք յարարածս զերգ փառաց յաղթական.  
Քարասիրտ, ոխերիմ, խորամանկ, անպիտան  
Թշնամիք եղկելոյս առ ժամայն բերկրութեան՝  
Պրկեցի՛ն ի կապանս անազատ գերութեան,  
Մատնեցի՛ն չարաչար անվախճանն նեղութեան:

Հիճաւորց Օծեալն իմ յիւր գահոյս արդ դարձցի,  
Սևաթոյր ամպ սգոյ ի նմանէ հերքեցի.  
Կեանք նորս, դառնացեալ աղէտիւք սոսկալի՛  
Բարութեամբ, բերկրանօք, ցնծութեամբ փալլեցի.  
Յոյր անուան սերն էս է՝ Օծեալն իմ յայն յեցցի,

Եւ Հարսն իմ անարատ ընդ մնա միասցի.  
Յայն իմ յուղիս օրհնութեան հաճութիւն յորդեցի,  
Հայաստան զառամեալ առ նովալ մանկասցի,  
Դարն ոսկի մոռացեալ՝ արդ կրկին յայտնեցի,  
Սեռն Հայկայ յանաղարտ խնդութիւն զմալլեցի»:

1 Հոկտ. 1827. ի Տփլիս:



**ԱՂԵՐՍ ԱՌ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ ՏԻՐԱՄԱՅՐՆ:**

Թագուհի փառաց, մա՛յր անմահ Բանի,  
Լո՛ւր պաղատանաց հոգւոյս եղկելի,  
Որ ընդ արտասուաց ի խորոց սրտի  
Յաւարէս մեղաց քեզ մատուցանի:  
Պսակ կուսանաց, յողբալիս հայեա՛ց:

Մեղսասէր մտօք յաւէտ տոչորիմ,  
Խղճիս սլաքօք հանապազ խոցիմ.  
Անթիւ յանցանօք յախտ չար վարակիմ,  
Անտես կապանօք մաշեալ վարանիմ:  
Փառք մահատակաց, գերույս ողորմեա՛ց:

Ապառում կրից յամենի ալեաց  
Հոգիս ցաւալից բազում ինչ կրեաց.  
Չի՛ք ելք հնարից, չիք ինչ դեղ կեանաց.  
Մեռայց, թէ ինձ կից չիցես, մա՛յր կեանաց:  
Յոյս մեղաւորաց, յօգնել ինձ նայեաց:

Վարուք զագրելի, գարշութեամբ մեղաց  
Յիճէն հերքեցի զգունդ հրեշտակաց.  
Արդ կամ խղճալի, դատարկ ի շնորհաց,  
Զգամ սոսկալի յանձն իմ խէթ չարեաց:  
Պարծանք հրեշտակաց, յաւէտ ինձ մերձ կաց:

Զգեղ անմահ հոգւոյս ախտիւք ներկեցի,  
Զկեանս իմ կենցաղոյս սնոտեաց ձօնեցի.

Վիճակ եղկելոյս ահա վտանգի,  
Մահ ողորմելոյս յանկարծ մերձեսցի:  
Գեղ երկնաւորաց, մի՛ մերժեր զիս բաց:

Մի՛ երբէք թողուր զիս իմոց կարեաց.  
Յերկաթի անուր զիս չարն կապեաց.  
Ցե՛լ զմութ վարագոյր իմ անհուն մեղաց.  
Հպարտ եմ, վէս, կոյր, խաղալիկ դիւաց:  
Գրաւական կեանաց, զաչս հոգւոյս արդ բաց:

Անեղ փեսային առագաստ պայծառ,  
Երկրածնաց Փրկչին մաքուր տաղաւար,  
Հայեա՛ց ի չնչին ծառայս քոյ թշուառ,  
Յանեղ ատենին լե՛ր ինձ լոյս, յոյս, ճար:  
Յորդ աղբիւր շնորհաց, արագ առ իս դարձ:

7 Մայիսի 1828. ի Տփիսիս:

**ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԻԳԵԱՅ:**

Թարգմանեալ ի գրոցն Ազատեալ Երուսաղէմ: Երգ Դ:

Վախճանեալ զուղին մտանէ ի վրան,  
Ուր քրիստոսախումբ զօրաց էր դարան.  
Ընդ անկարծ փալլիլ գեղոյ չքնաղին՝  
Ծշունչք, հարցափորձք աստ անդ ծնանին:  
Քաջք առ նա դիմեն, տկարք հառաչեն.  
Զաչս ի նա մխել՝ ինքեանց կեանք կարծեն:  
Որպէս նորանշան աստղ ինչ գիսաւոր  
Զաչս հանուրց գրաւէ լուսով ահաւոր՝  
Նոյնպէս Արմիղէ, այս դիք տարփածուաց,  
Գերէ զիւր տեսողս, մատնէ կապանաց.  
Այդ զարամբ վազէ, հծծեն, հարցանեն՝  
«Ո՞վ է այս չքնաղ, ուստի՞» գայ». հալին.

Կիպրոս և Դեղոս և Արգոս նոյնպէս,  
Անզոյգ հայրենիք աղջկանց երկնապէս,  
Զայսպիսի լոյս գեղ, պայծառ, հրաշատես,  
Զայսպէս սխրալի երբէք ոչ ետես:  
Նորատունկ նոճույ իրանն է նման,  
Ուղիղ, դիւրաթեք, բարձր, պատուական.  
Ոսկեգոյն հերաց հարուստ հիւս շքեղ  
Յակն ականողին արկանէ խտտիղ.  
Ի բնէ եմ գանգուրք այս հերք պաշտելիք  
Սիրահար հողմոց քնքուշ խաղալիկք:  
Հայեացք նազելիք՝ սիրոյ տեսարան.

Յայտս նորա փթթին նարդոս, վարդ, շուշան:  
Ի վերայ շրթանց, կրից շնչարանին,  
Ուր մոլին նոքա, կիզին, տոչորին՝  
Ծոխափայլ պանծայ վարդ կոկոնապատ,  
Ախորժ, հոգեհամ, լերանգ բոսորին:  
Յատակ կուրծք նորա չքնաղ փողփողին  
Հանգէտ նորանիստ ձեան սպիտակին:  
Աստ սեղան սիրոյ, աստ հնոց փափագին,  
Աստ հուրք ցանկութեանց բորբոք վառվառին:  
Բողբոջ տեսանի խեղճ ակնարկողին  
Մասն երկուց հրարձակ բլրոց կաթոգին,  
Յորոց զկէսն մեծ անգութ ծածկութին  
Գաղեալ՝ սքօղէ յաչաց տարփածուին:

Այլ զու՛ր է այդ ջան. ուր ասք մեր ազան՝  
Թէ յի՛նչ ժամանէ, ու՛մ տիրէ անան՝  
Անդ միտք խանդակաթք արձակ համարձակ  
Մտեալ վայելէ զիւր աչաց վաստակ.  
Առաւել գաղտնեօք, քան եթէ յայտնեօք  
Գերի, կաշկանդի սիրոյն կապանօք:  
Առ գեղ ձորձապատ յանկարծ յարձակի,  
Անձկալոյն ի սպառ անձնատուր լինի:  
Որպէս շողն, անխոչ անցեալ յապակի,  
Թողոյ զնա անբեկ յիրում վիճակի՝  
Նոյնպէս տենչն անցեալ ընդ կար հանդերձի՝  
Չվնասեալ իմիք լրդձալին հանգչի.  
Խաղայ, շուայտի, մտօք պսակի  
Ընդ իւր չքնաղի, առանց խափանի.  
Յիւր արեան բորբոք զգայ զհնոցի,  
Թումով քաղցրացեալ՝ զման կեանք համարի:

Արդ այս օրհորդ սիգայ ճոխապանծ  
Ընդ խումբ մարդաշատ ահեղ դիցազանց.

Անթիւ գովեստից շոհնդք մեղմաձայն  
Յետուստ, յառաջոյ չքնաղին երթան:  
Չականէ յոչ ինչ, զամենն տեսանէ,  
Զյաղթութեան պսակ անմարտ գրաւէ:  
Կառու... զմերձակայս ողոք աղաչէ,  
Նետաձիգ լեզուաւ անոյշ կախարդէ.  
«Զխեղճ որբիկս, ասէ, առ Գոթփրէթ ածէք,  
Զաղէտս իմ նմա շոյտ յու՛շ արարէք»...  
Եւստաքէ, կրտսեր եղբայր արքային,  
Եւստաքէ, անփորձ, կայտառ պատանին,  
Զձայն նորա լուեալ՝ ցնորի, կաթոգնի,  
Գեղոյն ճաճանչիք անհուր հրկիզի:  
Հանգէտ թրթրոյ առ այս հուր ճեպէ.  
Զմահուն իր թակարդ նա ոչ նշմարէ:  
Եկն, ետես, կորեաւ, ա՛խ, անդարձ կորեաւ,  
Յանել, յանչատակ վիհ կրից անկաւ:

Որպէս տարրական հուրն անշուշտ ծախէ,  
Զիր պատրաստ ճարակ յանին փոխարկէ՝  
Նոյնպէս զանգագաստն, զաշխոյժն Եւստաքէ  
Հրացայտն Արմիդէ հուրք սիրոյն այրէ:  
Ո՛ր դշխոյ, ներեա՛ ինձ այսպէս կոչել  
Զքեզ, յում հողածնի չիք ինչ նշմարել...  
Զի երկինք չկարեն այսպէս պաճուճել,  
Զդուստր մահկանացուի ի հրեշտակ փոխել...  
Աստ, ուստի՞ գաս, ընդէ՞ր, յի՞նչ վախճան.  
Ի բաղդէ՞ մերմէ, թէ առ քոյդ օճան:  
Ուսո՛ մեզ զարժանն քեզ յառաջ բերել,  
Զողջակէ՞զ թէ յա՞րգ կամիս ախորժել: .....

20 Մայիսի 1829. ի Տփլիսի:

### Վ Ա Ր Դ Ա Կ Ո Ր Ո Յ Ս:

Այգանայ ահա, այգացաւ ահա.  
Ա՛խ, սոխակս հեծէ, դնի անգգայ:  
Լաց չառնէր երէկ. այսօր շատ ողբայ.  
Վարդն իւր չերևի, այգն է ցայգ նմա:

Աւա՛ղ վիճակի անբաղդ սոխակին,  
Ոյր կեանքն ի հնոցի սիրոյ տոչորին:  
Մա՛հ, ու՞ր ես, ե՛կ, հա՛ւ, օգնեա թշուառին.  
Դու դառն ես այլոց, քաղցր ես անբաղդին:

Դարք, սորք, ծերպք, անձաք, մթազգած փապար  
Չտան եղկելոյն նինչ, քուն և դադար.  
Աչքն ի յոյժ լալոյ եղև լուսագար.  
Այդպէս խիստ ցաւոյ ո՛չ դեղ կայ, ո՛չ ճար:

Բամբէ զուշն ի կուրծս, տքնի հանդուրժել,  
Անօրէն բաղդին զկիրս իր հնազանդել.  
Եղու՛կ, նա խաբի. չէ՛ կարող ժուժել.  
Ուժգնութեան սիրոյն ո՞վ կարէ յաղթել:

Արդ սիրտ սոխակին է խոց, վիրաւոր,  
Լեարդն լեալ հրաբուն, վիշտքն՝ բիրաւոր.  
Նա զուրկ ի վարդէն շրջի խելացնոր,  
Ցաւոտ, աղէխարշ, կիսամեռ, անգօր:

10 Մարտի 1831. ի Հաղբատ:

Ցայգ ու ցերեկ կամ յախ ու վայ, ի վարան անպայման.  
Զքեզ որոնմամբ համայն ոսկերքս մաշեցան, չորացան.  
Արդ մեռանիմ. բարեաւ մնա՛. . . անասան:

12 Մարտի 1831\*. ի Հաղբատ:

### ՍՈՒԱԿ Ի ՀՈԳԵՎԱՐՍ:

Ա՛ն քեզ յաւանդ գողջոյն իմ սիրտ, վա՛րդ պայծառ, բոցավառ.  
Ուր և եղէց՝ միշտ քո եղէց սիրահար, սրահար,  
Լալով մեկնիմ, կեա՛նք իմ, ի քէն ոգեսպառ, ոչ իսպառ.  
Փոյթ չքասցին բուքք ձմերանս, չարաչար, խոտվարար.  
Ի քաղցրաշունչ գարնանն է մեր մխիթար:

Ամօթխած կերպ մանուշակին յոյժ չքնաղ, յոյժ չքնաղ,  
Մեզ աւետէ զձեանց հալիլ յոյժ վաղվաղ, անդանդաղ  
Մայրք, սօսիք, նոճք սաղարթագարոք՝ են ի խաղ, անզբաղ,  
Բախճան կազմեալ զմեզ հրաւիրեն ի ծիծաղ, ի ծիծաղ.  
Գուշակ լինին զաւուրց բարեաց և խաղաղ:

Դու հոգեզուարճ ազնիւ իմ վարդ պատուական, կարմրերփեան,  
Ցե՞րք ի տըփիդ կացցես սքողեալ հոգեհան, կարկեհան,  
Աչացս իմ յոյսք քով կարօտով քաղեցան, քամեցան,  
Անգամ մի ցոյց զգեղդ բոսոր հրաշագան, աննման.  
Աշխարհ խնդայ, ես միայն եմ ի շիւան:

Բոպէքս թուին առանց վարդիդ դար երկար հոգեվար,  
Ինձ յայց փութա՛, ահա եղէ շնչասպառ, շատ դժուար,  
Եթէ տեսից զքեզ մօտ մահճիս մահարար, տրտմարար՝  
Անոյշ հոտովդ դարձայց յուշ իմ ցարդ խաւար, հեշտաբար.  
Յայնժամ ոչ ոք զիս կոչեսցէ հէզ թշուառ:

Ա՛խ, քո յամելդ և երևելդ անագան, սիրական,  
Ներկէ արեամբ զիմ սիրտ ու լեարդ եղկական, ողբական.

\* Բնագրում թվագրված է 1823, որն, անշուշտ, վրիպակ է (Ալ. Մ.):

### ԿՈԿՈՎԱՆՔ ՎԱՐԴԻ:

Յարեաւ յոսկեղէն, յակնամուտ մահճէն  
Ահեղ առաւօտս ի զարդ ամպեղէն, ի ձորձ լուսեղէն.  
Արի՛ք խանդակաթք, դուք տեսէք ձեզէն,  
Ռատ գոլ ասացէք սիրոյն գեղազէն, գեղոյն հրազէն:

Լիալոյս լուսին, զարդ ամպոց մթին,  
Փառք գիշերացեալ սրտիս ցաւագին, հոգւոյս տրտմագին,  
Առ իս նշողեա՛ գքո շող պանծագին.  
Էկէզ սերդ զաղիսս՝ քեզ միշտ կաթոգին, ոյք միշտ գալարին:

Մոլորին իմ միտք, լեզուս պապանձի,  
Ռաբունիլ զքէն ոչ զօրէ յայտնի, առ չարացն ահի.  
Դարանէ քո գեղ զսիրտ փոքու, մեծի.  
Ի՞նչ քեզ տոկացից, ոսո՛խ պաշտելի, անզոյգ յաշխարհի:

Արև բարերար, զվարդն իմ ջեռո՛  
Նախածագ լուսովդ, եռանդեամբ լցո՛, զարթո՛, փայլեցո՛.  
Րակերտ է, չքնաղ, գիրգ, ջինջ ծով սիրոյ,  
Արժանի շողոյդ ջեր, գթոյ, լուսոյ, մաքուր ի տապոյ:

Ես յանմանէն ցարդ զուրկ մնացի,  
Աչօք գողանալ զնա ոչ կարացի, շատ գուն գործեցի.  
Նախա՛տ, վա՛յ, ամօ՛թ անգութ օրհասի,  
Զօրէն անողորմ, անհաշտ ոսոխի, ժանտ մարդասպանի:

14 Մարտի 1831. ի Հաղբատ:

### ԴԱԻ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ:

Աչք իմ միշտ առ քեզ պշնուն, սիրելի,  
Հանգէտ երկաթոյ, գերոյ մագնիսի.  
Չեմ երբէք ի քէն բաժան, տենչալի,  
Նման լուսասէր խոնարհ ստուերի.  
Սիրտ իմ քեզ յաւանդ ետու, մագելի,  
Անսիրտ կամ ահա, որպէս անշունչ դի.  
Արդ խէթ հայեցիք զիս խոցոտելով,  
Նման արևու զաչս հողեղինի՝  
Զի՞նչ կամիս առնել, հու՛ր անտանելի,  
Մահու խղճալոյս է՞ր լինիս գործի:

Չքնաղ դիմաց քոց ի կերպ հրեշտակի՝  
Քաղցր ակնարկ, ծիծաղ, ժպիտ յարմարի.  
Քոյ անոյշ ձայնի, սրտակէզ լեզուի՝  
Խրոխտ բարբառ, բիրտ բան ոչ է արժանի.  
Կարմրերփեան շրթանցդ նուրբ, զարմանալի՝  
Զուսպ, անխօս կալն է մեղք աններելի.  
Այդ քո հրաշակերտ, անզոյգ իրանի  
Բարք հեզ, դիրանսաց միայն պատշաճի.  
Քեզ չի՛ք ինչ նման յոլորտս աշխարհի,  
Ո՛վ ի քեզ հայի՝ անշղթայ կապի:

Հայեաց ի պարզ ջուր կամ ի հայելի,  
Տե՛ս, թէ զի՛նչ ես դու, սրտիս թագուհի.  
Բայց սոսկամ, գուցէ ինձ նման գերի  
Դարձցին քոյդ գեղոյ, գեղոյ անմահի:

Որպէս ծովսն ի վեր բնապէս ձգի,  
Որպէս անոն առ իւր նպատակ բերի,  
Որպէս ջուր վերուստ ի վայր սողոսկի,  
Որպէս մարդ հիւանդ՝ ողջ լինել կամի՝  
Նոյնպէս սիրտ, մարմին, իմ բոլոր հոգի  
Քեզ բաղձայ, սէ՛ր իմ, քն վառի, մաշի:

Չքնադաց ըզգով, զանուն և պատկեր  
Ծատ լուայ, տեսի յայս աշխարհ աներ.  
Յուդիթ, Սաթիմիկ, Բերսաբէ, Եսթեր,  
Մեծ Կղեոպատրայն, որ զաշխարհ գերեր  
Պարք օրհորդաց ի Կողքիս, յեզեր,  
Ոյց սիրով երբեմն Հոովմ հեծեծէր,  
Ռաքելն Յակովբայ՝ որ գողով այրէր,  
Զքեռ իւրոյ նախանձ ի բոց արծարծէր՝  
Առ քն չե՛ն այլ ինչ, բայց միայն ստուեր.  
Դու՛ տիւ անմամն, իսկ դոքա՛ գիշեր:

Թե՛զ զքեզ յիշելով այդքան բորբոքիմ,  
Ի գով քո բերեալ ա՛յսպէս կաթոգնիմ՝  
Տե՛ս թէ ի խօսիլս ընդ քեզ, հոգի իմ,  
Զի՞նչ կրեմ, յի՞նչ բոց, յի՞նչ հնոցի կիզիմ  
Յիշել զքո անուն չիշխեմ, պապանձիմ  
Յահէ նախանձոտ մարդոց դիւադէմ.  
Զգեղ քո վայելել միշտ ոչ վստահիմ,  
Հեռացեալ ի քէն թօշնիմ, թառամիմ.  
Ա՛խ, յիւր կէտ վերջին եհաս սեաւ կեանք իմ.  
Ա՛հ, ես ե՞րբ մեռայց, ե՞րբ հանդարտիցիմ:

26 Ապրիլի 1831. ի Հաղբաւ:

## Գ Ա Ր Ո Ւ Ն:

Յամսավերջն ապրիլի զպատուհանս բացի,  
Զձիննաթաղ դաշտորայս ծաղկազարդ տեսի.  
Արտասուք եռանդունք զայտս իմ այրեցին,  
Զիմ անդարձ գերութիւն յուշն իմ մուտ ածին:

Լեղուապէս դառնացան քիմք վհատ հոգոյս,  
Զմրեցան զգայարանքս, հատան ելք շնչոյս:  
Ափսոս՛ս ինձ, ասացի բիւր անգամ յայն օր,  
Ծատ անէծս թափեցի ի ծննդեանս վատ օր:

Մաշեցայ, թօշնեցայ, մտի խոր ի քուն,  
Զչար կսկիծ հէք այրոյս արկի ծով յանհուն:  
Դշխուն մեծ անմահից էջ ինձ յայց տեսլեամբ,  
Որպէս թէ ի փոսոյ զիս ելոյզ ձեռամբ:

Աներկմիտ մօտ մատեայ ի համբոյր ոտին,  
Գերբնապէս սքանչելեօք զիս ազատողին:  
Րամբ ձայնեղ թոշնակաց ճոխ դայլալեցին,  
Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին:

Երանի՛ ասացէք կարմրացայտ վարդիս,  
Քաջալերս տուք մնա ի գով պաշտպանիս:  
Ասա՛ղ ինձ, նեղասիրտ կարճամիտ լալոյս,  
Զիա՞րդ զիս կարծեցի կորուսեալ անյոյս:

Նախատինք իմ նեղչաց՝ նետ եղեմ ինքեանց,  
Նանրացան դաւք նոցա, անկան յիրեանց ցանց:  
Յաւագնեալք, օրհնեցէ՛ք զանուն Տեառն յաւէտ,  
Դի՛ք զյոյս ձեր յօգնութիւն Խաչին փրկաւէտ:

27 Ապրիլի 1831. ի Հաղբատ:

### ՅՈՐԴՈՐԱԿ ԱՌ ՈՒԽՏԱԻՈՐՍ:

Յառաջ քան զբարերար արևուն երևել՝  
Երթիցու՛ք ի Սուրբ Խաչ զմեր սուրբ ուխտ կատարել,  
Աստուծոյ հօր մերոյ զքաղցր շնորհս վայելել,  
Միամիտ սուրբ սրտիւ Տեառն երկիր պագանել:

Լալագինս զհրաշագործ Խաչ Փրկչին համբուրել,  
Մեր բազում յանցանաց քաւութիւն թախանձել:  
Անդ զանբիծ Տիրամայրն բարեխօս մեզ կայցուք,  
Զամլորդի Կարապետն մեզ նպաստ կարդասցուք:

Մեր հոգւոց լուսատու զսուրբ Գրիգոր կոչեսցուք,  
Ընդ սոցա մաղթանաց զաղօթս մեր խառնեսցուք,  
Դրանց փառաց քրիստոսեան տաճարին բաղձասցուք,  
Խունկ և մոմ լիաձեռն Բարձրելոյն մատուցուք:

Արբցու՛ք անդ յաղբերացն ջուր անոյշ կենդանի.  
Ախտաբոյժ, թաւ ուռիքն՝ մեզ լիցին հովանի.  
Բախասցու՛ք երկնատաք ցնծութեամբ ի հոգի.  
Ու՛շ դիցուք նուագաց թոչնակաց սխրալի:

Երանի՛ եկողաց ի Սուրբ Խաչ վասն ուխտի.  
Նոցա սիրտ և հոգի՝ շնորհօք Տեառն լիասցի:  
Արդեօք ո՞չք ի վանացս ձեռնունայն զնացին,  
Իրեանց սուրբ անարատ բաղձանաց ոչ հասին:



Նշանաւ Սուրբ Խաչիս գունդք դիւսց հալածին,  
Մեր հոգիք և մարմինք ի չարեաց ազատին.  
Ցաւք և ախտք առ ի մէնջ առ ժամայն փարատին.  
Օ՛ն, եկա՛յք, երթիցու՛ք յուխտ ի ծունր Սուրբ Խաչին:

15 Սեպտ. 1833. ի Նորն Նախիջևան:

## ԿՈՂԿՈՂԱՆՔ ԱՌԻ ԽԱԶ ՓՐԿԶԻՆ:

Անարատ գառին քառասուց Սեղան,  
Զէն այսահալած, կենաց գրաւական,  
Ինձ օգնե՛ա, ողորմեա՛, ի թշնամույս ազատեա՛:

Լարեն ինձ թակարդ ժանտից ջոկք ահեղ,  
Յիմ կորուստ բերին, իբր անհատ հեղեղ.  
Զիս զերծո՛, ապրեցո՛, քո նշանաւ ամրացո՛:

Աման յեղկելիս զմահաթոյն քարբից,  
Ընդ լաց իմ բերկրին, ա՛խ, ու՞ր դիմեցից.  
Քառաթև, լուսաձև, ձգեա՛ առ իս զքո սուրբ թև:

Մորմոք, սուգ, կսկիծ և երկունք մահուան,  
Անթիւ տառապանք զինն շրջեցան,  
Ապշեցայ, ցնորեցայ. Սու՛րբ Խաչ, օգնել ինձ փութա՛:

Դառնացան իմ կեանք յօրէս ծննդեան,  
Յո՛ւ և գնացի՛ միշտ գտի դարան.  
Հալեցայ, մաշեցայ, յամբարշտաց ոչ զերծայ:

Առ դրան տաճարիդ արդ կամ գետնամած,  
Հայցեմ զօգնութիւն Խաչիդ պարծանաց.  
Յիս գթա՛, խնայեա՛, զանհուն վերս իմ բժշկեա՛:

Բախացո՛ զիմ սիրտ ձայնի ցնծութեան,  
Նորոգեա՛ զիմ կեանս, զիս ի հաղբից հա՛ն:  
Ո՛չ երթայց ի քոց դրանց՝ չև առեալ զիմ խնդրուած:

Երանի՛ է ինձ, զի եմ քո ծառայ,  
Որդի աղախանող, շնորհացդ եմթակայ.  
Յիս հեղցես լիսպէս զԽաչիդ նպաստ յայտնապէս:

Արդ արա՛ առ իս նշան բարութեան,  
Ներկեա՛ ամօթով զնեղչացս երախան.  
Զիս կանգնեա՛, պաշտպանեա՛,  
ընդ հովանեաւդ պարսպեա՛:

Նշոյլ սխրալի Խաչիդ յիս ծագի,  
Հոգիս նորոգի, յոյս իմ արծարծի.  
Փա՛ռք Խաչիդ Քրիստոսի, նեղելոյս ապաւիճի:

4 Մարտի 1834. ի Նորն Նախիջևան:

## ԱՂԵՐՍ ԱՌ ՆԱԽԱՎԿԱՅ ԱՄԼՈՐԴԻՆ:

Մօր Միածնի, անբիծ կուսին  
ԶԲան հայրական, զլոյսն անքնին  
Կացեալ տեսեր յորովայնին,  
Իջեալ ի մահ, ի զոհ խաչին.  
Յովհաննէ՛ս, մեծ յորդիս մարդկան,  
Լե՛ր ինձ պաշտպան:

Բարուն քարոզ յըմբոստ տոհմին,  
Նախապկայդ մարդկան Փրկչին,  
Տաճար շնորհաց արա Նորին  
Զծառայդ թշուստ, կողկողագին.  
Մկրտի՛չ Տեառն ի Յորդանան,  
Լե՛ր իմ պաշտպան:

Ի մեղապարտ անուանակցեղ  
Հերքեա՛ զչարին ոյս, հաղբ և նետ.  
Զունիմ ինձ զոք, սու՛րբ Կարապետ,  
Դու անյուսիս լե՛ր տէր, հայր, դէտ.  
Անեղ արփույն ջինջ արուսեակ,  
Հա՛ս ինձ երագ:

4 Մարտի 1834. ի Նոր Նախիջևան:

Նըշաակ եմ յաշխարհի, շատք ի վիճակ իմ նային.  
Յիշեա՛, Տէր, զքո զուխտ ընդ իս. աւուրքս ի մոտս հասանին:

4 Մարտի 1834. ի Նոր Նախիջևան:

### ՍԱՂՄՈՍ ԾԵ:

Աստուած, լու՛ր ձայնի իմում, չարք զարարածդ տազնապեն.

Զիս իբրև կաւ գոեհաց՝ այպանելով ընդոտնեն:

Լալագին առ քեզ գոչեմ, հա՛յր իմ, լոյս, կեանք, ապաւեն,

Զի նոցա դաւք անդադար յիս տեղան անձրևօրէն:

Ա՛ն զիս, Տէ՛ր, ծածկեա՛ ընդ քո ամրածածուկ հովանեաւ,

Չքացո՛ զոյս նոցա ժանտ, պաշտպան լեր քո ասպարաւ:

Մի՛ երբէք թողոր նոցա կատակել զքո պատկերաւ,

Զքեզ յերկինս՝ զինքեանս յերկրի մոռանալ շտապ տազնապաւ:

Դու ի գիրս անանց կենաց զիմ տառապանս նշանեա՛,

Զարտասուս ողորմելոյս յանօթ անբեկ ամանեա՛,

Անկորու՛ստ առ քեզ պահեա՛... ինձ այժմ ազդու դեղ շնորհեա՛.

Տմարդեաց զոյժ և զսաստ յինէն արագ փարատեա՛:

Բամին ցանգ ի վերայ իմ, զիս անտերունչ համարին,

Զիմ ողբովք, հառաչօք ատամնաբաց ծիծաղին:

Եթե՛ ոչ կարկառեցես ինձ նպաստ քոյ սուրբ ձեռին՝

Չարաչար զիս լլկեցես, զանունս յերկրէ ջնջեցես:

Առաքեմ առ քեզ, լոյս իմ, զբան աղօթիցս ողբագին.

Ընկա՛լ զայդ իբրև զխունկ, յիշեա՛ զծառայդ ցաւագին:

### ՍԱՂՄՈՍ ԺԼԹ:

Ապրեցո՛ր զիս, Տէր, ի մարդոյ չարէ,  
Զերծո՛ր զիս, փրկեա՛ւ յանիրաւ առնէ.  
Սիրտ նորա է վիճի խորհրդոց չարաց,  
Վիճի և կոռոց, նենգոտ խաբանաց:

Զլեզու իւր սրէ ըստ լեզուի օձի,  
Ընդ շրթամբք գաղէ զթոյն անգութ իժի:  
Պահեա՛ր ի ձեռաց առն ապիրատի  
Զհոգի իմ, զմարմին, յո՛յս ապաւինի:

Խափանել խորհի նա զգնացս իմ բարի,  
Գաղտ որոգայթել զանձն իմ դարանի.  
Թակարդ հնարի՝ գայթ ոտից իմոց,  
Ծուրջ զինն դնէ զանթիւ հաղբ դաւոց:

Այլ դու, Աստուած իմ, հայր արարածոց,  
Խոնարհեա՛ց ի ձայն աղօթից իմոց,  
Տէ՛ր, Տէ՛ր, զօրութիւն փրկութեան իմոյ,  
Յօր չար՝ հովանի որբ գլխոյ իմոյ:

Մի՛ յիս լրացին իղձք մարդոյ ժանտի,  
Որ զուր վտանգէ զանձն իմ ցաւալի:  
Զի մի՛ բարձրացի հպարտ սիրտ նորա,  
Մի՛ կատարեսցին վատ խորհուրդք նորա.

Այլ ծուխ մահաճոտ գարշ շրթանց նորա  
Ծնչասպառ անդարձ կորուսցէ զնա:

Լեզուանոյն գործք միշտ անյաջող կացցեն,  
Զայր չար ի կորուստ իւր գործք որսացեն:

Ծանեայ՝ զի առնես, Տէր, զդատ աղքատիս,  
Քննես զիրաւունս ընդդէմ հալածչիս.  
Զանունդ ահաւոր արդարք օրհնեսցեն,  
Ընդ քո հովանեաւ անախ հանգիցեն:

## ԱՊԱՇԱԻ:

Տէ՛ր ամենակալ, Աստուած հարցն մերոց,  
Անաչառ տեսուչ երամոց սրբոց,  
Հաստի՛չ աշխարհի և մորի՛ն զարդոց,  
Շնորհեա՛ զթողութիւն իմոց յանցումսդ:

Ո՞չ դու սանձեցեր զլրբութիւն ծովուց,  
Անդարձ հրամանաւո՞ փակ եղեալ խորոց,  
Կնքեալ զամենայն յանուն փառաց քոց.  
Է՞ր յամեն մերել իմոց յանցումսդ:

Ո՞վ է յաշխարհի յանթիւ հաստումսդ,  
Քոյդ ակնարկութեամբ ի գոյ ածելոց՝  
Որ ոչ յաճ և դող, յաղաղակ ողբոց  
Ի քէն հայցեսցէ զմերումն յանցումսդ:

Մե՛ծ են, Տէ՛ր, վայելք ահեղ փառաց քոց,  
Անճառ, սուկալի սաստք սաստիկ պատժոց.  
Անչափ, անքննի՛ն աղբիւր խղճամոց.  
Մոռա՛ զդիզացեալ բեռն իմ յանցումսդ:

Դու երկայնամիտ Տէ՛ր բարձանց, ձորոց,  
Դու հայր բազմողորմ անտերունչ որբոց,  
Դու հնարք փրկութեան առ քեզ դարձելոց.  
Դու փութա՛ ջնջել զախտս իմ յանցումսդ:

Ջոր սիրես՝ խրատես ըստ սուրբ կամաց քոց,

Անկորուստ պահես զթիւ քո որդոց.  
Զիս պատժեալ՝ ցուցեր զգութ քոյդ խնամոց.  
Արդ ե՛ղծ զգիր իմոց անթիւ յանցումսդ:

Աչք իմ՝ անարժանք տեսոյ շնորհաց քոց,  
Ականջք եղկելոյս՝ աւետեաց լրոց.  
Ուխտագանց եղէ անլուր սաստից քոց.  
Թո՛ղ ապերախտիս խոհերս յանցումսդ:

Բռնութիւնք կապից մեղանաց իմոց  
Ուժգին խոշտանգեն զկամարարս այսոց.  
Արդ անյոյս, վհատ՝ ի սրտիս խորոց  
Գոչեմ. Տէ՛ր, մերեա՛ իմոց յանցումսդ:

Ոճիրք իմ բարձրեալ զԱստուածո՞ւ աստուծոց  
Շարժեցին ի սաստ գերոյս բազմակոծ.  
Թէ ոչ ինձ հասցեն մպաստք շնորհաց քոց՝  
Ընկլայց ի յորձանս իմոց յանցումսդ:

Զիմ սիրտ արարի մեհեան պիղծ կոոց,  
Այլանդակ կիրք իմ տիրեն իմ կրծոց.  
Այտնում ծանրութեամբ զազիր խորհրդոց.  
Լուա՛, Հա՛յր գթած, զբիծս իմ յանցումսդ:

Մեղայ, զլորեցայ չար մեղացս ի հնոց,  
Տոչորէ զիս անդ մշտարժած մե՛ծ բոց.  
Գերեցայ ինձէն թշնամոյն հոգոց.  
Հա՛ս, Տէ՛ր, փարատեա՛ զմէզ իմ յանցումսդ:

Մի՛ զիս մատնեսցես ի կուլ դժոխոց,  
Մի՛ տրտնեցուցես զգունդ անմահ գուարթոց.  
Տէ՛ր, քոյ եմ որդի, գործ սուրբ ձեռաց քոց.  
Կամեա՛ց զիս սրբել լիմոց յանցումսդ:

Դու ոչ ընդոտնես զաղերս դարձելոց,  
Ի գրոյ մեղանաց ի վեր ելելոց.  
Արդ ծագեա՛ յիս լոյս անհում բարեաց քոց,  
Քերեա՛ ի հոգւոյս զկեղտս իմ յանցուածոց:

Կեցո՛ զիս, Աստուած, ձեռամբ քոց խնամոց,  
Հանգո՛ ի կաճառս անմահ զուարթոց,  
Զգեցո՛ ինձ հանդերձ անեղծ շնորհաց քոց.  
Ասա՛ Ներեցի քոց գարշ յանցուածոց:

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ԻՍՐԱՅԵԼԻ:

### Գ-ժ-Կան :

Ո՞վ է աստ Յակովբ, Սահակայ որդի,  
Հայր տերանց իմոց, այր երանելի,  
Ծանօթ Աստուծոյ ինձ անծանօթի,  
Հինաւորց, ընտիր, մաքուր ծերունի:

### Յակովբ :

Ե՛ս եմ այն Յակովբ զոր, ա՛յր դու, խնդրես,  
Հայր գերդաստանիս՝ զոր աստ տեսանես.  
Յումմէ՞ յղեցար, զի՞նչ կամիս, ո՞վ ես,  
Ասա՛ աներկիւղ, զի՞ է, զի՞ սարսիս:

### Գ-ժ-Կան :

Ա՛խ, ո՛վ ալեգարդ ծառայ անեղին,  
Յեղծական մարմնի հրեշտակ անմարմին,  
Երջանիկ քո կեանք, վարուցդ ամբօրթիւն  
Զիմ լեզու կապեն, զիմ հագագ փակեն:

Քոյ որդիք առ քեզ զիս առաքեցին՝  
Լինել զուժատու քում յարգոյ անձին.  
Քոյ Յովսէփ չքնաղ հրեշտակ պատանին  
Գազանաց մատնեալ է յանտառ մըրթին:

Անդամ ինչ մարմնոյն ոչ ուրեք տեսաւ,  
Եւ ոչ այլ նշան, գլխարկ կամ հալաւ.  
Այլ այդ պատմունճան արիւնաթաթաւ  
Ի հովուաց ոմանց գտեալ՝ մեզ բերաւ:

Աղէ՛, տե՛ս, տէր իմ, ա՞յս է պատմուճան  
Յովսէփայ մաքուր քոյ անմեղ մանկան.  
Ողբա՛ գանբաղդին վաղահաս վախճան  
Եւ զիս արձակեա՛ յիմ լքեալ անդեայն:

**Յակովբ :**

Այո՛, այս ծաղկեայ ընտիր պատմուճան  
Է՛ որդւոյ իմոյ, զոր եկեր գազան,  
Սայրասուր ժանեօք արկեալ ի կործան,  
Վազր, արջ, գայլ, առիծ, կամ այլ չար գազան:

Ա՛խ, Յովսէ՛փ Յովսէ՛փ, ցուպ իմ ծերութեան,  
Ծնորհալի, քաղցրիկ, քնուշ, գեղազան,  
Աչեղ, մրայօն, կարմրայտ, քաղցրաբան,  
Խարտեաշ, գանգրահեր, մանուկ անման.

Ո՞վ զիս ստիպեաց գքեզ առաքել  
Անցուպ, անընկեր, յուղի անընտել.  
Մարդախանձ գայլոց կերակուր առնել,  
Զորդիդ իմ զգօն զուր կորուսանել:

Վա՛յ ինձ, սգալի անբաղդ ծերունույս,  
Այրի, անսփոփ, տխուր անորդույս.  
Ռաքէլ և Յովսէփ, իմ կեանք, աչաց լոյս,  
Իջեալ ի շիրիմ՝ զիս թողիք անլոյս:

**Հարսունի և Թոռունի Իտրայելի :**

Բա՛ւ է, Նախահա՛յր, լալ և աշխարել,  
Զանբաղդին անուն անդադար յիշել.  
Ողբովք զմեռեալն չէ մարթ յետ կոչել.  
Լա՛ւ է անտրտունջ կալ և համբերել:

ՅԱդամայ ցայսօր չիք ուրուք լուեալ՝  
Զմեռելոյ ուրեք կրկին յարուցեալ.

Ապա զի՞նչ օգուտ անսփոփ ողբալ,  
Նեղիլ, մորմոքիլ, արտասուել, սգալ:

Մետասան որդիք կան քո կենդանի,  
Առոյգ, չափահասք, գործունեայք, արի,  
Հարսունք և թոռունք քո, քեզ սիրելի  
Կարեն գանբաղդին ունել զտեղի:

**Յակովբ :**

Տառապանք և վիշտ զանձն իմ մաշեցին,  
Աչք իմ ցնծութիւն ոչ ուրեք տեսին.  
Յայնժամ իմ յօրուածք բերկրեալ խայտասցեն՝  
Յորժամ զիս տեսից ի շունչ իմ վերջին:

Զէ՛ ան վատաբաղդ, որ վաղ մեռանի,  
Այլ որ չետ մահու սիրելւոյն ապրի.  
Արդ կեանք իմ մահ է, մահ՝ կեանք ցանկալի.  
Փափագիմ դնիլ յորովայն շիրմի:

Ո՛հ, որդեա՛կ որդեա՛կ, զիս բարձ, առ քեզ տար,  
Մի՛ թողուր զիս աստ տանջիլ չարաչար.  
Ես՝ քո մոլորակ, դու՝ արփի պայծառ.  
Առանց քոյ զինն պատեալ է խաւար:

Մահաշունչ, ժոռատ, կարճու՛նչ ծերունի,  
Ծաղատ, շիլ, կաղ, հիւծ, խրտուիլ անճոռնի,  
Մեռելոց իշխան կմախք սուկալի,  
Համայն կենդանեաց տեսիլ ատելի,

Ո՞չ երկեար յինէն, յիմ անբիծ վարուց,  
Յիմ պահապանաց՝ յանմարմնոց պարուց,  
Յանսպառ շնորհաց, յիս յերկնից հեղլոց,  
Յիմ ամենիշխան Տեառնէ աստուծոց.



Անգու՛թ, ձգեցեր զքոյ սուր գերանդի,  
Հնձեցեր յերկրէ զիմ Ռաքէլ բարի,  
Զիս ի սուգ արկեր, յողբ անտանելի,  
Զիս միայն թողեր այրի տրտմալի:

Մինչչև էր բուժեալ վերք սրտի իմոյ՝  
Նոր վիշտք, նոր արկածք, նոր աղէտք սգոյ,  
Նման կարկտածին թխպայտորդ ամպոյ՝  
Տեղացեր ի գլուխ թշուառս ծերոյ:

Զիմ Յովսէփ յաշխարհ մեռելոց տարար,  
Գազանաց ժանեօք ճերձեր չարաչար.  
Զանձն իմ կիսամեռ, տրտում, ոգեսպառ  
Ի վտանգ վերջին հասուցեր իսպառ:

Ահա պատմունճան նազելի որդւոյս,  
Ռաքելայս երկանց անդրանիկ պտղոյս,  
Յարիւն շաղախեալ անմեղ աղանոյս,  
Խոնարհ, հնազանդ, խոհեմ սիրելւոյս:

Զիմ չքնաղ Ռաքէլ ի հող ծածկեցի,  
ԶՅովսէփ գեղեցիկս այսօր կորուսի.  
Արդ կամ անսիռփ անգաւակ այրի,  
Նեղեալ վարանեալ անբաղդ ծերունի:

## ԲԱՆՔ ՄՕՐ ԽԱԶԵԼՈՅՆ:

Ո՛վ պարտէզ ծաղկալի,  
Քան գեղեմ ցանկալի,  
Քեզ հազար երանի,  
Զի Հաստչիդ ես տեղի,  
Որդւոյս միածնի  
Փրկչիս Քրիստոսի:

Գերագոյն ես երկնից,  
Գովելի քրովբէից,  
Բաղձալի անմահից.  
Զի էակն համայնից  
Ի քեզ պարագրի,  
Ի քոյ սիրտ թաղի:

Պարտիզպան, յիս գթա՛,  
Քաղցրութեամբ յիս նայեա՛  
Յարտասուս իմ խնայեա՛,  
Յաղէտս իմ ակնարկեա՛.  
Յորդւոյս գերեզման  
Ինձ առաջնորդեա՛:

Զիս թաղեա՛ ընդ որդւոյս,  
Դի՛ր ի գուր ինչ անլոյս.  
Զի ա՛ստ է եղկելւոյս  
Որդի, Տէր, կեանք և յոյս.  
Ա՛յց արա գերոյս,  
Յո՛յց զտեղի որդւոյս:

□ Կին դու, զի՞ ցաւագնիս,  
Անսկոյս մորմոքիս.  
Խնդրութեանց աւետիս  
Լուր յինձն, սիրելիս.  
Քո որդին իմ ես,  
Զոր մեռեալ կարծես:

Մահակից ինձ ցուցար,  
Զո՞ն անհուր յայտնեցար.  
Յարդարոց ի կանառ  
Պարագլուխ հանգուցար.  
Արդ, մա՛յր խաչակից,  
Լե՛ր ինձ փառակից:

Տե՛ր, որդեա՛կ, Աստուա՛ծ իմ,  
Տես զբորբոք սիրոյ իմ.  
Կարօտով քով կիզիմ,  
Տարդ խաւար էր կեանք իմ:  
Տանջիմ, մեռանիմ  
Առանց քո, կեա՛նք իմ:

□ Դա՛սք զուարթնոց, արդ իջէ՛ք,  
Զմարբ իմով շուրջ կացէ՛ք,  
Սուրբ դաբնեաւ պսակեցէ՛ք,  
Զտխրութիւնն սփոփեցէ՛ք  
Դշխոյիս երկնից,  
Զմօր Հաստչիս էից:

### ԼԱՅ ԴՍՏԵՐՆ ՅԵՓԹԱՅԵԱՅ:

Դատ. ԺԱ. 30. 40:

Յառաւօտ կենաց կուսանիս,  
Յարշարոյս աւուրց անմեղիս՝  
Խորշակ մահուան տարածի.  
Ա՛խ, լոյս աչացս պակասի:

Ա՛յ ծանօթք, լերինք և հովիտք,  
Ա՛յ պալծառ դաշտք ծաղկափթիթք,  
Ահա ի ձե՛նջ հրաժարիմ,  
Փութով եդայց ի շիրիմ:

Լացէ՛ք զիս, ո՛վ անտառք, բլուրք,  
Լացէ՛ք, հարք, մարք, եղբարք և քորք,  
Զիս փոյթ զե՛նցէ սուր ուխտին,  
Յօդուածքս այժմէ՛ն սարսափին:

Արին իմ է զին փրկութեան  
Դիցամոլ տանն իսրայելեան.  
Մեղապարտքն ազատ մնան,  
Անմեղ կեանք իմ չքանան:

Մա՛յր իմ, ա՛խ, դու մի շատ ցաւիր,  
Հօրս ուխտի բնաւ մի ներհակիր.  
ՅԱստուած փրկիչ զլոյս քո դիր,  
Բե՛ր զզարդս իմ, մի տխրիր:

Դուք, դասերք տոհմիս յակորեան,  
Շուրջ զինն կացէք միաբան.  
Երգեցէք գերգս հարսնութեան,  
Միշտ տօնեցէք զիմ վախճան:

Աստուած մեծ, փառք Իսրայելի,  
Զիս ընկալ, իբր զհոտ կնդրկի,  
Իբրև զգոհն Աբելի,  
Իբրև զորդին Սարրայի:

Բաբունեաց վճիռ համաձայն  
Ոչ կարաց մահուս տալ խափան.  
Տէր, դու ինձ լեր օգնական,  
Դու հեշտ արա զիմ վախճան:

Եղկելոյս ծնողք ցաւալի  
Մնասցեն առանց զաւակի.  
Շնորհեա նոցա սիրտ արի,  
Մեղմեա զմորմոք դառն վշտի:

Աւաղիկ երամք հրեշտակաց  
Առ երկնիք կան թևատարած.  
Զիս հրաւիրեն յադիմն բաց,  
Զիս կոչեն հարսն հօր փառաց:

Նկարէն քօղն իմ հարսնութեան  
Փոխարկի ի պատան թաղման.  
Իմ պճնագարդ հարսնարան  
Եղև այս խոր գերեզման:

Յուցէք ինձ զիմ մահու գործի,  
Զսուրբ զէն զոհիս արժանի:  
Արդ ողջ լերուք, սիրելիք,  
Օրհնեալ է Տէր, պիղծ են դիք:

## ՄՈՐ ԱՂԵԿԻԶԻ ՈՂԲ ՔՍՏՄՆԵԼԻ ԸՆԴ ՄԱՀ ԱՆԴՐԱՆԿԻ ՅՕՏԱՐ ԱԾԽԱՐՀԻ:

Հոգեզուարճ դարձիդ, հոգեկից որդեակ,  
Ես ցայգ ու ցերեկ բաց աչօք սպասեմ.  
Ի տունջեան յուսով զիս խաբեմ, որդեակ,  
Զգիշերն երագովք միշտ ընդ քեզ խօսիմ.  
Ո՛հ, ե՞րբ եկեացես, զիս ե՞րբ սփոփեացես:

Իմ սիրտ մայրենի, իբրև ջուր յստակ,  
Զպատկերդ ցուցանէ յինքեան պարզ, որդեակ.  
Ա՛խ, մեռցի իմ սիրտ, սիրտ տրտմագուշակ.  
Քայքայիմ, հալիմ, կաթոզնիմ, հաշիմ.  
Զիս ե՞րբ սփոփեացես, ե՞րբ տեսես որդեակ:

Միանգամ ցո՛յց մօրդ զերեսս քոյ, որդեակ,  
Միանգամ լուայց զձայն քոյ, որդեակ՝  
Շանթք երկնահոսանք զսեաւ կենաց իմ թել  
Փութասցեն ապա կտրատել, խզել.  
Ի սէր քո կիզիմ, տոչորիմ, որդեակ:

Ո՛ր գիտէ, թէ յո՛ր անկեան աշխարհի  
Ի մէջ օտարաց, յաղտոտ անկողնի,  
Հիւանդ, անխնամ, մերձ մահուան գբի  
Մա՛յր ձայնես, և ես կամ ի քէն հեռի.  
Վա՛յ, ցաւի հոգիս, լեարդ իմ խարշատի:

Ի մէջ անկողնի ի մութ գիշերի  
Յահեղ երագի զորդեակդ իմ տեսի

Ի մահուան մահճի ի մեծ տազնապի.  
Զձեռն իմ ձգեցի՝ առ քեզ ոչ հասի.  
Երա՛զ նզովեալ. ուշ իմ ցնորի:

Փարիմ զքո ոտիք, որդեակ նազելի,  
Զոհ լիցիմ իմ կեանք քեզ, անգիմ որդի.  
Դու արդ դարձ առ իս, իմ հնազանդ որդի,  
Ընդ քո զի՛ս մեռո, կեցո զիմ հոգի:  
Վա՛յ, քանի՛ դառն է մայրութիւն, որդի:

Համբար է վշտաց սիրտ մօր քոյ, որդեակ,  
Անհուն եմ աչացս հոսանք արտասուաց:  
Դու ինձ մխիթար, ծաղիկ անուշակ,  
Խարիսխ իմ յուսոյ, իմ կեանք, լոյս, տատրակ,  
Փութա, դարձ առ իս, սպառիմ ի կեանաց:

### **ԿՈԾ ՄԵՂԿԱՂԷՏ ԾՆՈՂԱՅ Ի ՎԵՐԱՅ ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԻԱՄՕՐ ԴՍՏԵՐ:**

Հրեշտակ շնորհադէմ, վասն Է՞ր զմեզ թողեալ յողբ անմխիթար՝  
Ռահիմ երկնացոյց՝ անմահ փեսայիդ՝ փափագող գտար:  
Ի քեզ նայելով, ի հոտ քո զմայլեալ, մեր վարդ բոցավառ,  
Փառաց խունկ անոյշ էիցս Էակի տայաք անդադար:  
Սիրտ մեր զկարեվէր յանկարծ խոցեցեր նետիք մահարար.  
Ի՞նչ առ քեզ մեղաք, գրաւական սիրոյ ամոլիցս շուար:  
Մի զմեզ, աղէկէզ, բազմաղէտ ծնողքդ, մոռանար իսպառ.  
Էիմ հրամանաւ էջ ընդ սուրբ զուարթնոց, զմեզ առ քեզ տար:

## ԱՆԷԾՔ:

Զկատակերգու զախտացելովս  
Զերծ մի՛ թողուր, աշխարհ, յախտից.  
Զծաղրածու զսիրահարասս  
Աշխարհ, հաղորդ արա իմ կրից.  
Որով զլեզուս սանձել ուցիմ  
Ի խոցելոյ զայր ցաւալից.  
Եւ կրիք վշտաց իսկ վշտակրաց՝  
Գտցիմ պատրաստ գոլ կարեկից:

## ԱՆՈՒՐՋՔ:

Յառաւօտուց ի յանկողնի  
Սէր նազելոյս զիս խորովէր.  
Անքուն զգիշերն ես անցուցի,  
Զի տանջէր զիս նորա պատկեր:

Լեզուս ցամաք, հոգւով վհատ,  
Տկար մարմնով կայի անկեալ.  
Անուրջք անոյշք ի մինչ կիսաստ  
Զթաց աչօքս կայիմ սփռեալ:

Միշտ մտատանջ, միշտ կաթոգիմ,  
Ալէկոծեալ նաւու նման.  
Դեղն իմ ցաւոց սէրն էր անգիմ,  
Բայց չերևէր նորայն նշան:

Այգիմ ցնցուղ ցայտեալ յիմ տուն՝  
Մերժեաց յինէն զմէզ քնոյն.  
Բոտեմ զիմ ուշ, լսեմ զդոփիմ  
Ոտնաձայնի իմ նազելոյն:

Երա՞զ է այդ, մնչեմ մեղմով,  
Հոգւոյս տանջող և յարթնութեան.  
«Աւա՛ղ զլխոյս, գոչեաց ճեպով,  
Ընդէ՞ր մաշիս, սրտիս իշխան»:

Նազելոյն ձայնն յունկն իմ հնչեալ՝  
Յիս արծարծեաց զկայծ կեանց.  
Յնծութիւն ինչ հանրածաւալ  
Հոգոյն մարմնոյն իսկոյն տիրեաց:

### **Տ Ա Պ Ա Ն Ա Գ Ի Ր Ք:**

Ես Հայկ պարագլուխ դիցափառ արեաց,  
Գլխահար Բելայ, ձեր հայր անմոռաց,  
Զիմ ոգի, աշխոյժ, զիմ ձիր գերապանծ  
Յոգի Յովհաննոս հեղի աննախանձ.  
Որովք ի պարծանս իւրոցդ համազգեաց  
Զայս յարկ իմաստից կանգնել կտակեաց:  
Ո՛վ Հայ շնորհապարտ, յայս կոթող հայեաց,  
Գնա անխտոր զհետ նորա շաւղաց:

Հայաստան, ու՞ր է քո Յովհաննէս երկնաձիր:  
□ Ի գրկացս զնա կորզեաց Պարկայից սեւա ջղիր:  
Դու ընդէ՞ր յոտս նոցա ոչ անկար ի խնդիր:  
□ Կաթոզին աղերսիս ոչ գտան ունկնդիր:  
Ծառաւիղ բարգաւաճ դիցազին Արամայ,  
Փարելի որդեգիր գթոտ մօր □ Ռուսիայ,  
Հայկազարմ որբոց հայր, յանձանձիչ անմոռաց,  
Հիմնադիր հոյակապ տաճարիս դպրութեանց,  
Բազմազան արգասեօք բարութեանց վեհ ցուցար  
Հին և նոր Հայրենեաց տիրապէս պարտավճար:

Արժանի դասելոյ ի կանառ աստեղաց  
Առ ծագել զանստուեր լոյս ի ցեղ Հայկազեանց.  
Բանալի ժանգահար գիտութեանց բանալեաց,  
Յովհաննէս, հայկաձին տոհմիս թագ գեղապանծ:

Թխաստիպ ամպ մահու ընդ մեր փառս նախանձեալ՝  
Առ ի մէնջ տարածամ զգերարփիդ ըսքողեաց.  
Այլ սիրտ մեր շնորհապարտ քով լուսով գեր փայլեալ՝  
Յանմոռաց յիշատակ զայս կոթող քեզ կանգնեաց:

### **Ն Ի Ի Թ Ք Ն Ա Խ Ա Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Ա Լ Ք:**

Մեծաց անկ է գոլ տիպ բարեաց գործոց.  
Զի բիւրք ընթանան զհետ նոցա հետոց:  
Տկա՛ր է իշխանն, անարգ, վատանուն՝  
Եթէ չէ ահեղ, հզօր և արթուն:  
Անկցին տէրութիւն, կարգ և պետութիւն  
Յանպատիժ թողուլն զչարաց լրբութիւն:  
Միոյ չար գործոյ անմիտ թողութիւն  
Բիւր չարեաց լինի արձակ թոյլտուութիւն:  
Զսուրն աստուածաւանդ, զահն իմոց նեղչաց  
Նա յիմ գլուխ իջոյց, զիմ բաղդ ընդոտնեաց:

Ընդէր ապիրատ է, վակժոյժ, երկչոտ,  
Զայլոց խորհրդոց յաւէտ կասկածոտ:  
Յո՞ դիմէ քո իղձ, ո՞ զքեզ աստանդէ,  
Ի՞մ իմիք բաղձաս, ո՞ զքո սիրտ մաշէ:

Զարթեալ տիւն, զմութ գիշերին ցնդեաց,  
Առակեաց զփախուստ ապուշ պագշոտաց:

Անթաքուստ է սէր, քաղցր են վերք նորա.  
Սիրահար սրտի սէրն է անթեղայ:  
Մի թոյնն է դեղթափ երկրորդեալ թունոյ.  
Իսկ սէրն առաջին՝ է խոչ միւս սիրոյ:

Մի հոգի չէ ստրուկ երկուց ներհակ կրից.  
Մին սիրտ չէ մեհեան երկուց ահեղ դից:

Նա զինքն ինձ բաշխե, զիս յինէն զրկե.  
 Զիմ սիրտ խանդակաթ անխիղճ կողոպտե:  
 Ծիտ, լոր, որդն և օձ, չքոտին մրջին  
 Սիրոյ ազդեցմամբ անձայն հնազանդին:  
 Մահ, զանձ, կեանք, չար ցաւ, վաստակ, տքնութիւն  
 Ոչ կարեն մեղմել սիրոյ զբռնութիւն:

**Վ Ե Ր Զ:**

**Ա.**

**Աղին, գոյ.  
 Ակմբել, բ.  
 Աղէ՛, ձ.**

**Ամանալ, ամալ, բ.  
 Ամլորդի, ած., գոյ.**

**Ամոլ, գոյ.  
 Այնմ, Այնմիկ, դ.  
 Այտումն, գոյ.  
 Անագան, ած., մկբ.  
 Անդեայ, գոյ.**

**Անդրանիկ, գոյ., ած.**

**Անեղ, ած.  
 Աներբ, ած.**

**Անզգաստից, մկբ.  
 Անթարթափ, ած., մկբ.**

**Անկ, ած.**

**Անկանել, բ.**

**Բ Ա Ռ Ա Ր Ա Ն**

Դրախտ, եղեմ:  
 Մի տեղ հավաքվել, խմբվել, ժողովվել:  
 Հրամայական-հորդորական բացականչու-  
 թյուն. ապա՛, դե՛, օ՛ն:  
 Ածել, լցնել, թափել, դատարկել, հոսեցնել:  
 Ամուլ մորից ծնված, ամլածին որդի (Հով-  
 հաննես Մկրտչի մակդիրը):  
 Լծակից, ամուսին, կողակից:  
 Այն-ի եզակի տրականը. նրան:  
 Ուղչելը, աչտուցվելը, փքվելը:  
 1. Ուշ, ուշացած: 2. Երեկոյան դեմ:  
 Խոշոր եղջերավոր անասունների հոտ՝  
 խումբ, նախիր, ջոկ:  
 1. Առաջնածին զավակ, առաջնեկ: 2. Մոր  
 միակ զավակը: 3. Փխբ. Առաջինը իր  
 տեսակի կամ կարգի մեջ:  
 Անստեղծ, չստեղծված, ինքնագո:  
 Որի համար երբ չկա, անժամանակ, մշտըն-  
 ջենավոր, հավիտենական:  
 Անսպասելի կերպով, հանկարծակի:  
 1. Աչքերը չթարթող, անթարթ, անքթիթ: 2.  
 Այս ու այն կողմը չթարթափող, անսայ-  
 թաք:  
 Պատշանավոր, պատշան, վայելուշ, հար-  
 մար:  
 1. Ընկնել: 2. Բաժին ընկնել, վիճակվել,  
 հասնել: 3. Մեկին ապավինել: 4. Մատնը-  
 վել, ենթարկվել: 5. Կախ ընկնել, ցածրա-  
 նալ: 6. Մեռնել, սպանվել, զոհվել: 7.  
 Թուլանալ, պակասել:



**Անկար, ած.**

1. Անկարող, թույլ, տկար: 2. Անկարելի, անհնարին:

**Անկէտ, ած.**

Ժամանակակէտ՝ սահման՝ վերջ չունեցող, անժամկետ, անսահման, անվախճան, անսկիզբ:

**Անկյուն, գոյ.**

1. Անկյուն: 2. Լայնաբար՝ կողմ, ծայր, խորշ: 3. Փխբ. Գլխավորություն, պատվավոր տեղ:

**Անճառ, ած.**

1. Որ չի կարելի ճանել՝ պատմել՝ նկարագրել անհասանելի մեծության՝ վեհության՝ գաղտնիության ևն պատճառով, անճանելի, անպատում, աննկարագրելի: 2. Որ անարժան՝ անպատշաճ է ճանել՝ պատմել, անասելի, ամոթալի, գարշելի:

**Անսալ, բ.**

1. Լսել մեկի խոսքին, հպատակվել, հնազանդվել: 2. Հավանել, ընդունել, հանձն առնել: 3. Ներել, զիջել, թույլ տալ: 4. Համբերել, դիմանալ: 5. Սպասել, մնալ:

**Անվթար, ած., մկբ.**

Անվնաս, անվտանգ, անփորձ, անասան, ապահով:

**Անտխեղծ, ած.**

Անարատ, անթերի, կատարյալ:

**Անուր, գոյ.**

Փայտե կամ երկաթե օղակ, որ անց են կացնում մարդու, անասունի վիզը կամ քիթը՝ զսպելու նպատակով:

**Աշխարել, բ.**

1. Լացուկոծ անել, կոծել, ողբալ, սգալ: 2. Ափսոսալ, զղջալ, ստրջանալ:

**Ապաշաւ, գոյ.**

1. Ջղջում, ստրջանք: 2. Ած. Ջղջալի, զղջական: 3. Ած. Թշվառ, խղճալի, եղկելի:

**Ապառում, ած.**

1. Վայրագ, դաժան, բիրտ, խիստ: 2. Հանդուգն, անամոթ, անպատկառ, լիրբ, անզգամ, տմարդի: 3. Չափազանց, սաստիկ:

**Ապիրատ, ած.**

1. Անտեղի, անհարմար, անպատշաճ, անվայել: 2. Անիրավ, անարդար, անզգամ, չար:

**Աստանդել, բ.**

**Աստէն, մկբ.**

**Ատեան, գոյ.**

**Արգահատել, բ.**

**Արդ, մկբ.**

**Արծարծել, բ.**

**Արկ, գոյ.**

**Արկանել զակն, բ.**

**Արմ, արմն, գոյ.**

**Աւաղիկ, մկբ.**

**Բ**

**Բազմական, ած.**

**Բազմոստեայ, ած.**

**Բան, գոյ.**

Այս ու այն կողմ տանել, ձգձգել, բուն ուղղությունից շեղել, տատանել:

1. Այստեղ: 2. Այժմվանից:

1. Դատարան, դատավճիռ կայացնելու հավաքատեղի: 2. Դատական միտ: 3. Դատավճիռ, դատաստան: 4. Դատավորների կազմը:

1. Գթալ, կարեկցել, խղճալ, ողորմել, ցավակցել: 2. Աղերսել, աղաչել, պաղատել, հայցել:

1. Այժմ, հիմա: 2. Ծղկ. Ուրեմն, ապա ուրեմն: 3. Արդի, այժմյան, ներկայիս:

1. Բորբոքել, բոցավառել: 2. Փխբ. Հրահրել մի բան, գրգռել: 3. Փխբ. Վերանորոգել, արթնացնել մի բան:

1. Զգված, ձգված բան: 2. Դժբախտ դեպք, փորձանք, պատահար:

Աչքը մեկից դարձնել, անտես առնել:

Ծառաբնի ստորին՝ արմատամերձ մասը:

1. Ահա այդ: 2. Ահա այդտեղ:

1. Կոչունքի հրավիրված, սեղանակից: Կոչունք, հացկերույթ, խնջույք, խրախճանք: 3. Բազմոց, նստելու տեղ սեղանի շուրջը, բազմելու պատվավոր տեղ:

Ծատ ոստեր՝ ճյուղեր ունեցող, բազմաճյուղ:

1. Խոսք, ասացվածք: 2. Միտք, գաղափար, իմաստ, նշանակություն: 3. Մտածողություն, դատողություն, բանականություն, խելք: 4. Պատգամ, պատվիրան, հրաման, պատվեր: 5. Բառ: 6. (Կրոն.) Հոր աստծու խոսքի մարմնացումը, Աստծու միածին որդին, Քրիստոս:

**Բառնալ, բ.**

1. Բարձրացնել: 2. վերցնել, տանել: 3. Ստանձնել: 4. Ոչնչացնել, ջնջել: 5. Բարձել, բեռնել: 6. Համբերել, դիմանալ, տոկալ:

**Գ**

**Գաղտ, մկբ.**

Կողմնակի մարդկանցից թաքուն, գաղտնաբար, գաղտնապես, լռելյայն:

**Գաւառ, գոյ.**

1. Խոշոր վարչատերիտորիալ միավոր որևէ երկրի կամ պետության կազմում, մահանգ: 2. Եպիսկոպոսական թեմ:

**Գերարփի, ած.**

Արփիից վեր, գերերկնային, գերապայծառ, լուսափայլ, լուսեղեն:

**Գլխահար, ած.**

Գլխին պատիժ, խտաբարո, բռնավոր:

**Գոլ, բ.**

1. Լինել, գոյություն ունենալ: 2. Իբրև գոյ. Գոյություն, էակ:

**Գոեհ, գոյ.**

Փողոց:

**Գուբ, գոյ.**

1. Խորունկ փոս, հոր: 2. Ջրափոս, ջրհոր: 3. Խորխորատ, վիհ:

**Գուն գործել, բ.**

Ջանք թափել, ճիգ գործադրել, ջանալ:

**Դ**

**Դաբնի, գոյ.**

Դափնի (բար.). Դափնազգիների ընտանիքին պատկանող մշտադալար թուփ կամ ծառ. կապլա, սարդենի (Laurus):

**Դար, գոյ.**

1. Զատիվայր բարձրություն: 2. Գետի զառիվայր ափ: 3. Հրվանդան:

**Դաւ, գոյ.**

Գաղտնի մտածված՝ մեզ ու խարդախ միջոց՝ մեկին սպանելու կամ վնասելու համար, չարամիտ դիտավորություն, խարդավանք, խաբեություն, մեզություն, դավաճանություն, դարանակալություն, որոգայթ:

**Դեղթափ, գոյ.**

1. Կենդանի մարմնի մեջ անցած թույլը չեզոքացնելու դեղ, հակաթույն: 2. Փխբ. Հոգեկան տվայտանքը՝ տառապանքը չեզոքացնելու միջոց:

**Դէտ, գոյ.**

1. Դիտող, տեսուչ, վերահսկիչ: 2. Լրտես: 3. Դիտելու տեղ, դիտանոց: 4. Նպատակ, մշավակ:

**Դիք, գոյ.**

1. Դիցաբանական՝ հեթանոսական աստվածներ: 2. Հեթանոսական աստվածների պատկերներ՝ արձաններ, կուռք: 3. (Եզակի մշանակությամբ) Որևէ աստված, դև, ոգի՝ չար կամ բարի

**Ե**

**Եկ, գոյ.**

1. Գալը, եկած լինելը, գալուստ: 2. Եկամտ, ստացվածք, արդյունք:

**Եղծանել, բ.**

1. Եղծել, փչացնել, խաթարել, ապականել, ավերել, վնասել: 3. Գրածը ջնջել, ոչնչացնել: 4. Հերքել, ժխտել:

**Եղու՛ղ, ձ.**

1. Ավա՛ղ, ափսոս, վա՛շ, վա՛խ, ո՛հ: 2. Ած. Խեղճ, թշվառ, ողորմելի, խղճալի, եղկելի:

**Երագ, մկբ.**

Արագ, թեթև, արըմբաց, շուտ, արագորեն:

**Երախան, գոյ.**

1. Սեղան, հացկերույթ, խրախճանք: 2. Սեղանակիցների խումբ: 3. Առհասարակ՝ խումբ, բազմություն:

**Զ**

**Զենել, զենուլ, բ.**

1. Մորթել, վիզը կտրել: 2. Զոհի համար անասուն մորթել, զոհ անել՝ մատուցել, զոհել:

**Զերծել, բ.**

1. Ազատել, փրկել: 2. Վրալից հանել, պոկել, հետ առնել:

**Զէն, գոյ.**

Թշնամու վրա հարձակվելու կամ թշնամուց պաշտպանվելու նազմական գործիք. զենք, զրահ:

**Զի՞, դեր.**

— **Զի՞ է զի**

**Զմբել, բ.**

**Զնին, գոյ.  
Զուգերգող, ած.**

**Զօրել, բ.**

**Է**

**Է, գոյ.**

**Է՛, ձ.**

**Է՞ր, դեր., մկբ.**

**Ը**

**Ըմբռնել, բ.**

**Ընդոտնել, բ.**

**Ընկլնուլ, բ.**

**Ժ**

**Ժանգախար, ած.**

1. Ի՞նչ, ինչու՞: 2. Ինչպե՞ս, ի՞նչ պատճառով:

Ինչու՞, ի՞նչ պատճառով, ի՞նչ է պատճառը որ:

1. Սաստիկ թմբել, թուլանալ, ընդարմանալ:  
2. Պապանձվել:

**Զննություն:**

Միասին երգող, զուգերգիչ, երգակից, ձայնակից:

1. Հնարավորություն՝ ուժ ունենալ մի բան անելու, ուժը պատել, կարողանալ, ձեռնհաս լինել, հնար գտնել, դիմանալ: 2. Զորանալ, ուժեղանալ, ուժի գալ:

1. Գոյություն ունեցող, գոյող, էակ, արարած: 2. Աստված, ինքնագոյակ, Տեր:

Կոչական բացականչություն՝ ո՛վ, ա՛յ, հե՛յ: Ինչի՞, ինչու՞, ինչի՞ համար, ինչի՞ց, ի՞նչ պատճառով:

1. Բռնել, ձեռքը զցել, կաշկանդել, ձերբակալել: 2. Մտքով բռնել, հասկանալ, իմանալ: 3. Տիրել, ժառանգել: 4. Որսալ:

1. Ոտքի տակ տալ, ոտնակոխ անել: 2. Փխբ. Արհամարհել:

Կուլ տալ, ընկղմել, խորասուզել, ջրասույզ անելով խեղդել:

1. Ժանգը (կարմրագորշ փառանման շերտ) կերած, ժանգից փչացած: 2. Փխբ. Կեղտոտված, ապականված:

**Ժոռատ, ած.**

**Ժուժել, բ.**

**Ի**

**Ի՞մ իմիք, դեր.**

**Ինև, դեր.**

**Լ**

**Լուսագար, գոյ.**

**Խ**

**Խաչելեալ, ած., գոյ.**

**Խարշատել, բ.**

**Խէթ, գոյ.**

**Խիրտ, ած., մկբ.**

**Խոշ, գոյ.**

**Խորշակ, գոյ.**

**Խտտիղ, գոյ.**

Ատամները թափված:

1. Դիմանալու՝ կրելու ներքին ուժ ունենալ, տոկալ, համբերել, հանդուրժել: 2. Ինքն իրեն զսպել, դիմադրել մի բանի: 3. Ուժ՝ կարողություն ունենալ, ուժը պատել:

Ի՞նչ բանի, ինչի՞:

**Ես-ի** եզակի գործիականը, ինձ(ա)նով:

Կույր:

Խաչվածը (Քրիստոսի մասին):

1. Սաստիկ այրել, խորովել: 2. Փխբ. Այրող ցավ պատճառել: 3. Ծարավից տանջվել, պապակել:

1. Խղճի խայթ, խղճմտանք: 2. Խոշ, խոշընդոտ, արգելք: 3. Վտանգ, կասկածանք: 4. Երկյուղ, վախ: 5. Ոխ, քեն: 6. Ծակոց, սուր ցավ:

Խրտնած, վախեցած, խրտնելով:

1. Սրածայր քար կամ փայտ, որ խրվում է ոտքը, աչքը ևն: 2. Փուշ: 3. Փխբ. Խանգարիչ՝ խափանիչ հանգամանք, խոշընդոտ, արգելք:

1. Սաստիկ տաք քամի, որ չորացնում է բույսերը: 2. Երաշտ, չորություն:

1. Խուտուտ գալը, խուտուտ, խտիղ: 2. Գըր-գիո, գրգռում: 3. Ծլացում:

**Խրախ, գոյ.**  
**Խրտուիլ, գոյ.**  
**Կ**  
**Կաթոզնել, բ.**  
**Կալումն, բ.**  
**Կական, գոյ.**  
**Կականաբարձ, ած.,**  
**մկբ.**  
**Կանառ, գոյ.**  
**Կամարար, ած.**  
**Կայ, գոյ.**  
**Կապարճք, գոյ.**  
**Կարկել, բ.**  
**Կարկեհան, գոյ.**  
**Կարճունչ, ած.**  
**Կարմրերփեան, ած.**

1. Ուրախության սեղան, կերոխում, խրախ-  
 անք, խնջույք: 2. Ած. Խիստ ուրախ,  
 զվարթ:  
 1. Խրտնեցուցիչ և ահարկու մի բան: Փխբ.  
 Խրտվիլակ:  
 1. Խիստ կարոտություն զգալ, կարիք ունե-  
 նալ: 2. Գորովել, խանդաղատել:  
 1. Բռնելը, պահելը, զսպելը: 2. Բաղկացու-  
 թյուն, կացություն: 3. Բնական հատկու-  
 թյուն, առանձնահատկություն, ունակու-  
 թյուն:  
 Ծիչ, ողբ, վայնասուն:  
 Կական բարձրացնող, կական բարձրացնե-  
 լով:  
 1. Հանդես, ատյան, ժողով, հավաք: 2. Դաս,  
 խումբ, գունդ:  
 1. Ուրիշի կամքը կատարող, կամակատար,  
 հնազանդ, հլու: 2. Հին միայնակյաց կրո-  
 նավորների կոչումը՝ իբրև աստվածա-  
 հաճո՝ Աստծու կամքը կատարող: 3.  
 Աստված, որ կատարում է երկյուղածնե-  
 րի և իր կամքը:  
 1. Կենալը, կանգնելը: 2. Կենալու՝ մնալու  
 տեղ, կայան: 3. Դիրք, վիճակ: 4. Դադա-  
 րում, կանգ առնելը:  
 Նետեր պահելու աման, նետերի աման, նե-  
 տաման:  
 Բերանը փակել, պապանձեցնել, լոեցնել,  
 սանձել:  
 Նոնաքար:  
 Ունչը՝ քիթը, կարճ:  
 Կարմրերանգ, կարմրագույն:

**Կիրթ, ած.**  
**Կնդրուկ, գոյ.**  
**Կոկովանք, գոյ.**  
**Կոռնոս (հուն.), գոյ.**  
**(աստղգ.)**  
**Հ**  
**Հագագ, գոյ.**  
**Հալալ, գոյ.**  
**Հաղբ, գոյ.**  
**Համուռն, գոյ.**  
**Հանգեւ, ած.**  
**Հանդիսադիր, գոյ.**  
**Հաշել, բ.**  
**Հաստիչ, գոյ.**  
**Հեղուլ, բ.**  
**Հերձանել, բ.**  
**Հերքել, բ.**

1. Սովորած, վարժված, մարզված: 2. Սովո-  
 րական, փորձառական  
 Անուշահոտ խեժ, որ ծորում է լիբանոս  
 (Lindera) կնդրկենի ծառից:  
 Ծոռոմ խոսքեր, մեծաբանություն, սուտ գո-  
 վասանք:  
 Երևակ մոլորակը. Սատուրն:  
 Արտաշնչման ձայնը, շնչատություն, շունչ:  
 Հագուստ, զգեստ, շոր:  
 Թակարդ, որոգայթ:  
 Ամբողջ՝ ընդհանուր բազմություն:  
 Նման, համանման, հավասար, համեմատ,  
 նույնչափ:  
 1. Մրցության հանդեսը կազմակերպող և  
 կառավարող, մրցանակ տվող: 2. Մրցու-  
 թյան հանդեսի՝ մրցողների մեջ գլխավո-  
 րը:  
 Հալումաշ լիճել, հլուծել, ծյուրել, մաշել,  
 տկարացնել:  
 1. Ստեղծող, արարիչ: 2. Աստված: 3. Զո-  
 րացնող, ուժեղացնող:  
 1. Թափել, հոսեցնել: 2. Լցնել: 3. Դատար-  
 կել: 4. Ծավալել, տարածել, սփռել: 5.  
 Խոնավել, խմբվել, հավաքվել: 6. Հար-  
 ձակվել, վրա տալ:  
 Ծեղքել, պատռել:  
 1. Հեռացնել, վոնդել, վանել, քշել, հալածել,  
 հաղթահարել: 2. Բավական՝ հերիք լի-  
 նել, կարողանալ, զորել:

**Հոգեվար, ան.**

1. Հոգին վարող՝ ավանդող, հոգեվարքի վիճակում գտնվող, հոգին փչող: 2. Հոգեվարքի վիճակում արված՝ տեղի ունեցած՝ եղած:

**Հրաբուն, ան.(կրոն.)**

1. Որ էությանը հրեղեն է, հրանյութ, լուսեղեն, բոցեղեն, հրեշտակային: 2. Աստվածային:

**Հրազէն, ան.**

1. Հրով զինված: 2. Գոյ. Հրեղեն զենք, բոցեղեն սուր:

**Հուր, հրոյ, հրով կամ հուրք, գոյ.**

1. Կրակ: 2. Փխբ. Հոգեկան բուռն զգացում: 3. Փխբ. Ջերմություն, տենդ: 4. Հրեղեն, բոցավառ:

**Ձ**

**Ձիր, գոյ.**

Պարզև, նվեր, ընծա:

**Ձորձ, գոյ.**

1. Հագուստ, զգեստ: 2. Վրան գցելու շոր՝ կտոր, սփածամեղիք, ծածկույթ, քող:

**Ճ**

**Ճես, գոյ.**

Սերունդ, զարմ, ծնունդ, արու զավակ, սերունդը շարունակող:

**Մ**

**Մատել, բ.**

Մոտենալ, մոտ գալ, մերձենալ: 2. Դիպչել, շոշափել, ձեռք տալ: 3. Մատուցվել, ընծայվել:

**Մարգարտայեռ, ան.**

Մարգարտի պես կողք կողքի շարված՝ գամված, ընդելուզված:

**Մարթել, բ.**

1. Կարողանալ, ի վիճակի լինել որևէ բան անելու: 2. Ջեռահաս՝ ընդունակ լինել:

**Մեղկաղէտ, ան.**

Աղէտից՝ փորձանքից թուլացած:

**Մետասան, թվ.**

Տասի և մեկի գումարը, տասնմեկ:

**Մէզ, գոյ.**

**Մնչել, բ.**

**Մրտենի, մուրտ, գոյ.**

**Յ**

**Յամել, բ.**

**Յանձանձել, բ.**

**Յար, ան., նխ., մկբ.**

**Յարակալ, ան.**

**Յարկ, գոյ.**

**Յարուցանել, բ.**

**Յուշ, ձ.**

**Յուսապատար, ան.**

**Յօդուած, գոյ.**

1. Թանձր մտախոյ, մշուշ: 2. Խավար, մթություն, ամպամածություն:

Մեղմ ձայնով ճչալ, մեղմ ձայն հանել, մեղմորեն հեծել, մրմընջալ, մոմուալ:

(Բար.) Մրտենագգիների ընտանիքին պատկանող մշտադալար թուփ. մրտենի, մրտի (Murtus):

1. Ուշանալ, դանդաղել, հապաղել: 2. Դեզերել: 3. Հարատել, համապագորդել: 4. Ուշացնել:

Մեկի խմամբը իր վրա վերցնել, խնամարկել, հոգ տանել, դարմանել, մխիթարել, հանգստացնել:

1. Կից, կցված, միացած: 2. Մոտ, կողքին: 3. Համակերպ, իրար նման, 4. Համապատասխան: 5. Ծարունակվող, հետզհետե, հաջորդող: 6. Միշտ, շարունակ, անդադար, անընդհատ, ամեն անգամ:

Մշտապես եղող՝ գոյություն ունեցող, մըշտակա, մշտատև, մշտնջենավոր:

1. Ծածկ, տանիք: 2. Ծենք, տուն: 3. Փխբ. Օթևան:

1. Վեր բարձրացնել, կանգնեցնել: 2. Արթնացնել: 3. Մեռածին կենդանություն տալ, հարություն տալ:

Ջգուշացման բացականություն. ո՛ւշք դարձրու, զգո՛ւշ եղիր:

Հույսերով պատարուն՝ լի, հուսալից:

1. Կապակցություն, բաղադրություն: 2. Պատրաստում: 3. Ծարադրանք: 4. Հորինվածք: 5. Ոսկորների և հողերի կրցման տեղը: 6. Զրահի մասերի կցման տեղը:

**Ն**

**Նախատ, գոյ.**

**Նախեղակ, ած.**

**Նանրախորհուրդ, ած., մկբ.**

**Նանրանալ, բ.**

**Նմա, դ.**

**Նշառակ, գոյ.**

**Նշողել, բ.**

**Նու, նուոյ, ով, կամ աւ, նուանք, անց, նան նուք, նովանք, գոյ.**

**Շ**

**Շոյտ, ած.**

**Ո**

**Ոգեսպառ, ած.**

1. Նախատինք, անարգանք, անպատվություն: 2. Ած. Նախատելի, նախատված, անարգված:

Նախագո, նախագոյակ, սկզբից ի վեր գոյություն ունեցող:

Դատարկ, ունայն, սին, փուշ, անիրավ բաներ:

1. Նանիր՝ դատարկ՝ սնոտի դառնալ, ունայնանալ: 2. Անմտանալ, անիրավել:

**Նա-ի եզակի տրականը՝ նրան:**

1. Նպատակակետ: 2. Խայտառակության՝ անարգանքի՝ ծաղրանքի ևն առարկա, խաղիք ու խայտառակություն բազմության առաջ: 3. Խայտառակված:

1. Նշույլ՝ լույսի ճառագայթ արձակել, լույս ծագեցնել, ցոլացնել: 2. Ծառագայթը նշմարել, լույսը դիտել:

Հարս:

1. Փութաջան, եռանդուն, ժրաջան, փութկոտ, ճարպիկ: 2. Մկբ. Շուտ, շուտով, փութով:

1. Ոգին՝ շունչը սպառված, շնչասպառ, շրջալստոր: 2. Հոգեկորույս, շունչը սպառող:

**Ոխալ, Ոխանալ, բ.**

**Չ**

**Չափաբերական, ած.**

**Չքոտի, ած.**

**Չև, մկբ.**

**Պ**

**Պագանել, բ. (գործածվում է երկիր բառի հետ)**

**Պագշոտ, ած.**

**Պարագրել, բ.**

**Պարտավճար, ած., մկբ.**

**Պշնուլ, բ.**

**Ջ**

**Ջեռուցանել, բ.**

**Ջեր, գոյ.**

**Ջոկ, գոյ.**

1. Ոխ պահել, ոխ զգալ մեկի դեմ: 2. Չար նախանձով լցվել:

1. Չափավոր, չափով եղած: 2. Տաղաչափական, չափածո:

1. Չնչին, աննշան: 2. Տհաս, տղայամիտ: Դեռ, դեռևս, տակավին:

Երկրպագել, Գետինը՝ հողը համբուրել՝ ի նշան խոնարհության և հարգանքի, երկըրպագություն անել:

Վավաշոտ, ցանկասեր, անասակ, ցոփ:

1. Բովանդակել, պարունակել, ամփոփել: 2. Ծրջափակել, պարփակել: 3. Գծել, գծագրել, ուրվագծել, դրոշմել: 4. Սահմանել, նկարագրել:

Իր պարտքը վճարող կամ վճարելով, պարտահատույց:

Աչքերը հառած նայել, ակնապիշ՝ ստած աչքերով անթարթ նայել, զարմանքով՝ ապշանքով նայել՝ դիտել:

Տաքացնել, ջերմացնել:

1. Ջերմություն, տաքություն: 2. Տաք՝ պայծառ եղանակ: 3. Ած. Տաք, ջերմ. պարզ, մեղմ, հանդարտ:

Խումբ, բազմություն (մարդկանց կամ կենդանիների): Ընդհանրապես՝ առանձնացած խումբ:

**Ռ**

**Ռահ, գոյ.  
Ռատ, ած.**

Ծանապարհ, ուղի:  
Տեղ (իրև մակդիր մոգպետաց մոգպետի):

**Ս**

**Սոր, գոյ.**

1. Անցք, ծակ: 2. Ծերպ, ճեղք, խորշ, խոռոչ:

**Վ**

**Վակժոյժ, բ.**

Մի բանի պինդ կաշել, բռնել ու պոկ չգալ, ձեռքից բաց չթողնել:

**Վաղվաղ, մկբ.**

Ծատ շուտ, շուտափույթ, արագապես, փութով:

**Վարան, գոյ.**

1. Վարանելը, շվարում, տարակուսանք, երկընտրանք: 2. Հոգս, մտմտութ, տագնապ, հուզմունք, անհանգստություն:

**Վարուժան, գոյ.**

Արու թռչուն:

**Տ**

**Տատրակ, գոյ.**

Աղավնիների ընտանիքի մ պատկանող չվող թռչուն՝ աղավնու նման, բայց ավելի փոքր և նուրբ մարմնով (Streptopelia turtur):

**Տիւ, գոյ.**

Ցերեկ, օրվա լույս ժամանակը:

**Ր**

**Րաբունել, բ.**

Վարդապետել, ուսուցանել թաբունաբար. պատվեր տալ տիրաբար:

**Րախ, գոյ.**

**Րախճան, գոյ.  
Րակերտ, ած.  
Րամ, գոյ.  
Րոտել, բ.**

Խրախճանք, ուրախություն, զվարճություն:  
Խրախճանք, ուրախություն, զվարճություն:  
1. Հրակերտ: 2. Հրաշակերտ, նորակերտ:  
Երամ, ջոկ, ժողով:  
Հավաքել, ժողովել, միացնել, կցել:

**Ց**

**Ցանգ, գոյ.  
Ցելուլ, բ.**

Պատ, պատնեշ, անջրպետ, ցանկապատ:  
Ծղել, պատռել, ճեղքել:

**ՈՒ**

**Ուղխ, գոյ.  
Ուղփանեմ, ած.**

Հոսող ջուր, ջրի հորդ հոսանք, հեղեղ:  
Լույսի մեջ գնացող, լուսանեմ, երկնանեմ, լուսավոր:

**Ումեք, դ.  
Ունել, բ.**

**Ոք**-ի եզակի տրականը:  
1. Ունեճալ: 2. Առնել, տեր լինել՝ դատնալ: 3. Բռնել մի բան կամ մի բանից: 4. Բռնել, ձերբակալել: 5. Պինդ բռնել, պահել: 6. Կապել, արգելել: 7. Փակել: 8. Գրավել, տիրել: 9. Կրել, տանել, բարձրացնել:

**Ուշ, գոյ.**

1. Հիշողություն: 2. Ուշադրություն, զգուշություն: 3. Խելք, միտք, բանականություն: 4. Խոհականություն, դատողություն: 5. Զգացողություն:

**Ուրեք, մկբ.**

1. Մի տեղ, որևէ տեղ: 2. Անորոշ դ. Մի, որևէ, ինչ-որ:

**Ոչ ուրեք, մկբ.  
Ուրուք, դ.**

Ոչ մի տեղ:  
**Ոք**-ի եզակի սեռականը:

**Փ**

**Փապար, գոյ.**

Անցք՝ ծերպ՝ խոռոչ լեռներում՝ ժայռերի վրա. քարանձավ:

Փքին, գոյ.

Նեւ:

Ք

Քառասաջ, ած.

Քատակ, գոյ.

Քարբ, գոյ.

Քրքում, գոյ.

Չորս թև կամ չորս անկյուն ունեցող:

Նմանություն, օրինակ, ձև:

Թունավոր խոշոր օձ (Vipera aspis):

Հիրիկազգիների ընտանիքին պատկանող բույս՝ մանուշակագույն անուշահոտ ծաղիկներով. զաֆրան (Crocus):

Քև, դ.

Պու-ի եզակի գործիականը՝ քեզ(ա)նով:

Օ

Օճան, գոյ.

1. Օգնություն, աջակցություն, օժանդակություն, նպաստ: 2. Հնարք, միջոց: 3. Պաշտպանություն, հովանավորություն, խնամակալություն: 4. Բարիք, երախտիք: 5. Ներում, թողություն: 6. Իշխանություն, թույլտվություն, հրաման: 7. Հարմար առիթ, հաջողություն:

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՆԱԽԱՇԱՎԻՂ** ..... 3

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

**Ուսուցիչը, գիտնականը, զինվորը** ..... 16

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**Բանաստեղծը** ..... 54

**ՀԱՎԵԼՎԱԾ**

**ՉԱՓԱՔԵՐԱԿԱՆՔ**

ԱՄԵՆԵԻԻՆ ԵՍ ԳԵՂԵՑԻԿ, ՄԵՐՁԱԻՈՐ ԻՄ, ԵՒ ԱՐԱՏ ԻՆՉ

ՈՉ ԳՈՅ Ի ՔԵԶ ..... 107

ԿՈԾ ..... 109

ՍՈՒԳ ..... 111

ԹՇՈՒԱՌՈՒԹԻԻՆ ՍՈՒԱԿԻ ..... 113

ՊԱՐԵՐԳՈՒԹԻԻՆ ..... 116

ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ ԶԱԽԱԿԱՑ ԻՄՈՑ ..... 118

ԱՂՕԹՔ ..... 120

ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻԻՆ ..... 121

ՏԱՂԵՐԳՈՒԹԻԻՆ ..... 123

ՏԵՍԻԼ ..... 125

ԱՂԵՐՍ ԱՌ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ ՏԻՐԱՄԱՅՐՆ ..... 128

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻԻՆ ԱՐՄԻԳԵԱՅ ..... 130

ՎԱՐԳԱԿՈՐՈՅՍ ..... 133

ՍՈՒԱԿ Ի ՀՈԳԵՎԱՐՍ ..... 134

ԿՈԿՈՎԱՆՔ ՎԱՐԴԻ ..... 136

ԴԱԻ ԵՐԵԻԱԿԱՑՈՒԹԵԱՆ ..... 137

ԳԱՐՈՒՆ ..... 139



ՅՈՐԴՈՐԱԿ ԱՌ ՈՒԽՏԱԻՈՐՍ .....	141
ԿՈՂԿՈՂԱՆՔ ԱՌ ԽԱԶ ՓՐԿՉԻՆ .....	143
ԱՂԵՐՍ ԱՌ ՆԱԽԱՎԿԱՅ ԱՄԼՈՐԴԻՆ .....	145
ՍԱՂՄՈՍ ԾԵ .....	146
ՍԱՂՄՈՍ ԺԼԹ .....	148
ԱՊԱԾԱԻ .....	150
ՈՂԲԵՐԳՈՒԹԻԻՆ ԻՍՐԱՅԵԼԻ .....	153
ԲԱՆՔ ՄՕՐ ԽԱԶԵԼՈՅՆ .....	157
ԼԱՑ ԴՍՏԵՐՆ ՅԵՓԹԱՅԵԱՅ .....	159
ՄՈՐ ԱՂԵԿԻՋԻ ՈՂԲ ՔՍՏՄՆԵԼԻ ԸՆԴ ՄԱՀ ԱՆԴՐԱՆԿԻ	
ՅՕՏԱՐ ԱԾԽԱՐՀԻ .....	161
ԿՈԾ ՄԵՂԿԱՂԷՏ ԾՆՈՂԱՅ Ի ՎԵՐԱՅ ՎԱՂԱՄԵՌԻԿ	
ՄԻԱՄՕՐ ԴՍՏԵՐ .....	163
ԱՆԷԾՔ .....	164
ԱՆՈՒՐՋՔ .....	165
ՏԱՊԱՆԱԳԻՐՔ .....	167
ՆԻԻԹՔ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԱԼՔ .....	169
<b>ԲԱՌԱՐԱՆ .....</b>	<b>171</b>

**ԱԼԲԵՐՏ ՄԱԿԱՐՅԱՆ**  
**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՄԴԱՐՅԱՆ**  
 (Ուսումնասնողական ուղեցույց)

*Սրբագրիչ՝ Անի Ըահնազարյան*  
*Էջադրումը՝ Գորգեն Գասպարյանի*

Չափս՝ 60×84 1/16: 12 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 250:

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
 ԵՐԵՎԱՆ 2005